ԶՈՒՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ,

ԿԱՄ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Շարագրեցեալ ՚ի Յոհաննիսէ Վարդապետէ կոս
տանդինուպօլսեցւոյ, ՚ի խնամս մեծագոյն ազգ,
և ՚ի Յօգուտ Հայկազունեաց:

# PVRITAS LINGVAE ARMENICÆ.

A' IOANNE AGOP SACERDOTE ARMENO
Composita.

Որ ոչ մտանէ ընդ դուռն ՚ի փարախն ոչխարաց, այլ ընդ
այլ ելանէ, նա գող է և աւազակ:
Յոհաննու, ՚ի գլուխն 10. ՚ի թիւն. 1:

*Qui non intrat per ostium in ouile ouium, sed
ascendit aliundè, ille fur est, & latro,
Ioannis c. 10. num. 1.*

11/24 [illegible] 1913




ROMÆ,
Ex Typographia Sacræ Congreg. de Propaganda Fide. M.DC.LXXIV.

*SVPERIORVM PERMISSV.*

Քեզ, ո՛վ մանուկն Էմմանուէլ Յս՟

Բեր ո՛վ երկնական նպատակդ՝ հանուրց ճշմարտասի-րաց, զայս նուաստագոյն պտուղ իմոց երկանց սե-րով ընծայեմ, զի դիտելով՝ ի յիս և շուրջ զինև զոչ ինչ գտանեմ, որ ոչ իցէ ձիր և պարգև աղբեր-բարեաց ; Ուստի մաղթեմ վերընդունիլ զսա քոյով հեզու-թ՟դ, և ազնուագործել շնորհիւ քով իմիք մերազնեաց, ՚ի վճարումն պարտուց եղկելոյս անձին, և ՚ի շահաւէտութիւն եղ-բարց համբակացունից ։ Որպէս զի սովաւ զարգացեալք ըն-դունակեցին, և առ արհեստն տրամաբանական ճեպել մար-թիցին, նորու մ ճոխամաբանեալք զճշմարտութեց, մանկան-ցն զօրինակն յինքեանս առ բերցեն, և անստուգս առ փիլի-սոփայական նրբութիւն աճապարիցեն, և առ պարտէզս ա՟ծա-բանական վերափոխութայցեն ; Որքեա զծաղիկս ճշմարտու-թե՟ յո՟ վերաքաղելով, երանականաց գիտութեց քե՛ ժամա-նեսցեն ; ՀՀ հա՛ այսէ զորմաղթեմ ո՛վ յոյսիմ և կեանս, որ համայնից ըղձից մորացկէտ ես և վախճան, զի քո եմ ես յաւիտեան անարժանն ծառայ ;

Յոհաննէս Բուզանդեան

Ընչին քահանայ ։

Հայաստանի ... գրադարան
1617-2008

2245



# ՃԱՌՈՒԹԻ ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ,

## կամ քերականութիւն հայկական։

Հայկականն բարբառ զերիս պարունակէ զտեսակս, Որոց առաջինն որ է զուտ և կանոնաւոր, զոր և ՚ի կիրարկին և արկանեն արք հմուտք շաւղաց քերականութեան, և համբաւաւոնանք ՚ի մէջ հայկազունեաց, կոչի յատկապէս հայկական։ Երկրորդն որ է շփոթեալն և անկանոն, որով և վարին արք անտեղեակք գրոց, կոչի աշխարհական։ Իսկ երրորդն որ է խառնեցեալ ՚ի յերկոցունցս այսոցիկ ՚ի հայկականէ, և յաշխարհականէ, վասն որոյ և մասամբ ինչ կանոնաւոր, և մասամբ ինչ անկանոն, զոր և ՚ի կիրարկոնեն ատենախօսք և փաստաբանք, կոչի քաղաքական։ Իսկ քան զի դիտաւորութիւն է մեր աստանօր ճառել զհայկականէն յատկապէս առասեցելոյ, Ուստի Թողեալք զայլս, զնմանէ միայնոյ զբոնարկանեմք։ Զոր և բաժանեմք ՚ի չորս հատորս, Որոց յառաջնում խօսիմք զեղերաց հայկաբանութեան; Յերկրորդում զսահմանաց, զտեսակաց, և ըզպարագայից նոցին։ Յերրորդում զշարամանութեան նոցին։ Իսկ ՚ի չորրորդում զչափաբանութեան նոցին։

# ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Յաղագս Եղերաց։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Յաղագս հասարակաց հոլովմանց անուանց։

Հոլովմունք հասարակք անուանց են ութն, Որոց առաջնոյն եզական սեռականն եղերի 'ի Ի, որպէս բան, բանի։ միտ, մտի։ Երկրորդի եզական սեռականն եղերի 'ի ՈՅ, որպէս, նիւթ, նիւթոյ։ ոսկի, ոսկւոյ։ Երրորդի եզական սեռականն եղերի 'ի ԱՆ, որպէս, իմացումն, իմացման։ արիւն, արեան։ Չորրորդի եզական սեռականն եղերի 'ի ԱՅ որպէս Ադամ, Ադամայ։ Եսայի, Եսայեայ։ Հինգերորդի եզական սեռականն եղերի 'ի ԵՐ, որպէս, աղբիւր, աղբեր։ Վեցերորդի եզական սեռականն եղերի 'ի ԵՂ, որպէս, աստղ, աստեղ։ Եօթներորդի եզական սեռականն եղերի 'ի ԻՆ, որպէս, անձն, անձին։ Ութերորդի եզական սեռականն եղերի 'ի ՈՒ, որպէս, ժամ, ժամու։

Առաջին հոլովումն ունի զերկուս տեսակս, որոց միոյն եզական գործիականն եղերի 'ի ԻՒ։ Եւ յոգնական սեռականն 'ի ԻՑ, որպէս, բան, բանիւ։ բանք, բանից։ Իսկ միւսոյն եզական գործիականն եղերի 'ի ԱՒ։ Եւ յոգնական սեռականն 'ի ԱՑ, որպէս միտ, մտաւ։ միտք, մտաց։

Օրինակ Նախկնագունի Տեսակին։

Եզականապէս։

| | |
|---|---|
| Անուանական, | բան։ |
| Սեռական, | բանի։ |
| Տրական, | բանի, կամ 'ի բան։ |

| | |
|---|---|
| Հայցական, | զբան: |
| Բացառական, | ՚ի բանէ: |
| Պատմական, | զբանէ: |
| Գործիական, | բանիւ: |
| Պարառական, | զբանիւ: |
| Ներգոյական, | ՚ի բանի, կամ, ըն բանում: |
| Կոչական, | ով բան: |

Յոգնականապէս

| | |
|---|---|
| Ուղ: | բանք: |
| Սե: | բանից: |
| Տր: | բանից, կամ ՚ի բանս: |
| Հայ: | զբանս, կամ, բանս: |
| Բաց: | ՚ի բանից: |
| Պատ: | զբանից: |
| Գործ: | բանիւք: |
| Պար: | զբանիւք: |
| Ներ: | ՚ի բանս, կամ ըն բանս: |
| Կոչ: | ով բանք: |

Ըստ այսու տեսակաւ պարունակին անուանք գոնեայ բազումք: Նախ գոյականք հասարակք, որգոն, հաց, հացի: քարող, քարողի: երկիւղ, երկիւղի: վկայ, վկայի: արքայ, արքայի: ծառայ, ծառայի: իմաստ, իմաստի: տառ, տառի: փեսայ, փեսայի: է, էի: գոյ, գոյի: հոլով, հոլովի: մաղ, մաղի: տաղ, տաղի: և այլք:

Երկրորդ գոյականք յատուկք, որգոն, պետրոս, պետրոսի: զաքէոս, զաքէոսի: քրիստափորոս, քրիստափորոսի: պօղոս, պօղոսի: Թաթէոս, Թաթէոսի: բարդուղիմէոս, բարդուղիմէոսի: մատթէոս, մատթէոսի: մարկոս, մարկոսի: Սիմէոն, Սիմէոնի: բարսեղ, բարսեղի: գրիգոր, գրիգորի: սարգիս, սարգսի:

գսի: մարթա, մարթայի: Եղիսաբեթ, Եղիսաբեթի: Աննա, Աննայի: Եղիա, Եղիայի: և այլք բազումք:

Երրորդ, ածականք, որպէս ուրախ, ուրախի: չար, չարի: խոհեմ, խոհեմի: ողջախոհ, ողջախոհի: գէճ, գիճի: առողջ, առողջի: ջերմ, ջերմի: խուլ, խլի: կաղ, կաղի: և այլք, բազումք:

Չորրորդ, բարդք, որպէս, Ա̃ծապաշտ, Ա̃ծապաշտի: բարեպաշտ, բարեպաշտի: Ա̃ծուսոյց, Ա̃ծուսոյցի: տեղապահ, տեղապահի: աթոռակալ, աթոռակալի: և այլք:

Հինգերորդ անուանք ածանցականք, որպէս յաջորդ, որդի: Եւօրեայ, Եւօրէի: Եօթնարփեան, Եօթնարփենի: ծառուտ, ծառուտի: հրէաստան, հրէաստանի: ակնչատ, ակնչատի: խոցոտ, խոցոտի: զօրեղ, զօրեղի: և այլք:

Բայց գիտելի է նախ, զի անուանց յատկից արականաց, ըստ այսու տեսակաւ պարունակեցելոց, կոչականն եղերի 'ի է'. որպէս, ով Պետրէ: ո՛ Քրիստափորէ: Ոմանքն ևս երբեմն թարց մասնկանցս այսոցիկ, ով, կամ ո՛, և յայնժամ ունին 'ի վերա ինքեանց շեշտ իմն, որպէս, Զա՛քէ: Փիլի՛պպէ, և այլք:

Ասացի թէ անուանց յատկից արականաց, քան զի իգականքն այսորիկ տեսակի, պահեն զվերջաւորութիւն անուանականին ըն կոչականում, որպէս, ով Աննա: ով Մարթա: ով Եղիսաբեթ: և այլք:

Գիտելի է երկրորդ, զի յատուկք այսորիկ արականք, երբեմն համառօտին 'ի հոլովս իւրեանց, որպէս, Թաթէի, փոխանակ, Թաթէոսի: մատթէի, փոխանակ, մատթէոսի: Բարդուղիմէի, փոխանակ Բարդուղիմէոսի: և այլք:

Գիտելի է երրորդ, զի անուանք ամանք այսորիկ տեսակի, թէ հասարակք, և թէ յատուկք, ըն յոգնականում թուոյ հետեն 'ի շաւղէն վերագրեցելոյ, որպէս, ա̃մ, ա̃մի: Ամենեքեան, ամենեցուն, կամ ամենեցունց, ամենեքումբք: Գիրկ, գրկի:

գրքի : գրեանք , գրեանց , գրեամբք : Սիմէոն , սիմէոնի : սիմէ- ոնեանք , սիմէոնեանց : Գրիգորիս , գրիգորիսի : գրիգորիս- եանք , գրիգորիսեանց : և այլք :

Ածնի և երբեմն , ամք , ամենից : զամենայնս , ամենիւք : Սիմէոնք , սիմէոնից , և այլն :

## Օրինակ յետնադասութեան Ածականին :

### Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | միտ : |
| Սեռ : | մտի : |
| Տր : | մտի , կամ 'ի միտ : |
| Հայց : | զմիտ : |
| Բաց : | 'ի մտէ : |
| Պատ : | զմտէ : |
| Գործ : | մտաւ : |
| Պար : | զմտաւ : |
| Ներ : | 'ի մտի , կամ ըն մտում : |
| Կոչ : | ով միտ : |

### Յոգնականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | միտք : |
| Սեռ : | մտաց : |
| Տր : | մտաց , կամ 'ի միտս : |
| Հայց : | զմիտս , կամ միտս : |
| Բաց : | 'ի մտաց : |
| Պատ : | զմտաց : |
| Գործ : | մտօք : |
| Պար : | զմտօք : |
| Ներ : | ըն միտս : |
| Կոչ : | ով միտք : |

Ընդ

Ընդ այսու տեսակաւ պարունակին անուանք ոչ սակաւք Նախ գոյականք, որպէս պատուիրան, պատուիրանի : հրա_ման, հրամանի : սահման, սահմանի : խորան, խորանի : խրախ_ճան, խրախճանի : պսակ, պսակի : տաճար, տաճարի : հովիտ, հովտի : պատճառ, պատճառի : վրան, վրանի : Թոշակ, Թո_շակի : շուշան, շուշանի : նրան, նրանի : կապան, կապանի : զամբար, զամբարի : յիշատակ, յիշատակի : դպիր, դպրի : Եւ այլք բազումք :

Երկրորդ ածականք, որպէս, սպիտակ, սպիտակի : հիւանդ, հիւանդի : տկար, տկարի : ողջ, ողջի : առողջ, առողջի : Եւ այլք բազումք :

Երրորդ բայք, որպէս, ուսուցանէր, ուսուցանիր : ուսուցանեաց, ուսուցանեցի : ատենադպիր, ատենա_դպրի : Եւ այլք :

Չորրորդ ածանցականք, որպէս, սաղմոսարան, սաղմոսա_րանի : ճրագարան, ճրագարանի : ծաղկոց, ծաղկոցի : հրեղէն, հրեղինի : մահկանացու, մահկանացուի : առաջնորդ, առաջ_նորդի : հոգեւոր, հոգեւորի : արդիւնաւոր, արդիւնաւորի : կառաւարիչ, կառաւարչի : երկնեղած, երկնեղածի : դռ_նակ, դռնակի : պատանեակ, պատանեկի : Եւ այլք բազումք նմանապէս եղերեցեալք :

Հինգերորդ, ընդունելութիւնք եղերեցեալք 'ի օղ, որպէս, սի_րօղ, սիրողի : ընթերցօղ, ընթերցողի : լսօղ, լսողի : Եւ այլք :

Բայց գիտելի է նախ, զի անուանց ոմանց ընդ այսու տեսա_կաւ պարունակեցելոց, եզական գործիականն լինի, իւ, ըստ առաջնոյն, որպէս, հովտիւ, այլ ոչ հովտաւ : հիւանդիւ, ոչ հիւանդաւ : առողջիւ, ոչ առողջաւ : հրեղինիւ, ոչ, հրեղի_նաւ ; Եւ այլք, զորս յաճախ ընթերցումն ուսուցանէ :

Գիտելի է երկրորդ, զի անուանք ոմանք այսորիկ տեսակի

որպէ_

որպիսիք են, մեզ, մեղի : շնորհ, շնորհի : փառ, փառի : օրէն, օրինի : կամ, կամի : կեան, կենի, կարծին յոմանց թէ ոչիցեն եզականապէս 'ի կիրարկանելիք, այլ միայն յոգնականապէս, բայց հաւաստի հանդիպական, 'ի գրեանցն հայոց, ամեղ, որգոն. ամեղ ինչ ոչ գոյր նց : Յովհաննու. 1 ֆ : Շնորհ, որգոն, օգնական և շնորհ աշխարհի, 'ի շարկնս, 71 : փառ, որգոն, կանոնագլխին փառն, տօնացոյցի. 1 : Կամ, որգոն, կամ եղև և ինձ, ղուկասու, 1 : նոյն Կեանն, հաւաստի 'ի բաղադրութեանց, որգոն կենակից : կենագործել, և այլք : Բայց սոցին և եզական գործականն լինի իւ, ըստ առաջնոյն, որգոն, մեղիւ, շնորհիւ, փառիւ, կենիւ : Նոյն սակայն կամս, 'ի ներքոյ այսորիկ տեսակի, քանզի ասի, կամաւ, այլ ոչ կամիւ :

Երկրորդ հոլովումն ունի նմանապէս զերկուս տեսակս, որոց միոյն եզականն սեռական եղերի պարզապէս 'ի Ոյ, և յոգնականն 'ի Ոց : որգոն, Նիւթ, նիւթոյ : նիւթք, նիւթոց : իսկ միւսոյն եզական սեռականն լինի ւոյ, և յոգնականն, եաց : որգոն, ոսկի, ոսկւոյ : ոսկիք, ոսկեաց :

Օրինակ նախկնոյ տեսակին,

Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | Նիւթ : |
| Սեռ : | Նիւթոյ : |
| Տըր : | Նիւթոյ, կամ 'ի նիւթ : |
| Հայ : | զՆիւթ : |
| Բաց : | 'ի Նիւթոյ : |
| Պատ : | զՆիւթոյ : |
| Գոր : | Նիւթով : |
| Պար : | զՆիւթով : |

Ներ: ՚ի նիւթում, կամ ընդ նիւթում:
Կոչ: ո՜վ նիւթ:

Յոգնականապէս:

Ուղ: նիւթք:
Սե: նիւթոց:
Տր: նիւթոց, կամ ՚ի նիւթս:
Հայ: զնիւթս, կամ նիւթս
Բաց: ՚ի նիւթոց:
Պատ: զնիւթոց:
Գոր: նիւթովք:
Պար: զնիւթովք:
Ներ: ընդ նիւթս:
Կոչ: ո՜վ նիւթք:

Ըստ այսու տեսակաւ պարունակին անուանք յոգունք: Նախ գոյականք, որգոն, մարմին, մարմնոյ: թուղթ, թղթոյ: ջուր, ջրոյ: սեղան, սեղանոյ: պտուղ, պտղոյ: ձէթ, ձիթոյ: տերեւ, տերեւոյ: գործ, գործոյ: ծառ, ծառոյ: խոտ, խոտոյ: տունկ, տնկոյ: արմաւ, արմաւոյ: խնձոր, խնձորոյ: ողկոյզ, ողկուզոյ: խաղող, խաղողոյ: ոստ, ոստոյ: ոստրէ, ոստրէոյ: հուր, հրոյ: բերան, բերանոյ: թուր, թրոյ: լուր, լրոյ: մուր, մրոյ: գիր, գրոյ: աւազ, աւազոյ: ունտ, ընտոյ: ձիւթ, ձիւթոյ: Սանդուխտ, սանդխտոյ: Ամասիա, ամասիոյ. Եւդոկիա. Եւդոկիոյ: Կեսարիա, կեսարիոյ: եւ այլք նմանապէս եղերեցեալք: եւ այլք բազումք:

Երկրորդ ածականք, որգոն, կարմիր, կարմրոյ: կապոյտ, կապտոյ: դեղին, դեղնոյ: կանանչ, կանանչոյ: ցուրտ, ցրտոյ: զեղուն, զեղնոյ: զեռուն, զեռնոյ: սողուն, սողնոյ: թռչուն, թռչնոյ: սուր, սրոյ: բութ, բթոյ: արդար, արդարոյ: մէջ, մջոյ: եւ այլք:

Երրորդ

Երրորդ բարդք, որգոն, ամենատուրէ, ամենատրէոյ ։ լրջագոյն, լրջագունոյ ։ ծովաջուր, ծովաջրոյ ։ և այլք, որք բաղդին 'ի վերոգրեցելոցն ։

Չորրորդ, ածանցականք, որգոն, երկնային, երկնայնոյ ։ տերզծուած, տերզծուածոյ ։ և այլք նմանապէս եղերեցեալք ։

Հինգերորդ ընդունելութիւնք եղերեցեալք 'ի եցեալ ։ որգոն սիրեցեալ, սիրեցելոյ ։ ընթեռնանեցեալ, ընթռնանեցելոյ ։ գրեցեալ, գրեցելոյ ։ և այլք ։

Ընդ այսու ստորանկլն ևս ածականք եղերեցեալք 'ի եալ, որգոն, երանեալ, երանելոյ ։ բերկրեալ, բերկրելոյ ։ կատարեալ, կատարելոյ ։ և այլք ։

Բայց գիտելի է նախ, զի անուանք ոմանք այսորիկ տեսակի, ըն յոգնականում Թւոյ հեստեն 'ի շաւղէն վերոգրեցելոյ, որգոն, ցորեան, ցորենոյ ։ ցորեանք, ցորեանց, զցորեանս ։ մարդ, մարդոյ ։ մարդիք, մարդկան, զմարդիս ։ և այլք ։

Գիտելի է երկրորդ, զի ած, գաղափարն, մինչ է բայածական, պատկանի առայս տեսակս, որգոն, հարուած, հարուածոյ ։ հարուածք, հարուածոց ։ կերուած, ուածոյ ։ առուած, ուածոյ ։ առուած, ուածոյ ։ Իսկ մինչ ածանցական, այլ ոչ բայածական, պատկանի առ երկրորդ տեսակն առաջնոյն, որգոն, ողորմած, ողորմածի ։ ողորմածք, ողորմածաց և այլն ։

Օրինակ յետնոյ տեսակին ։

Եզականապէս ։

| | |
|---|---|
| ՈՒՂ ։ | Ոսկի ։ |
| ՍԵ ։ | Ոսկւոյ ։ |
| ՏՐ ։ | Ոսկւոյ, կամ յոսկի ։ |
| ՀԱՅ ։ | զՈսկի ։ |
| ԲԱՑ ։ | յՈսկւոյ ։ |

| | |
|---|---|
| Պատ : | զՈսկւոյ : |
| Գոր : | Ոսկեաւ : |
| Պար : | զՈսկեաւ : |
| Ներ : | յՈսկւոջ, կամ նոսկւում : |
| Կոչ : | ով Ոսկի : |

Յոգնակիապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | Ոսկիք : |
| Սե : | Ոսկեաց : |
| Տր : | Ոսկեաց, ցՈսկիս : |
| Հայ : | զՈսկիս, կամ Ոսկիս : |
| Բաց : | յՈսկեաց : |
| Պատ : | զՈսկեաց : |
| Գոր : | Ոսկւովք : |
| Պար : | զՈսկւովք : |
| Ներ : | նՈսկիս : |
| Կոչ : | ով Ոսկիք : |

Ըստ այսու տեսակաւ պարունակին անուանք ոչ սակաւք. Նախ գոյականք, որպէս, հոգի, հոգւոյ : կենդանի, կենդանւոյ : աղաւնի, աղաւնւոյ : բորենի, բորենւոյ : կոզնի, կոզնւոյ : մայրի, մայրւոյ : մարի, մարւոյ : այգի, այգւոյ : գինի, գինւոյ : նախնի, նախնւոյ : մատանի, մատանւոյ : և այլք բազումք :

Երկրորդ ածականք, որպէս ծիրանի, ծիրանւոյ : բարի, բարւոյ : Թշնամի, Թշնամւոյ : և այլք նմանապէս եզերեցեալք :

Երրորդ, ածանցականք, որպէս, վայրենի, վայրենւոյ : ընտանի, ընտանւոյ : արծաթի, արծաթւոյ : արշակունի, արշակունւոյ : արքունի, արքունւոյ : պոնտացի, պոնտացւոյ : եբրայեցի, եբրայեցւոյ : և այլք սոցին նմանք :

Չորրորդ ընդունելութիւնք, և անուանք ածականք, եզերեց-

եալք

եալք 'ի լի , որգոն , երանելի , երանելւոյ : սիրելի , սիրելւոյ : գրելի , գրելւոյ : եւ այլք :

Բայց գիտելի է նախ , զի անուանք եզականք , եզերեցեալք 'ի ի . ոչ ընդ այսու , այլ ընդ առաջնով տեսական պարունակին , որգոն , մի , միոյ : ձի , ձիոյ : Թի , Թիոյ : լի , լիոյ : տի , տիոյ :

Գիտելի է երկրորդ , զի գոն անուանք ոմանք , որք Թէպէտ 'ի յեզականում սեռականում եզերին 'ի ւոյ , որպիսիքեն , Թիւ , Թուոյ , կամ Թւոյ : ձու , ձուոյ : կամ ձւոյ : լու , լուոյ , կամ լւոյ : ցու , ցուոյ , կամ ցւոյ : եւ այլք , տակայն ոչ առայս տեսակս , այլ առառաջինն պատկանին , քանզի տառն՝ ւ , է նոցին բնական , այլ ոչ պատահական : Որք եւ 'ի յոգնականութեան զանազանապէս շարագրին , բայց ոչ ամենեքեան , քզի ասի , ձուք , ձւոց : եւ ձուանք ձուանց : ձիք , ձիոց : եւ ձիանք , ձիանց : լուք , լւոց : եւ լուանք , լուանց : Իսկ Թիւ , եւ ցու , պահեն զՀաւիղ հոլովմանն իւրեանց , որգոն , Թիւք , Թւոց : ցուք , ցւոց , կամ ցուոց : եւ ոչ այլապէս :

Երրորդ հոլովումն ունի նոյնպէս զերկուս տեսակս , որոց միոյն եզական սեռականն եզերի պարզապէս 'ի ան , եւ յոգնականն 'ի անց , որգոն մանուկ , մանկան : մանկունք , մանկանց : Իսկ միւսոյն եզական սեռականն եզերի 'ի եան , եւ յոգնականն 'ի եանց , որգոն , արիւն , արեան : արիւնք ; արեանց :

Օրինակ նախնոյ ԱՌԵակին :

Եզականապէս :

| | |
|---|---|
| ՈՒՂ : | մանուկ : |
| ՍԵՌ : | մանկան : |
| ՏՐ : | մանկան , կամ 'ի մանուկ : |
| ՀԱՅ : | զմանուկ : |

| | |
|---|---|
| Բաց։ | 'ի մանկանէ ։ |
| Պատ։ | զ մանկանէ ։ |
| Գոր։ | մանկամբ ։ |
| Պար։ | զ մանկամբ ։ |
| Ներ։ | 'ի մանկան , կամ ըն մանկան ։ |
| Կոչ։ | ո՜վ մանուկ ։ |

Յոգնականապէս ։

| | |
|---|---|
| Ուղ։ | մանկունք ։ |
| Սեռ։ | մանկանց ։ |
| Տր։ | մանկանց , 'ի մանկունս ։ |
| Հայ։ | զմանկունս , կամ մանկունս ։ |
| Բաց։ | 'ի մանկանց ։ |
| Պատ։ | զմանկանց ։ |
| Գոր։ | մանկամբք ։ |
| Պար։ | զմանկամբք ։ |
| Ներ։ | ըն մանկունս ։ |
| Կոչ։ | ո՜վ մանկունք ։ |

Ըստ այսու տեսակաւ պարունակին անուանք յոգունք ; Նախ , ծաղիկ , ծաղկան ։ ձնձղուկ , ձնձղկան ։ գուգուկ , գուգուկկան ; կամ գուգկան և այլք սոյին նմանք ։

Երկրորդ , ասեղ , ասղան ։ սիպեղ , սիպեղան ; պղպեղ , պղպեղան , և այլք սոյին նմանք ։

Երրորդ , արեգակն , արեգական ։ եղունկն , եղնկան ։ ըռունգն , ըռնգան ։ շուրթն , շրթան ։ ատամն , ատաման ։ կրունկն , կրնկան ; սրունկն , սրնկան ։ ունկն , ունկան ։ սկիզբն , սկզբան ։ ոլոգն , ոլոգան ։ Ջայլամն , Ջայլաման ։ շողոտն , շողոտան ։ կռունկն , կռնկան ; կայծակն , կայծական ։ փայլակն , փայլական ։ ակն , ական ։ մուկն , մկան ; ձուկն , ձկան ։ գորտն , գորտան ; եղէգն , եղեգան ; սիսեռն , սիսռան ։ թիթեռն , թիթռան ։ ծիծեռն ,

ծեռն , ծիծռան : եղեամն , եղեման : որոտն , որոտման : որմն , որման : տուն , տան : լիսեռն , լիսռան : գարուն , գարնան : ամառն , ամառան : աշուն , աշնան : ձմեռն , ձմռան : ինն , ինան : եօթն , եօթան : և այլք :

Չորրորդ բայածականք այսոքիկ , իմացումն , իմացման : լռումն , լռման : աճումն , աճման : և այլք նմանապէս եղերեցեալք :

Օրինակ յետնոյ տեսակին :

Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | Արիւն : |
| Սե : | Արեան : |
| Տր : | Արեան , կամ յարիւն : |
| Հայ : | զԱրիւն : |
| Բաց : | յԱրենէ : |
| Պատ : | զԱրենէ : |
| Գոր : | Արեամբ : |
| Պար : | զԱրեամբ : |
| Ներ : | յԱրեան , կամ նԱրեան : |
| Կոչ : | ով Արիւն : |

Յոգնականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | Արիւնք : |
| Սե : | Արեանց : |
| Տր : | Արեանց , կամ յարիւնս : |
| Հայ : | զԱրիւնս , կամ Արիւնս : |
| Բաց : | յԱրեանց : |
| Պատ : | զԱրեանց : |
| Գոր : | Արեամբք : |
| Պար : | զԱրեամբք : |
| Ներ : | Նարիւնս : |

Կոչ: ո՛վ արիւնք :

Ընդ այսու տեսակաւ պարունակին անուանք ոչ սակաւք. Նախ, սիւն, սեան: անկիւն, անկեան: արդիւն, արդեան: մրջիւն, մրջեան: ձիւն, ձեան: տիւ, տւնջեան, կամ տուընջեան: կորիւն, կորեան: ածիւն, ածեան: և այլք նմանապէս եղերեցեալք :

Երկրորդ, ծնունդ, ծննդեան: սերունդ, սերնդեան: գայլուստ, գայլստեան: փախուստ, փախստեան: շշնջիւն, շշնջեան: շառաչիւն, շառաչեան: հանգիստ, հանգստեան: ժողովուրդ, ժողովրդեան: սրբութի, սրբութե: ճշմարտութի, ճշմարտութե: և այլք բազումք նմանապէս եղերեցեալք :

Բայց գիտելի է նախ, զի անուանք ոմանք՝ այսորիկ տեսակի, ըստ յոգնականուն Թւոյ հեստեն 'ի շաւղէն վերոգրեցելոյ, որպիսիքեն, մրջիւնք, մրջնոց: ծնունդք, ծննդոց: սերունդք, սերնդոց: ժողովուրդք, ժողովրդոց: Ուստի պատկանին առ առաջին տեսակն երկրորդի հոլովման ըստ յոգնականին իւրեանց :

Գիտելի է երկրորդ, զի բայածականք այսոքիկ շշնջիւն, շառաչիւն, և այլք, նուազին ըստ յոգնականուն Թւոյ: Ուստի °ի տեղիս պիտանաւորս 'ի կիրարկանին փոխանակ նոցին այլք գաղափարք բայածականաց: որգոն շշնջմունք, շշնջմանց: շառաչմունք, շառաչմանց: և այլն :

Չորրորդ հոլովումն ունի և զերկուս տեսակս, որոց միոյն եզական սեռականն եղերի 'ի այ, և յոգնականն 'ի անց, որգոն, աղամ, աղամայ: աղամանք, աղամանց: Իսկ միւսոյն եզական սեռականն եղերի 'ի եայ: և յոգնականն 'ի եանց: որգոն, եսայի, եսայեայ: եսայեանք, եսայեանց :

Օրինակ

Օրինակ Նախկնոյ Տեռակին :

Եզականապէս :

Ան : Ադամ:
Սե : Ադամայ :
Տր : Ադամայ , կամ ցԱդամ :
Հայ : զԱդամ:
Բաց : յԱդամայ:
Պատ : զԱդամայ :
Գոր : Ադամաւ :
Պար : զԱդամաւ :
Ներ : ն Ադամաւմ , կամ ՚ի յԱդամ:
Կոչ: ով Ադամ:

Յոգնականապէս :

Ան: Ադամանք :
Սե : Ադամանց :
Տր : Ադամանց , կամ ցԱդամանս :
Հայ : զԱդամանս , կամ , Ադամանս :
Բաց : յԱդամանց :
Պատ : զԱդամանց :
Գոր : Ադամամբք :
Պար : զԱդամամբք :
Ներ : ն Ադամանս , կամ յԱդամանս :
Կոչ : ով Ադամանք :

Ընդ այսու տեսակաւ պարունակին անուանք յատուկք, Նախ Աբրահամք , որդոյն , յովսէփ , յովսէփայ : յովակիմ , յովակիմայ : սէթ , սէթայ : Ենովս , Ենովսայ : Ենոք , Ենոքայ : ղամէք , ղամէքայ : սերուք , սերուքայ : սահակ , սահակայ : մեսրոպ , մեսրոպայ : յակոբ , յակոբայ : յուսիկ , յուսկայ : ամբակում ,

C ամբա

1617_2008

ամբակումայ : յոբ, յոբայ : դկլաթ, դկլաթայ : խաթ, խաթայ : պօղ, պօղայ : մանկար, մանկարայ : վարդան, վարդանայ : և այլք բազումք :

Երկրորդ իգականք, որպէս, մարիամ, մարիամայ : անկաթ, անկաթայ : շուշան, շուշանայ : և այլք :

Օրինակ յետնոյ տեսակին :

Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | Եսայի : |
| Սեռ : | Եսայեայ : |
| Տր : | Եսայեայ, կամ ցԵսայի : |
| Հայ : | զԵսայի : |
| Բաց : | յԵսայեայ : |
| Պատ : | զԵսայեայ : |
| Գոր : | Եսայեաւ : |
| Պար : | զԵսայեաւ : |
| Ներ : | նԵսայոջ, կամ յԵսայի : |
| Կոչ : | ով Եսայի : |

Յոգնականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | Եսայեանք : |
| Սեռ : | Եսայեանց : |
| Տր : | Եսայեանց, կամ ցԵսայիս : |
| Հայ : | զԵսայեանս, կամ զԵսայիս : |
| Բաց : | յԵսայեանց : |
| Պատ : | զԵսայեանց : |
| Գոր : | Եսայեամբք : |
| Պար : | զԵսայեամբք : |
| Ներ : | նԵսայեանս, և կամ նԵսայիս : |
| Կոչ : | ով Եսայեանք : |

Ընդ.

Ընդ այսու տեսակաւ պարունակին անուանք յատուկք։ Նախ արականք, որգոն, Զաքարիա, Զաքարեայ։ Մաղաքիա, Մաղաքեայ։ Սոփոնիա, Սոփոնեայ։ Սերգիոս, Սերգեայ։ Մատաթիա, Մատաթեայ։ և այլք բազումք։

Երկրորդ իգականք, որգոն, Հռիփսիմէ, Հռիփսիմեայ։ Թեկղի, Թեկղեայ։ Վառվառէ, Վառվառեայ։ Հեղինէ, Հեղինեայ։ Կատարինէ, Կատարինեայ։ Պիպիանէ, Պիպիանեայ։ Ուստիանէ, Ուստիանեայ։ Գայիանէ, Գայիանեայ։ և այլք նմանապէս եղերեցեալք։

Բայց գիտելի է, զի անուանք յատուկք, որք ըստ եզականն սեռականին իւրեանց պատկանին առ առաջին տեսակն առաջնոյ հոլովման, ըստ յոգնականին իւրեանց ընդ այսու տեսակաւ պարունակին, որգոն, Ներսէս, Ներսիսի։ Ներսիսեանք, Ներսիսեանց։ Յոհաննէս, Յոհաննիսի, կամ Յոհաննու։ Յոհաննիսեանք, Յոհաննիսեանց։ և այլք սոցին նմանք։

Հինգերորդի հոլովման եզական սեռականն եղերի՛ ի եր, և յոգնականն՝ ի երց, որգոն, աղբիւր, աղբեր; աղբիւրք, աղբերց։

Օրինակ։

Եզականապէս։

| | |
|---|---|
| Ուղ։ | աղբիւր։ |
| Սեռ։ | աղբեր։ |
| Տր։ | աղբեր, կամ յաղբիւր։ |
| Հայ։ | զաղբիւր։ |
| Բաց։ | յաղբերէ։ |
| Պատ։ | զաղբերէ։ |
| Գոր։ | աղբերբ։ |
| Պար։ | զաղբերբ։ |

| | |
|---|---|
| Ներ: | նեղջեր, կամ յեղջեր: |
| Կոչ: | ով եղջիւր: |

Յոգնականապէս:

| | |
|---|---|
| Ուղ. | եղջիւրք: |
| Սեռ: | եղջերց, կամ եղջերաց: |
| Տր: | եղջերց, ցեղջիւրս: |
| Հայց: | զեղջիւրս, կամ եղջիւրս: |
| Բաց: | յեղջերց, կամ յեղջերաց: |
| Պատ: | զեղջերց, կամ զեղջերաց: |
| Գոր: | եղջերբք: |
| Պար: | զեղջերբք: |
| Ներ: | նեղջիւրս: |
| Կոչ: | ով եղջիւրք: |

Ընդ այսու հոլովմամբ պարունակին անուանք սակաւք, Ոմանք գոյականք, որպէս տետր, տետեր: աղտր, աղտեր: ալիւր, ալեր: ուստր, ուստեր: դուստր, դստեր: սուր, սուսեր: սատր, սատեր: եղջիւր, եղջեր: սանտր, սանտեր: լետր, լետեր: մեղր, մեղեր: ծաղր, ծաղեր: կղմինտր, կղմնտեր: մախր, մախեր: ճախր, ճախեր: լինտր, լնտեր: արտօսր, արտօսեր: Եւ այլք:

Եւ այլք ածականք, որպէս, նօսր, նօսեր: մանր, մաներ: փոքր, փոքեր: ծանր, ծաներ: քաղցր, քաղցեր: Եւ այլք նոյն պէս եղերեցեալք:

Բայց գիտելի է նախ, զի արտօսրն, 'ի յոգնականում թուոյ հեստէ 'ի շաւղէն վերոգրեցելոյ, քան զի ոչ ասի արտօսերք, արտօսերց, այլ արտասուք, արտասուաց: Եւ այլք:

Գիտելի է երկրորդ, զի ածականքս այսոքիկ, մանր, փոքր, ծանր, քաղցր, գտանին, երբեմն 'ի յեզականում թուոյ հոլովեցեալք այսպէս, մանու, փոքու, ծանու, քաղցու: Իսկ ըն յոգ

նակա

նականում, մանունք, մանունց: փոքունք, փոքունց, ծանունք, ծանունց: քաղցունք, քաղցունց: և այլն:

Վեցերորդն հոլովման եզական սեռականն եղերն 'ի եղ: և յոգնականն 'ի աց, որպէս ատող, ատեղ: ատեղք, ատեղաց:

Օրինակ:

Եզականապէս:

| | |
|---|---|
| Ուղ: | ուղսող: |
| Սե: | ուղստեղ: |
| Տր: | ուղստեղ, կամ յասող, ցասող: |
| Հայ: | զուղսող: |
| Բաց: | յուղստեղէ: |
| Պատ: | զ ուղստեղէ: |
| Գոր: | ուղստեղբ: |
| Պար: | զուղստեղբ: |
| Ներ: | նուղստեղ, կամ յաստեղ: |
| Կոչ: | ով ուղսող: |

Յոգնականապէս:

| | |
|---|---|
| Ուղ: | ուղստեղք: |
| Սե: | ուղստեղաց: |
| Տր: | ուղստեղաց, ցուղստեղս: |
| Հայ: | զուղստեղս, կամ ուղստեղս: |
| Բաց: | յուղստեղաց: |
| Պատ: | զուղստեղաց: |
| Գոր: | ուղստեղբք: |
| Պար: | զուղստեղբք: |
| Ներ: | նուղստեղս: |
| Կոչ: | ով ուղստեղք: |

Լինք

Ընդ այսու հոլովմամբ պարունակին անուանք սակաւք, որգոն արկղ, արկեղ։ անկղ, անկեղ։ սկուտղ, սկուտեղ։ Բանակետղ, բանակետեղ։ կրակետղ, կրակետեղ։ քարակետղ, քարակետեղ։ կուպղ, կուպեղ։ կոստղ, կոստեղ։ կոթղ, կոթեղ։ Եւ այլք նմանապէս եղերեցեալք։

Եօթն երրորդ հոլովման եղանակն սեռականն եղեալ ՚ի ին։ Եւ յոգնականն ՚ի անց։ որգոն, անձն, անձին։ անձինք, անձանց։

Օրինակ։

Եզականապէս։

| | |
|---|---|
| Ուղ։ | անձն։ |
| Սեռ։ | անձին։ |
| Տր։ | անձին, կամ յանձն, ցանձն։ |
| Հայ։ | զանձն։ |
| Բաց։ | յանձնէ։ |
| Պատ։ | զանձնէ։ |
| Գոր։ | անձամբ։ |
| Պար։ | զանձամբ։ |
| Ներ։ | նանձին, կամ յանձին։ |
| Կոչ։ | ով անձն։ |

Յոգնականապէս։

| | |
|---|---|
| Ուղ։ | անձինք։ |
| Սեռ։ | անձանց։ |
| Տր։ | անձանց, յանձինս, ցանձինս։ |
| Հայ։ | զանձինս, կամ անձինս։ |
| Բաց։ | յանձանց։ |
| Պատ։ | զ անձանց։ |
| Գոր։ | անձամբք։ |

Պար

Պար ։ զ անձամբք ։

Ներ ։ ի անձինս ։

Կոչ ։ ով անձինք ։

Ըստ այսու հոլովմամբ պարունակին անուանք այսոքիկ սակաւք, ո՛րգոն, գառն, գառին ։ դառն, դառին ։ լեառն, լերին ։ ոսկն, ոսկին ։ եզն, եզին ։ տասն, տասին ։ ձեռն, ձեռին ։ ոտն, ոտին ։ և այլք սոցին նմանք ։

Բայց գիտելի է, զի ոտն, և ձեռն, 'ի յոգնականում Թուոյ լինին, ձեռինք, ձեռաց ։ կամ ձեռք ձեռաց ։ ոտք, ոտից ։ այլ ո՛չ ոտանց, ձեռանց ։

Ութերորդի հոլովման եզական սեռականն եղերի 'ի ու ։ և յոգնականն 'ի ուց ։ ո՛րգոն, ժամ, ժամու ։ ժամք, ժամուց ։

Օրինակ ։

Եզականապէս ։

Ուղ ։ ժամ ։

Սե ։ ժամու ։

Տր ։ ժամու, կամ 'ի ժամ ։

Հայ ։ զժամ ։

Բաց ։ 'ի ժամու ։

Պատ ։ զժամու ։

Գոր ։ ժամու ։

Պար ։ զժամու ։

Ներ ։ 'ի ժամու ։

Կոչ ։ ով ժամ ։

Յոգնականապէս ։

Ուղ ։ ժամք ։

Սե ։ ժամուց ։

Տր ։

Տր: ժամուց , ցժամս:
Հայ: զժամս , ժամս:
Բաց: 'ի ժամուց:
Պատ: զժամուց:
Գոր: ժամօք:
Պար: զժամօք:
Ներ: ըն ժամս:
Կոչ: ո՛վ ժամք:

Ընդ այսու հոլովմամբ պարունակին անուանք ոմանք հասարակք, ո̂րգոն, մէն, մինու: զգեստ, զգեստու: զարդ, զարդու: ագուաւ, ագուաւու: պահ, պահու: առիւծ, առիւծու: զէն, զինու: զօր, զօրու: հէն, հինու: ցոյլ, ցլու: պար, պարու: ծով, ծովու: աղուէս, աղուիսու: հաւ, հաւու: սով, սովու: կով, կովու: հով, հովու: մահ, մահու: այգ, այգու: դաս, դասու: ձագ, ձագու: նախանձ, նախանձու: ծաղ, ծաղու: և այլք:

Եւ այլք յատուկք, ո̂րգոն, աբրահամ, աբրահամու: ղուկաս, ղուկասու: յոհան, յոհաննու: ղազար, ղազարու: ուրբաթ, ուրբաթու: շաբաթ, շաբաթու: և այլք ոմանք:

Իսկ այլք ածականք, ո̂րգոն, սակաւ, սակաւու: փոքր, փոքու: և այլք զորս վերոգրեցաք:

# ԴՐԱԿ ԵՐԿՐՈՐԴ :

## Յաղագս Յատկից հոլովմանց անուանց :

Հոլովմունք յատուկք են վեց : Որոց առաջնոյն եզական սեռականն ելանէ 'ի օր, և յոգնականն 'ի արց :

Օրն օրինակ :

Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղղ : | հայր : |
| Սեռ : | հօր : |
| Տրը : | հօր, կամ 'ի հայր : ցհայր : |
| Հայց : | զհայր : |
| Բաց : | 'ի հօրէ : |
| Պատ : | զհօրէ : |
| Գործ : | հարբ : |
| Պար : | զհարբ : |
| Ներ : | 'ի հօր, կամ 'ի հայր : |
| Կոչ : | ով հայր : |

Յոգնականապէս :

| | |
|---|---|
| Ուղղ : | հարք : |
| Սեռ : | հարց, կամ հարանց : |
| Տրը : | հարց, կամ ցհարս : |
| Հայց : | զհարս, կամ հարս : |
| Բաց : | 'ի հարց, կամ 'ի հարանց : |
| Պատ : | զհարց, կամ զհարանց : |
| Գործ : | հարբք : |
| Պար : | զհարբք : |

| | |
|---|---|
| Ներ : | ընդ հարս : |
| Կոչ : | ով հարք : |

Ըստ այսմ հոլովին եւ մայր, մօր : եղբայր, եղբօր : բայց 'ի յոգնականուն ոչ առնեն, մարանց, այլ մարց : ոչ եղբարանց, այլ եղբարց :

Նմանապէս են եւ համայնք բարդութիւնք սոցին, որգոն, ա͞ծահայր, ա͞ծահօր : ա͞ծամայր, ա͞ծամօր : փեսեղբայր, փեսեղբօր : եւ այլք :

Երկրորդ եղանակն սեռականն եղերն 'ի ոջ ; եւ յոգնականն 'ի անց :

Օ͞րն Օրինակ :

Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղ͞ղ : | կին : |
| Սեռ : | կնոջ : |
| Տր : | կնոջ, կամ 'ի կին, կամ ցկին : |
| Հայ : | զկին : |
| Բաց : | 'ի կնոջէ : |
| Պատ : | զկնոջէ : |
| Գոր : | կանամբ : |
| Պար : | զկանամբ : |
| Ներ : | ընդ կնոջ, կամ 'ի կնոջ : |
| Կոչ : | ով կին : |

Յոգնականապէս :

| | |
|---|---|
| Ուղ͞ղ : | կանայք : |
| Սեռ : | կանանց : |
| Տր : | կանանց, կամ ցկանայս : |
| Հայ : | զկանայս, կամ կանայս : |
| Բաց : | 'ի կանանց : |

Պատ:

Պատ: զկանանց:
Գոր: կանամբք:
Պար: զկանամբք:
Ներ: ըն կանայս:
Կոչ: ով կանայք:

Ըստ այսմ հոլովին եւ համայնք բարդեցեալք 'ի սմանէ, ո̂րդան, տիկին, տիկնոջ: տանտիկին, տանտիկնոջ: եւայլք:

Երրորդ եզական սեռականն եղերի 'ի եղջ, եւ յոգնականն 'ի ից:

Օ̂ր օրինակ:

Եզականապէս:

Ուղ: գիւղ:
Սեռ: գեղջ:
Տուր: գեղջ, կամ 'ի գիւղ:
Հայ: զգիւղ:
Բաց: 'ի գեղջէ:
Պատ: զգեղջէ:
Գոր: գիւղիւ:
Պար: զգիւղիւ:
Ներ: ըն գեղջ, կամ 'ի գեղջ:
Կոչ: ով գիւղ:

Յոգնականապէս:

Ուղ: գիւղք, կամ գիւղորէք:
Սեռ: գիւղից, կամ գիւղորէից:
Տուր: գիւղից, զգիւղս: գիւղորէից զգիւղորէս
Հայ: զգիւղս, կամ զգիւղորէս:
Բաց: 'ի գիւղից, կամ 'ի գիւղորէից:
Պատ: զգիւղից, կամ զգիւղորէից:

Գործ: գիւղօք, կամ գիւղօրէիւք:
Պար: զգիւղօք, կամ զգիւղօրէիւք:
Ներ: ընդ գիւղս, կամ ընդ գիւղօրէս:
Կոչ: ով գիւղք, կամ գիւղօրէք:

Ըստ այսմ հոլովին և համայնք բարդութիք սորին, որպէս ձորագիւղ, ձորագեղջ: նորագիւղ, նորագեղջ: և այլք:

Չորրորդի եղական սեռականն ելանէ 'ի առն, և յոգնականն, անց, կամ արց: զորօրինակ է.

Եղականապէս:

Ուղղ: տէր:
Սեռ: տեառն:
Տր: տեառն, կամ ցտէր, կամ 'ի տէր:
Հայց: զտէր:
Բաց: 'ի տեառնէ:
Պատ: զտեառնէ:
Գործ: տերամբ:
Պար: զտերամբ:
Ներ: ընդ տեառն:
Կոչ: ով տէր:

Յոգնականապէս:

Ուղղ: տեարք:
Սեռ: տեարց, կամ տերանց:
Տր: տեարց, կամ տերանց, ցտեարս:
Հայց: զտեարս, տեարս:
Բաց: 'ի տեարց, կամ 'ի տերանց:
Պատ: զտեարց, կամ զտերանց:
Գործ: տերամբք, կամ տեարբք:

Պար

Պար: զտերամբք, կամ զտեանբք:
Ներ: ըն տեարս:
Կոչ: ով տեարք:

Ըստ այսմ հոլովին և ս այր, առն: արք, արանց: Եւ համայնք բարդեցեալք ՚ի սոցունց, որգոն, տանուտէր, տանուտեառն: պարտատէր, պարտատեառն: երկայր, երկառն: բազմայր, բազմառն: Եւ այլք:

Հինգերորդն եղական սեռականն եղերն ՚ի աւուր, և յոգնականն, աւուրց: որգոն օր, աւուր: աւուրք, աւուրց:

Զոր Օրինակ:

Եզականապէս:

Ուղ: օր:
Սե: աւուր:
Տր: աւուր, կամ յօր, կամ ցօր:
Հայ: զօր:
Բաց: յօրէ:
Պատ: զօրէ:
Գործ: աւուրբ:
Պար: զաւուրբք:
Ներ: նաւուր:
Կոչ: ով օր:

Յոգնականապէս:

Ուղ: աւուրք:
Սե: աւուրց:
Տր: աւուրց, ցաւուրս:
Հայ: զաւուրս, աւուրս:
Բաց: յաւուրց:

Պատ:

| | |
|---|---|
| Պատ : | զաւուրց : |
| Գոր : | աւուրբք : |
| Պար : | զաւուրբք : |
| Ներ : | նաւուրս, կամ յաւուրս : |
| Կոչ : | ո՛վ աւուրք : |

Ըստ այսմ հոլովին են համայնք բարդութիւնք սորին, որգոն առաջնօր, առաջնաւուր : կէսօր, կէսաւուր : և այլք :

Վեցերորդի եղական սեռականն եղերի 'ի եռ, և յոգնականն 'ի երց, որգոն, քոյր, քեռ : քորք, քերց :

Եզականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | քոյր : |
| Սե : | քեռ : |
| Տր : | քեռ, կամ 'ի քոյր, ցքոյր : |
| Հայ : | զքոյր : |
| Բաց : | 'ի քեռանէ : |
| Պատ : | զքեռանէ : |
| Գոր : | քերբ, կամ քեռամբ : |
| Պար : | զքերբ, կամ զքեռամբ : |
| Ներ : | ըն քեռ : |
| Կոչ : | ո՛վ քոյր : |

Յոգնականապէս :

| | |
|---|---|
| Ուղ : | քորք : |
| Սե : | քերց : |
| Տր : | քերց, 'ի քորս, կամ ցքորս : |
| Հայ : | զքորս, քորս : |
| Բաց : | 'ի քերց : |
| Պատ : | զքերց : |

Գոր :

Գոր: քերբք:
Պար: զքերբք:
Ներ: ըն քորս:
Կոչ: ով քորք:

Ընդ այսմ հոլովին ևս համայնք բաղադրութիւնք սորին, որ-
պէս, հարսնքոյր, հարսնքեռ: մօրքոյր, մօրքեռ: հօրքոյր, հօր-
քեռ: և այլն:

Հոլովումն մասնականաց անուանց, Ոմն, Ոք, Իմն:

Եզականապէս:

Ուղղ: ոմն, ոք, իմն:
Սեռ: ուրումն, ուրուք, իրիք:
Տրակ: ումեմն, ումեք, իմիք:
Հայց: զոմն, զոք, զիմն:
Բաց: յումեմնէ, յումեքէ, յիմեքէ:
Պատմ: զումեմնէ, զումեքէ, զիմեքէ:
Գոր: ոմամբ, իւիք:
Պար: զոմամբ, զիւիք:
Ներ: նումեմն, նումեք, նիմիք:

Յոգնականապէս:

Ուղղ: ոմանք:
Սեռ: ոմանց:
Տրակ: ոմանց, կամ ցոմանս:
Հայց: զոմանս, կամ ոմանս:
Բաց: յոմանց:
Պատմ: զոմանց:
Գոր: ոմամբք:
Պար: զոմամբք:
Ներ: նոմանս:

Ըստ այսոցիկ հոլովին եւ համայնք բաղդութիւնք սոցին, որգոն, ոչոք, ոչուրուք: ամոք, ամիուրուք: իւրաքանչիւրոք, իւրաքանչիւրուրուք: երկաքանչիւրոք, երկաքանչիւրուրուք: եւ այլք :

Բայց այսոքիկ մինչ ոչէն բաղդեցեալք, այլ միայն շա_ րակցեցեալք իմիասին, երկաքանչիւրն հոլովին, որգոն իւրա քանչիւրոք, իւրաքանչիւրոյ ուրուք: այլոք, այլոյ ուրուք, այլ ումն, այլոյ ուրումն: եւ այլք սոցին նմանք ;

Գիտելի է եւս, զի ումն, եւ ոքն դնին 'ի շարադրութիւն առ 'ի նշանակել զիրս կենդանիս, որգոն այր ոք: այր ումն; կին ումն: կենդանի ոք: Իսկ իմն, առ 'ի նշանակել զանկենդանս, որգոն, գիտութիւն իմն: քար իմն: Ջերմութիւն իմն; եւ այլն;

## Հոլովումն հարցականաց անուանց, ո՞ր, ո՞վ, ո՞:

### Եզականապէս:

| | |
|---|---|
| ՈՒՂ: | ո՞ր, ո՞վ, ո՞: |
| ՍԵ: | որո՞յ, ո՞յր: |
| ՏՐ: | որո՞ւմ, ո՞ւմ: |
| Հայ: | զո՞ր, զո՞վ, զո՞: |
| Բաց: | յորմէ՞, յումէ՞: |
| Պատ: | զորմէ՞, զումէ՞: |
| Գոր: | որո՞վ, ի՞ւ: |
| Պար: | զորո՞վ, զի՞ւ: |
| Ներ: | նորո՞ւմ, նո՞ւմ: |

### Յոգնականապէս:

| | |
|---|---|
| ՈՒՂ: | ո՞րք, ո՞վք, ո՞յք: |
| ՍԵ: | որո՞ց, ո՞յց: |
| ՏՐ: | որո՞ց, ո՞յց, կամ առ ո՞րս, առ ո՞յս: |
| Հայ: | զո՞րս, զո՞յս: |

Բաց:

| | |
|---|---|
| Բաց ։ | յորոց , յոյց ։ |
| Պատ ։ | զորոյ , զոյց ։ |
| Դոր ։ | որոմք , ում՛ք ։ |
| Պար ։ | զորոմք , զում՛ք ։ |
| Նաեւ ։ | նորա , նոյա ։ |

Բայց գիտելի է զի երբեմն հարցականք այսոքիկ շարանիցեն եալք ընդ այլոց , հոլովին 'ի միասին , որպէս , որոք ։ ոյրուրուք ։ ումումեք ։ զոմոք ։ յումեքումեքէ ։ զումեքումեքէ ։ իւիւեք ։ զիւ իւեք ։ նումումեք ։ եւ այլն ։

Լինին եւ այսոքիկ վարիլ սահմանականօրէն , որպէս , ոսոք կամի զկնի իմ գալ ։ ոյք ուխտուք եղն կամ գիտասն ։ եւ այլն ։

## ԴՐՈՒԱԿ ԵՐՐՈՐԴ.

### Յաղագս լծորդութե բայից եականաց ։

ԶՈրք այսոքիկ բայք եականք այսինքն , եմ , գոմ , եղանիմ , լինիմ , Թէպէտ զտարբերս ունին նշանակութիս 'ի միմեանց , սակայն լծորդին 'ի միասին առ 'ի լինել զԹերիս միմեանց , նմանս ժամանակս , յորս նուազին ոմանք 'ի նոցունց , ըստ որում տեսցես ստորեւ ։

Սահմանականի ներկայ ։

Եզականապէս ; եմ , գոմ , եղանիմ , լինիմ ։ Ես , գոս , եղանիս , լինիս ։ Է՛ , գոյ , եղանի , լինի ։

Յոգնականապէս ։ եմք , գոմք , եղանիմք , լինիմք ։ Էք , գոք , եղանիք , լինիք ։ Են , գոն , եղանին , լինին ։

Անկատար ։

Եզ ։ էի , գոյի , եղանէի , լինէի ։ Էիր , գոյիր եղանէիր , լինէիր ։ Էր , գոյր , եղանիւր , լինիւր ։ կամ եղանէր , լինէր ։

Յգ: էաք, գոյաք, եղանէաք, լինէաք: Էիք, գոյիք, եղանէիք, լինէիք: Էին, գոյին, եղանէին, լինէին:

Կատարեալ:

Եզ: եղէ; եղեր; եղեւ:

Յգ: եղաք; եղայք, կամ եղէք, եղեն:

Յարակատար:

Եզ: եղեալ եմ լեալ եմ: Եղեալ ես, լեալ ես: Եղեալ է, լեալ է:

Յգ: եղեալ եմք, լեալ եմք: Եղեալ էք լեալ էք: Եղեալ են, լեալ են:

Գերակատար:

Եզ: եղեալ էի, լեալ էի: եղեալ էիր, լեալ էիր: եղեալ էր, լեալ էր:

Յգ: եղեալ էաք, լեալ էաք: եղեալ էիք, լեալ էիք: եղեալ էին, լեալ էին:

Ապառնի:

Եզ: եղէց, կամ եղիցիմ, լիցիմ: եղիցիս, լիցիս: եղիցի, լիցի:

Յգ: եղիցուք լիցուք, կամ եղիցիմք, լիցիմք: եղիցիք, լիցիք: եղիցին, լիցին:

Հրամայական ներկայ:

Եզ: լեր, մի՛ լինիր կամ մի՛ եղանիր: լինիցի, մի՛ լինիցի: կամ եղանիցի, մի՛ եղանիցի:

Յգ: լերուք, մի՛ լինիք: կամ եղերուք, մի՛ եղանիք: լինիցին, մի՛ լինիցին: կամ եղանիցին, մի՛ եղանիցին:

Ապառնի:

Եզ: լիջիր, մի՛ լինիցիս: կամ եղիջիր, մի՛ եղանիցիս: լիցի, մի՛ լինիցի: կամ եղիցի, մի՛ եղանիցի:

Յգ: լիցուք, մի՛ լինիցիմք: կամ եղիցուք, մի՛ եղանիցիմք: լիջիք, մի՛ լինիցիք, կամ եղիջիք, մի՛ եղանիցիք: լիցին, մի՛ լինիցին: կամ եղիցին, մի՛ եղանիցին:

Ան

ասինս, եմ, փոխանակ էր, որգոն. Ողջ էր: և իցէ, մի՛ իցէ, փոխանակ լինիցի, մի՛ լինիցի:

### Ըղձական ներկայ և Ապառնի:

Եզ: Երանի թէ իցեմ, գուցեմ, եղանիցիմ, լինիցիմ: իցես, գուցես, եղանիցիս, լինիցիս: իցէ, գուցէ, եղանիցի, լինիցի:

Յգ: Երանի թէ իցեմք, գուցեմք, եղանիցիմք, լինիցիմք: իցէք, գուցէք, եղանիցիք, լինիցիք, իցեն, գուցեն, եղանիցին, լինիցին:

### Անկատար:

Եզ: Երանի թէ իցէի, գուցէի, եղանիցէի, լինիցէի: իցէիր, գուցէիր, եղանիցէիր, լինիցէիր: իցէր, գուցէր, եղանիցէր, լինիցէր:

Յգ: Երանի թէ իցէաք, գուցէաք, եղանիցէաք, լինիցէաք: իցէիք, գուցէիք, եղանիցէիք, լինիցէիք: իցէին, գուցէին, եղանիցէին, լինիցէին:

### Կատարեալ և Յարակատար:

Եզ: Երանի թէ եղեալիցեմ, լեալիցեմ: եղեալիցես, լեալ իցես: եղեալ իցէ, լեալ իցէ:

Յգ: Երանի թէ եղեալք իցեմ, լեալք իցեմք: եղեալք իցէք, լեալք իցէք, եղեալք իցեն, լեալք իցեն:

### Գերակատար:

Եզ: Երանի թէ եղեալիցէի, լեալիցէի: եղեալիցէիր, լեալ իցէիր: եղեալիցէր, լեալիցէր:

Յգ: Երանի թէ եղեալք իցէաք, լեալք իցէաք: եղեալք իցէիք, լեալք իցէիք: եղեալք իցէին, լեալք իցէին:

### Ստորադասական Ներկայ:

Եզ: եթէ իցեմ, գուցեմ, եղանիցիմ, լինիցիմ: Եւ այլն, որպէս ընդ ներկայոյ ըղձականին:

Անկատար ։

Եզ̄ ։ Եթէ իցէի, գուցէի, եղանիցէի, լինիցէի ։ Եւ այլն, որ̄պ յանկատարոց ըղձականին ։

Կատարեալ, և յարակատար ։

Եզ̄ ։ Եթէ եղեալ իցեմ, լեալ իցեմ ; և այլն որ̄պ յըղձականում եղանակոջ ։

Գերակատար ։

Եզ̄ ։ Եթէ եղեալ իցէի, լեալ իցէի ։ և այլն որ̄պ յըղձականում եղանակոջ ։

Ապառնի ։

Եզ̄ ։ Եթէ եղեալ եղէց, լեալ եղէց ։ եղեալ եղիցիս, լեալ եղիցիս ։ եղեալ եղիցի, լեալ եղիցի ։

Յգ̄ ։ Եթէ եղեալք եղիցուք, լեալք եղիցուք ։ եղեալք եղիցիք, լեալք եղիցիք ։ եղեալք եղիցին, լեալք եղիցին ։

Այլապէս ։

Եզ̄ ։ Եթէ եղեալ լիցիմ, լիցիս, լիցի ։

Յգ̄ ։ Եթէ եղեալք լիցիմք, լիցիք, լիցին ։

Աներևութի ներկայ ։

Եւ. գոլ, եղանիլ, լինիլ ։

Կատրել, յրկտր․ և գրկտր ։

Եղեալ գոլ, լեալ գոլ ։

Ապառնի ։

Ելոց գոլ, գոլոց գոլ, եղանելոց գոլ, լինելոց գոլ, կամ, եղանելի գոլ, լինելի գոլ ։

Ընդունելութ̄ի ներկայ ։

Եող, գոյող, եղանող, լինող ։

Կտրլ․ յրկտր, և գերկտր ։

Եղեալ, լեալ ։

Ապառնի ։

Ելոց, գոլոց, եղանելոց, լինելոց ։ կամ, եղանելի, լինելի ։

Դերբայք ։

Ելոյ, գոլոյ, եղանելոյ, լինելոյ ։

'իյել, 'իգոլ, 'իյեղանիլ, 'իլինիլ ։

Ելով գոլով, եղանելով, լինելով ։

Նելն, 'իգոլն, նեղանիլն, ըն լինիլն ։

Արդ՝ այսորիկ կոչին դերբայք, զի գոլով հոլովք բային աներևոյթի, վարին փոխանակ բայից ։ և զլուս էութեց նշանակեն ։

## ԳՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ ։

### Յաղագս լծորդութեց բայից 'ներգործականաց ։

Լծորդութիւնք բայից ներգործականաց են երեք ։ Որոց առաջնոյն ներկայ աներևոյթն եղերի 'ի Ել ։ որգոն Սիրել ։ Եւ առաջին դէմ ներկայի սահմանականին 'ի Եմ. որգոն Սիրեմ ։ Երկրորդի ներկայ աներևոյթն եղերի 'ի Ալ. որգոն լուանալ ։ Եւ առաջին դէմ ներկայի սահմանականին 'ի Ամ. որգոն լուանամ ։ Իսկ երրորդի ներկայ աներևոյթն եղերի 'ի Ուլ. որգոն, լնուլ ։ Եւ առաջին դէմ ներկայի սահմանականին, 'ի Ում, որգոն, լնում ։

Օրինակ Առաջնոյ
Լծորդութեն Ներգործականաց ։
Սահմանականի Ներկայ ։

Եզ ։ Սիրեմ, սիրես, սիրէ ։
Յգ ։ սիրեմք, սիրէք, սիրեն ։

Անկա

Անկատար:

Եզ: Սիրէի, սիրէիր, սիրէր:

Յգ: սիրէաք, սիրէիք, սիրէին:

Կատարեալ:

Եզ: սիրեցի, սիրեցեր, սիրեաց:

Յգ: սիրեցաք, սիրեցիք, սիրեցին:

Յարակատար:

Եզ: սիրեալեմ, սիրեալես, սիրեալէ:

Յգ: սիրեալքեմք, սիրեալքէք, սիրեալքեն:

Գերակատար:

Եզ: սիրեալէի, սիրեալէիր, սիրեալէր:

Յգ: սիրեալքէաք, սիրեալքէիք, սիրեալքէին:

Ապառնի:

Եզ: սիրեցից, սիրեսցես, սիրեսցէ:

Յգ: սիրեսցուք, սիրեսցէք, սիրեսցեն:

Հրամայականի Ներկայ:

Եզ: սիրեա՛, մի՛ սիրեր, կամ մի՛ սիրիցես, սիրիցէ, մի՛ սիրիցէ:

Յգ: սիրեցէք, մի՛ սիրէք, կամ մի՛ սիրիցէք, սիրիցեն, մի՛ սիրիցեն:

Ապառնի:

Եզ: սիրեսջիր, կամ սիրեսցես, մի՛ սիրիցես: սիրեսցէ մի՛ սիրիցէ:

Յգ: սիրեսցուք, մի՛ սիրիցեմք: սիրեսջիք, կամ սիրեսցէք, մի՛ սիրիցէք: սիրեսցեն, մի՛ սիրիցեն:

Ըղձականի Ներկայ և Ապառնի:

Եզ: Երանի Թէ սիրիցեմ, սիրիցես, սիրիցէ:

Յգ: Երանի թէ սիրիցեմք, սիրիցէք, սիրիցեն :

Անկատար :

Եզ: Երանի թէ սիրիցէի, սիրիցէիր, սիրիցէր:

Յգ: Երանի թէ սիրիցէաք, սիրիցէիք, սիրիցէին:

Կատարեալ յարակատար :

Եզ: Երանի թէ սիրեալիցեմ, սիրեալիցես, սիրեալիցէ:

Յգ: Երանի թէ սիրեալքիցեմք, սիրեալքիցէք, սիրեալք իցեն :

Գերակատար :

Եզ: Երանի թէ սիրեալիցէի, սիրեալիցէիր, սիրեալիցէր:

Յգ: Երանի թէ սիրեալքիցէաք, սիրեալքիցէիք, սիրեալք իցէին :

Ստորադասական Ներկայ:

Եզ: Եթէ սիրիցեմ, սիրիցես, սիրիցէ :

Յգ: Եթէ սիրիցեմք, սիրիցէք, սիրիցեն :

Անկատար :

Եզ: Եթէ սիրիցէի, սիրիցէիր, սիրիցէր :

Յգ: Եթէ սիրիցէաք, սիրիցէիք, սիրիցէին:

Կտ̄լ յարակատար:

Եզ: Եթէ սիրեալիցեմ, սիրեալիցես, սիրեալիցէ :

Յգ: Եթէ սիրեալքիցեմք, սիրեալքիցէք, սիրեալքիցեն :

Գերակատար :

Եզ: Եթէ սիրեալիցէի, սիրեալիցէիր, սիրեալիցէր :

Յգ: Եթէ սիրեալքիցէաք, սիրեալքիցէիք, սիրեալքիցէին:

Ապառնի :

Եզ: Եթէ սիրեալեղէց, սիրեալեղիցիս, սիրեալեղիցի :

Յգ: Եթէ սիրեալքեղիցուք, սիրեալքեղիցիք, սիրեալք եղիցին :

Աներևոյթի Ներկայ: Սիրել :

Կատարեալ,

Կատրել, յրկտր, և գերկտր, Սիրեալ գոլ:
Ապառնի, Սիրելոց գոլ:
Ընդունելութի՟ն ներկայ: Սիրօղ, սիրողն: Եւայլն:
Կտրեալ, յրկտր, և գերակտր: Սիրեալ:
Ապառնի, սիրելոց:

Դերբայք:

Սիրելոյ: 'ի սիրել, սիրելով, ըն սիրելն, կամ 'ի սիրելն:

Օրինակ Կրաւորականաց:

Նոյնոյ Լծորդութե՟:

Սահմանականի Ներկայ:

Եզ: Սիրիմ, սիրիս, սիրի:
Յգ: Սիրիմք, սիրիք, սիրին:

Անկատար:

Եզ: սիրէի, սիրէիր, սիրիւր:
Յգ: սիրէաք, սիրէիք, սիրէին:

Կատարեալ:

Եզ: սիրեցայ, սիրեցար, սիրեցաւ:
Յգ: սիրիցաք, սիրեցայք, սիրեցան:

Յարակատար:

Եզ: սիրեցեալեմ, սիրեցեալես, սիրեցեալէ:
Յգ: սիրեցեալեմք, սիրեցեալէք, սիրեցեալեն:

Գերակատար:

Եզ: սիրեցեալէի, սիրեցեալէիր, սիրեցեալէր:
Յգ: սիրեցեալէաք, սիրեցեալէիք, սիրեցեալէին:

Ապառնի:

Եզ: սիրեցայց, սիրեսցիս, սիրեսցի:
Յգ: սիրիցուք, սիրեսցիք, սիրեսցին:

Հրամայական Ներկայ :

Եզ: Սիրեա, մի՛ սիրեր, կամ մի՛ սիրեսցես : սիրեսցի, մի՛ սիրեսցի :

Յգ: Սիրեցարուք, մի՛ սիրէք, կամ մի՛ սիրեսցէք : սիրեսցեն, մի՛ սիրեսցեն :

Ապառնի:

Եզ: սիրեսջիր, կամ սիրեսցես, մի՛ սիրեսցես : սիրեսցի, մի՛ սիրեսցի :

Յգ: սիրեսցուք, մի՛ սիրեսցիմք : սիրեսջիք : կամ սիրեսցիք, մի՛ սիրեսցիք : սիրեսցեն, մի՛ սիրեսցեն :

Ըղձական Ներկայ և Ապառնի :

Եզ: Երանի թէ սիրեսցիմ, սիրեսցես, սիրեսցի :

Յգ: Երանի թէ սիրեսցիմք, սիրեսցիք, սիրեսցեն :

Անկատար :

Եզ: Երանի թէ սիրեսցէի, սիրեսցէիր, սիրեսցիւր :

Յգ: Երանի թէ սիրեսցէաք, սիրեսցէիք, սիրեսցէին :

Կատարեալ և յարակատար :

Եզ: Երանի թէ սիրեցեալիցեմ, սիրեցեալիցես, սիրեցեալիցէ :

Յգ: Երանի թէ սիրեցեալքիցեմք, սիրեցեալքիցէք, սիրեցեալքիցեն :

Գերակատար :

Եզ: Երանի թէ սիրեցեալիցէի, սիրեցեալիցէիր, սիրեցեալ իցէր :

Յգ: Երանի թէ սիրեցեալքիցէաք, սիրեցեալքիցէիք, սիրեցեալքիցէին :

Ստորադասական Ներկայ :

Եզ: Եթէ սիրեցիմ, սիրեցիս, սիրեցի :

Յգ: Եթէ սիրեցիմք, սիրեցիք, սիրեցին :

Անկատար :

Եզ: եթէ սիրեցէի. սիրեցէիր, սիրեցիւր :
Յգ: եթէ սիրեցեաք, սիրեցէիք, սիրեցէին :

Կատարեալ ներկայ :

Եզ: եթէ սիրեցեալիցեմ, սիրեցեալիցես, սիրեցեալիցէ :
Յգ: եթէ սիրեցեալքիցեմք, սիրեցեալքիցէք, սիրեցեալքիցեն:

Գերակատար :

Եզ: եթէ սիրեցեալիցէի, սիրեցեալիցէիր, սիրեցեալիցէր :
Յգ: եթէ սիրեցեալքիցեաք, սիրեցեալքիցէիք, սիրեցեալք իցէին :

Ապառնի :

Եզ: եթէ սիրեցեալ եղէց, կամ լիցիմ : սիրեցեալ եղիցիս, կամ լիցիս : սիրեցեալ եղիցի, կամ լիցի :
Յգ: եթէ սիրեցեալք եղիցուք, կամ լիցուք : սիրեցեալք եղիցիք, կամ լիցիք : սիրեցեալք եղիցին, կամ լիցին :

Աներևոյթի Ներկայ, սիրիլ :
Կատր̃, յոլկտր̃, և գերկտր̃, սիրեցեալ գոլ :
Ապառնի, սիրելի գոլ :
Ընդունելութիւն ներկայ, Սիրեցող, սիրեցողի : և այլն :
Կատր̃ յոլկտր̃, և գերկտր̃, սիրեցեալ, սիրեցելոյ, և այլն :
Ապառնի, սիրելի, սիրելւոյ : և այլն :

Գերբայք :

Սիրելոյ, 'ի սիրել, սիրելով, ըստ սիրելն, կամ 'ի սիրելն :

Ընդ այսու լծորդութեամբ պատուանակին բնաւք բայք ներգործականք երկրեցեալք 'ի եմ, կրաւորականօք համդերձ, որգոն, աղաչեմ, աղաչիմ : խնդրեմ, խնդրիմ : հայցեմ, հայցիմ : տեսանեմ, տեսանիմ : շինեմ, շինիմ : առնեմ, առնիմ : զարդարեմ, զարդարիմ : լուսաւորեմ, լուսաւորիմ : բաժանեմ, բաժանիմ : սահմանեմ, սահմանիմ : գրեմ, գրիմ : յափշտա-

կեմ,

կեմ, յափշտակիմ: աղդեմ, աղդիմ: օգնեմ, օգնիմ: դիտեմ, դիտիմ: նշմարեմ, նշմարիմ: երգեմ, երգիմ: պահեմ, պահիմ: հրապարակեմ, հրապարակիմ: հռչակեմ, հռչակիմ: դատեմ, դատիմ: քարոզեմ, քարոզիմ: փառաւորեմ, փառաւորիմ: ըմպեմ, ըմպիմ: ծածկեմ, ծածկիմ: Թագուցանեմ, Թագուցանիմ: կապեմ, կապիմ: արձակեմ, արձակիմ: ձեռնեմ, ձեռնիմ: առձեռնեմ, առձեռնիմ: ընձեռեմ, ընձեռիմ: վշտանկեմ, վշտանկիմ: պարարեմ, պարարիմ: համոզեմ, համոզիմ: հրապուրեմ, հրապուրիմ: պատրեմ, պատրիմ: հարեմ, հարիմ: զալեմ, զալիմ: և այլ գոնեա անհունք:

## ԴՐԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

### Յաղագս երկրորդի լծորդութեան բայից ներգործականաց:

Օրինակ:

Սահմանականի Ներկայ:

Եզ: լուանամ, լուանաս, լուանայ:
Յգ: լուանամք, լուանայք, լուանան:

Անկատար:

Եզ: լուանայի, լուանայիր, լուանայր:
Յգ: լուանայաք, լուանայիք, լուանային:

Կատարեալ:

Եզ: լուացի, լուացեր, լուաց:
Յգ: լուացաք, լուացիք, լուացին:

Յարակատար:

Եզ: լուացեալեմ, լուացեալես, լուացեալէ:
Յգ: լուացեալեմք, լուացեալէք, լուացեալեն:

Գերակատար։

Եզ: լուացեալէի, լուացեալէիր, լուացեալէր։

Յգ: լուացեալքէաք, լուացեալքէիք, լուացեալքէին։

Ապառնի։

Եզ: լուացից, լուասցես, լուասցէ։

Յգ: լուասցուք, լուասցէք, լուասցեն։

Հրամայական Ներկայ։

Եզ: լուա՛, մի՛ լուանար, կամ մի՛ լուանայցես։ լուանայցէ, մի՛ լուանայցէ։

Յգ: լուացէք, մի՛ լուանայք, կամ մի՛ լուանայցէք։ լուանայցեն, մի՛ լուանայցեն։

Ապառնի։

Եզ: լուասջիր, կամ լուասցես, մի՛ լուանայցես։ լուասցէ մի՛ լուանայցէ։

Յգ: լուասցուք, մի՛ լուանայցեմք։ լուասջիք, կամ լուասցէք, մի՛ լուանայցէք։ լուասցեն, մի՛ լուանայցեն։

Ըղձական Ներկայ և Ապառնի։

Եզ: Երանի թէ լուանայցեմ, լուանայցես, լուանայցէ։

Յգ: Երանի թէ լուանայցեմք, լուանայցէք, լուանայցեն։

Անկատար։

Եզ: Երանի թէ լուանայցէի, լուանայցէիր, լուանայցէր։

Յգ: Երանի թէ լուանայցէաք, լուանայցէիք, լուանայցէին։

Կատարեալ և յարակատար։

Եզ: Երանի թէ լուացեալլիցեմ, լուացեալլիցես, լուացեալլիցէ։

Յգ: Երանի թէ լուացեալքլիցեմք, լուացեալքլիցէք, լուացեալքլիցեն։

Գերակատար։

Եզ: Երանի թէ լուացեալլիցէի, լուացեալլիցէիր, լուացեալլիցէր։

Յգ։

Յգ ։ երանի թէ լուացեալքիցեաք, լուացեալքիցէիք, լուացեալքիցէին ։

Ստորակցականի Ներկայ ։

Եզ ։ եթէ լուանայցեմ, լուանայցես, լուանայցէ ։
Յգ ։ եթէ լուանայցեմք, լուանայցէք, լուանայցեն ։

Անկատար ։

Եզ ։ եթէ լուանայցէի, լուանայցէիր, լուանայցէր ։
Յգ ։ եթէ լուանայցէաք, լուանայցէիք, լուանայցէին ։

Կատարեալ եւ յարակատար ։

Եզ ։ եթէ լուացեալիցեմ, լուացեալիցես, լուացեալիցէ ։
Յգ ։ եթէ լուացեալքիցեմք, լուացեալքիցէք, լուացեալքիցեն ։

Գերակատար ։

Եզ ։ եթէ լուացեալիցէի, լուացեալիցէիր, լուացեալիցէր ։
Յգ ։ եթէ լուացեալքիցէաք, լուացեալքիցէիք, լուացեալքիցէին ։

Ապառնի ։

Եզ ։ եթէ լուացեալեղեց. լուացեալեղիցես, լուացեալեղիցի ։
Յգ ։ եթէ լուացեալքեղիցուք, լուացեալքեղիցիք, լուացեալքեղիցին ։

Աներեւութի Ներկայ, լուանալ ։
Կատարեալ, յրկտր, եւ գերկտր, լուացեալ գոլ ։
Ապառնի, Լուանալոց գոլ ։
Ընդունելութի ներկայ, լուացող, լուացողի, եւ այլն ։
Կտրլ, յրկտր, եւ գրկտր, լուացեալ ։
Ապառնի., լուանալոց ։

Դերբայք ։

Լուանալոյ, ՚ի լուանալ, լուանալով, ըն լուանալն ։

Օրինակ

Օրինակ Կրաւորականաց

Նոյնոյ Լծորդութե :

Սահմանականի Ներկայ ։

Եզ : լուանիմ, լուանիս, լուանի :

Յգ : լուանիմք, լուանիք, լուանին ։

Անկատար ։

Եզ : լուանէի, լուանէիր, լուանիւր ։

Յգ : լուանէաք, լուանէիք, լուանէին ։

Կատարեալ ։

Եզ : լուացայ, լուացար, լուացաւ ։

Յգ : լուացաք, կամ լուանեցաք : լուացայք, լուացան ։

Յարակատար :

Եզ : լուանեցեալեմ, լուանեցեալես, լուանեցեալէ :

Յգ : լուանեցեալքեմք, լուանեցեալքէք, լուանեցեալքեն ։

Գերակատար ։

Եզ : լուանեցեալէի, լուանեցեալէիր, լուանեցեալէր :

Յգ : լուանեցեալքէաք, լուանեցեալքէիք, լուանեցեալքէին :

Ապառնի :

Եզ : լուացայց, լուասցիս, լուասցի ։

Յգ : լուանիցուք, լուասցիք, լուասցին ։

Հրամայականի Ներկայ ։

Եզ : լուացիր, մի՛ լուանիր, կամ մի՛ լուանիցիս ; լուանիցի, մի՛ լուանիցի :

Յգ : լուացարուք, մի՛ լուանիք, կամ մի՛ լուանիցիք, լուանիցին, մի՛ լուանիցին ։

Ապառնի ։

Եզ : լուանիջիր, կամ լուասցիս, մի՛ լուանիցիս :

Յգ : լուանիցուք, մի՛ լուանիցիմք : լուանիջիք, կամ լուաս-
ցիք,

ցեք, մի՛ լուանիցիք ։ լուասցեն, մի՛ լուանիցեն ։

Ըղձական ներկայ եւ Ապառնի ։

Եզ ։ Երանի թէ լուանիցիմ, լուանիցիս, լուանիցի ։

Յգ ։ Երանի թէ լուանիցիմք, լուանիցիք, լուանիցեն ։

Անկատար ։

Եզ ։ Երանի թէ լուանիցէի, լուանիցէիր, լուանիցէր ։

Յգ ։ Երանի թէ լուանիցէաք, լուանիցէիք, լուանիցէին ։

Կատարեալ Ներկայ ։

Եզ ։ Երանի թէ լուանեցեալիցեմ, լուանեցեալիցես, լուանեցեալիցէ ։

Յգ ։ Երանի թէ լուանեցեալք իցեմք, լուանեցեալք իցէք, լուանեցեալք իցեն ։

Գերակատար ։

Եզ ։ Երանի թէ լուանեցեալիցէի, լուանեցեալիցէիր, լուանեցեալիցէր ։

Յգ ։ Երանի թէ լուանեցեալք իցէաք, լուանեցեալք իցէիք, լուանեցեալք իցէին ։

Ստորադասական Ներկայ ։

Եզ ։ Եթէ լուանիցիմ, լուանիցիս, լուանիցի ։

Յգ ։ Եթէ լուանիցիմք, լուանիցիք, լուանիցեն ։

Անկատար ։

Եզ ։ Եթէ լուանիցէի, լուանիցէիր, լուանիցէր ։

Յգ ։ Եթէ լուանիցէաք, լուանիցէիք, լուանիցէին ։

Կատարեալ Անկատար ։

Եզ ։ Եթէ լուանեցեալիցեմ, լուանեցեալիցես, լուանեցեալիցէ ։

Յգ ։ Եթէ լուանեցեալքիցեմք, լուանեցեալքիցէք, լուանեցեալքիցեն ։

Գ. Երա.

Գերակատար:

Եզ: եթէ լուանեցեալ լիցէի, լուանեցեալ լիցէիր, լուանեցեալ լիցէր:

Յգ: եթէ լուանեցեալք լիցէաք, լուանեցեալք լիցէիք, լուանեցեալք լիցէին:

Ապառնի:

Եզ: եթէ լուանեցեալ լեղէց, կամ լիցիմ: լուանեցեալ լեղիցիս, կամ լիցիս: լուանեցեալ լեղիցի, կամ լիցի:

Յգ: եթէ լուանեցեալք եղիցուք կամ լիցուք, լուանեցեալք եղիցիք, կամ լիցիք: լուանեցեալք եղիցին, կամ լիցին:

Աներևութի Ներկայ, Լուանել:

Անց., յոկտր., եգրկտր., լուանեցեալ գոլ:

Ապառնի, լուանալի գոլ:

Ընդունելութիւն ներկայ, լուանօղ, լուանողի, և այլն:

Անց., յոկտր., եգրկտր., լուանեցեալ, լուանեցելոյ, և այլն:

Ապառնի, լուանալի, լուանալւոյ, և այլն:

Դերբայք:

Լուանելոյ, ՚ի լուանել, լուանելով, ըն լուանելն:

Ընդ այսու լծորդութեան պարունակին, բնաւք բայք ներգործականք եղերեցեալք ՚ի ամ, կրաւորականօքն համդերձ, որգոն բանամ, բանիմ: բացի, բացայ: բացեալէմ, բանեցեալէմ: Թանամ, Թանիմ: Թացի, Թացայ: Թացեալէմ, Թանեցեալէմ: բառնամ, բառնիմ: բարձի, բարձայ: բարձեալէմ, բառնեցեալէմ: Որսամ, որսանիմ: որսացի, որսացայ: որսացեալէմ, որսանեցեալէմ: Աղամ, աղանիմ: աղացի, աղացայ: աղացեալէմ, աղանեցեալէմ: Ողբամ, ողբանիմ: ողբացի, ողբացայ: ողբացեալէմ, ողբանեցեալէմ: Հաւատամ, հաւատանիմ: հաւատացի, հաւատացայ: հաւատացեալէմ, հաւատանեցեալէմ: և այլն:

Բայք

Բայց գիտելի է նախ, զի ոմանք 'ի բայից այսորիկ լծորդութեան հեռանան 'ի շաւղէն վերոյգրեցելոյ ընդ կատարելում նոյապատմոլ ժամանակում, որպիսիք են։ Խմանամ, խմանիմ։ խմացայ, խմանեցայ։ խմացայց, խմանեցայց։ Ստանամ, ստանիմ։ ստացայ, ստանեցայ։ ստացայց, ստանեցայց։ Խոստանամ, խոստանիմ։ խոստացայ, խոստանեցայ։ խոստացայց, խոստանեցայց։ Ուրանամ, ուրանիմ։ ուրացայ, ուրանեցայ։ ուրացայց, ուրանեցայց։ Զլանամ, զլանիմ։ զլացայ, զլանեցայ։ զլացայց, զլանեցայց։ Տեղեկանամ, տեղեկանիմ։ տեղեկացայ, տեղեկանեցայ։ տեղեկացայց, տեղեկանեցայց։ Գողանամ, գողանիմ։ գողացայ, գողանեցայ։ գողացայց, գողանեցայց։ Մոռանամ, մոռանիմ։ մոռացայ, մոռանեցայ։ մոռացայց, մոռանեցայց։ Յղանամ, յղանիմ։ յղացայ, յղանեցայ։ յղացայց, յղանեցայց։ Եւ այլք ոմանք։

Գիտելի է երկրորդ, զի երկու բայք այսոքիկ, լամ. եւ տամ, գոլով արտաքոյ այսորիկ լծորդութեան, ընդունին խոտորմն. որգոն Լամ, լալիմ։ լացի, լացայ։ լացեալ եմ, լալեցեալ եմ։ լացից, լացայց։ Տամ, տուեմ։ Ետու, տուայ։ տուեալ եմ, տուեցեալ եմ։ տաց, տուայց։ Եւ այլն։

# ԳՐԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ,

## Յաղագս երրորդի Լծորդութեան բայից Ներգործականաց:

### Օրինակ:

Սահմանականին Ներկայ:

Եզ: լնում, լնուս, լնու:
Յզ: լնումք, լնույք, լնուն:

Անկատար:

Եզ: լնոյի, լնոյիր, լնոյր:
Յզ: լնոյաք, լնոյիք, լնոյին:

Կատարեալ:

Եզ: լցի, լցեր, ելից:
Յզ: լցաք, լցիք, լցին:

Յարակատար:

Եզ: լցեալեմ, լցեալես, լցեալէ:
Յզ: լցեալեմք, լցեալէք, լցեալեն:

Գերակատար:

Եզ: լցեալէի, լցեալէիր, լցեալէր:
Յզ: լցեալէաք, լցեալէիք, լցեալէին:

Ապառնի:

Եզ: լցից, լցցես, լցցէ:
Յզ: լցցուք, լցցէք, լցցեն:

Հրամայականին Ներկայ:

Եզ: լից, մի՛ լնուր, կամ մի՛ լնուցուս: լնուցու, մի՛ լնուցու;
Յզ: լցէք, մի՛ լնուք, կամ մի՛ լնուցուք: լնուցուն, մի՛ լնուցուն;

Ապառ

Ապառնի։

Եզ։ լցջիր, կամ լցցես, մի՛ լնուցուս։ լցցէ, մի՛ լնուցու։
Յգ։ լցցուք, մի՛ լնուցումք։ լցջիք, կամ լցցէք, մի՛ լնուցուք, լցցեն, մի՛ լնուցուն։

Ըղձականի Ներկայ և Ապառնի։

Եզ։ երանի թէ լնուցում, լնուցուս, լնուցու։
Յգ։ երանի թէ լնուցումք, լնուցուք, լնուցուն։

Անկատար։

Եզ։ երանի թէ լնիցէի, լնիցէիր, լնիցէր։
Յգ։ երանի թէ լնիցէաք, լնիցէիք, լնիցէին։

Կատարեալ և յարակատար։

Եզ։ երանի թէ լցեալ իցեմ, լցեալ իցես, լցեալ իցէ։
Յգ։ երանի թէ լցեալք իցեմք, լցեալք իցէք, լցեալք իցեն։

Գերակատար։

Եզ։ երանի թէ լցեալ իցէի, լցեալ իցէիր, լցեալ իցէր։
Յգ։ երանի թէ լցեալք իցէաք, լցեալք իցէիք, լցեալք իցէին։

Ստորադասականի Ներկայ։

Եզ. եթէ լնուցում. լնուցուս, լնուցու։
Յգ։ եթէ լնուցումք, լնուցուք, լնուցուն։

Անկատար։

Եզ։ եթէ լնիցէի, լնիցէիր, լնիցէր։
Յգ։ եթէ լնիցէաք, լնիցէիք, լնիցէին։

Կտր՟ և յարակատար։

Եզ։ եթէ լցեալ իցեմ, լցեալ իցես, լցեալ իցէ։
Յգ։ եթէ լցեալք իցեմք, լցեալք իցէք, լցեալք իցեն։

Գերակատար։

Եզ։ եթէ լցեալ իցէի, լցեալ իցէիր, լցեալ իցէր։
Յգ։ եթէ լցեալք իցէաք, լցեալք իցէիք, լցեալք իցէին։

Ապառնի :

Եզ: եթէ լցեալեղէց , լցեալեղիցիս , լցեալեղիցի :
Յգ: եթէ լցեալքեղիցուք , լցեալքեղիցիք , լցեալքեղիցին :

Աներևոյթի Ներկայ : Լնուլ :
Կատարեալ , յետոյ , և գերկատար , լցեալ գոլ :
Ապառնի , լնլոց գոլ :
Ընդունելութիւն ներկայ : լցօղ : լցողի :
Կատարեալ , յետոյ , և գերակատար լցեալ :
Ապառնի , լնլոց :

Դերբայք :

Լնլու , ՚ի լնուլ , լնլով , ըն լնուլն :

Օրինակ Կրաւորականաց :
Նոյնոյ Լծորդութեան :
Սահմանականի Ներկայ :

Եզ: լնանիմ , լնանիս , լնանի :
Յգ: լնանիմք , լնանիք , լնանին :

Անկատար :

Եզ: լնանէի , լնանէիր , լնանիւր :
Յգ: լնանէաք , լնանէիք , լնանէին :

Կատարեալ :

Եզ: լցայ , լցար , լցաւ :
Յգ: լցաք , կամ լնանեցաք , լցայք , լցան :

Յարակատար :

Եզ: լնանեցեալեմ , լնանեցեալես , լնանեցեալէ :
Յգ: լնանեցեալքեմք , լնանեցեալքեմք , լնանեցեալքեն :

Գերակատար :

Եզ: լնանեցեալէի , լնանեցեալէիր , լնանեցեալէր :
Յգ: լնանեցեալքէաք , լնանեցեալքէիք , լնանեցեալքէին :

Ապառ

Ապառնի ։

Եզ ։ լցայց, լցցես, լցցի ։

Յգ ։ լնանիցուք, լցցիք, լցցին ։

## Հրամայականն Ներկայ ։

Եզ ։ լցիր, մի՛ լնանիր, կամ մի՛ լնանիցես ։ լնանիցի, մի՛ լնանիցի ։

Յգ ։ լցարուք, մի՛ լնանիք, կամ մի՛ լնանիցիք ։ լնանիցին, մի՛ լնանիցին ։

Ապառնի ։

Եզ ։ լնանիջիր, կամ լցցես, մի՛ լնանիցես ։ լցցի, մի՛ լնանիցի

Եզ̅: ծանիմ, ծանիս, ծանի:

Յգ̅: ծանիմք, ծանիք, ծանին:

Անկատար ներգործական,

Եզ̅: ծանէի, ծանէիր, ծանէր: և այլն ոչ̅ սերէն:

Կրաւորական:

Եզ̅: ծանեէի, ծանեէիր, ծանիւր: և այլն ոչ̅ սերէէի:

Կատարեալ հասարակ:

Եզ̅: ծանեայ, ծանեար, ծանեաւ:

Յգ̅: ծանեաք, ծանեայք, ծանեան:

Յարակատար ներգործական:

Եզ̅: ծանեալեմ, ծանեալես, և այլն:

Կրաւորական:

Եզ̅: ծանեցեալեմ, ծանեցեալես, և այլն:

Գերակատար ։

Ներգործական ։ ծանեալ էի , և այլն ։

Կրաւորական , ծանեցեալ էի ; և այլն ։

Ապառնի ներգործական ։

Եզ ։ ծանեայց , ծանեսցես , ծանեսցէ ։ և այլն ։

Կրաւորական ։

Եզ ։ ծանեցայց , ծանեսցիս , ծանեսցի , և այլն ։

Հրամայականք հասարակք ։

Ծանիր , ծանիք ։ ծաներուք , ծանիջիր , ծանիջիք ։

Ըղձական Ներկայ և Ապառնի ։

Ներգործական ։

Եզ ։ երանի թէ ծանիցեմ , ծանիցես , և այլն ։

Կրաւորական ։

Եզ ։ երանի թէ ծանիցիմ , ծանիցիս , ծանիցի ։

Անկատար ներգործական ։

Եզ ։ երանի թէ ծանիցէի , ծանիցէիր , ծանիցէր ։ և այլն ։

Կրաւորական ։

Եզ ։ երանի թէ ծանիցէի , ծանիցէիր , ծանիցիւր ։ և այլն ։

Ապառնի ստորադասականին ։

Ներգործական ։ եթէ ծանեալ եղէց ։ և այլն ։

Կրաւորական ։ եթէ ծանեցեալ եղէց , կամ լիցիմ ։ և այլն ։

Աներեւոյթք ։

Ներգործական ։ ծանել , ծանեալ գոլ , ծանելոց գոլ ։

Կրաւորական , ծանիլ , ծանեցեալ գոլ , ծանելի գոլ ։

Ընդունելութիւնք ։

Ներգործական , ծանօղ , ծանեալ , ծանելոց ։

Կրաւորական , ծանեցօղ , ծանեցեալ , ծանելի ։

Գերբայք ներգործական ։

Ծանելոյ , 'ի ծանել , ծանելով , ըն ծանելն ։

Կրաւո

Կրաւորականք։

Ծանիլոյ ; 'ի ծանիլ, ծանիլով, ըն ծանիլն ։

Յիշելիքեն եւ սա ։ Գոնեա՛, որէ հաշուեա՛ ։ Եւ Ողջեր, որէ Ողջլեր, կամ ողջունեցեալլեր ։ Գուցէ, որէ Լիցէ ։

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆ ԵՒ ՈՒԹՆԵՐՈՐԴ,

Յաղագս հոլովմանց դերանուանցս. Ես, Դու, Նա ; Այս, Իմ, Որ, ըստ որում պարունակին մնացեալքն ։

Դերանունս այս Ես, որ նշանակէ զառաջին դէմս ։

Այսպէս հոլովի ։

| Եզական ։ | Յոգնական ։ |
|---|---|
| Ուղղ ։ Ես ։ | Ուղղ ։ Մեք ։ |
| Սե ։ Իմ ։ | Սե ։ Մեր ։ |
| Տր ։ Ինձ, կամ առիս ; | Տր ։ Մեզ, կամ առմեզ ; |
| Հայ ։ զիս ։ | Հայ ։ զմեզ ։ |
| Բաց ։ յինէն ; | Բաց ։ 'ի մէնջ ։ |
| Պատ ։ զինէն ։ | Պատ ։ զմէնջ ։ |
| Գործ ։ ինեւ ։ | Գործ ։ մեօք ։ |
| Պար ։ զինեւ ։ | Պար ։ զմեօք ։ |
| Ներ ։ յիս ։ | Ներ ։ 'ի մեզ ։ |

Դերանունս այս Դու ; որպատկանի առերկրորդ դէմս ;

Այսպէս հոլովի ։

| Եզական ։ | Յոգնական ։ |
|---|---|
| Ուղղ ։ Դու ։ | Ուղղ ։ Դուք ։ |
| Սե ։ քո ։ | Սե ։ Ձեր ։ |
| Տր ։ քեզ, առ քեզ ։ | Տր ։ Ձեզ, առ ձեզ ։ |

Հայ ։

| | |
|---|---|
| Հայ ։ զքեզ ։ | Հայ ։ զձեզ ։ |
| Բաց ։ 'ի քէն ։ | Բաց ։ 'ի ձէնջ ։ |
| Պատ ։ զքէն ։ | Պատ ։ զձէնջ ։ |
| Գոր ։ քև ։ | Գոր ։ ձևօք ։ |
| Պար ։ զքև ։ | Պար ։ զձևօք ։ |
| Ներ ։ 'ի քեզ ։ | Ներ ։ 'ի ձեզ ։ |
| Կոչ ։ ով դու ։ | Կոչ ։ ով դուք ։ |

Դերանունս այս իւրեան որ պատկանի առ երրորդ դէմս
այսպէս հոլովի ։

| Եզական ։ | Յոգնական ։ |
|---|---|
| | Ուղ ։ իւրեանք ։ |
| Սե ։ իւր ։ իւրեան ։ | Սե ։ իւրեանց ։ |
| | Տր ։ իւրեանց, ցիւրեանս ։ |
| | Հայ ։ զիւրեանս ։ |
| Բաց ։ յիւրմանէ ։ | Բաց ։ յիւրեանց ։ |
| Պատ ։ զիւրմանէ ։ | Պատ ։ զիւրեանց ։ |
| Գոր ։ իւրեամբ ։ | Գոր ։ իւրեամբք ։ |
| Պար ։ զիւրեամբ ։ | Պար ։ զիւրեամբք ։ |
| Ներ ։ նիւրեան ։ | Ներ ։ նիւրեանս ։ |

Իսկ ուղղականն եզականին և այլոց մնացելոց հոլովս ոչ ունի ։

Դերանունս այս ցուցական Սա,
այսպէս հոլովի ։

| Եզական ։ | Յոգնական ։ |
|---|---|
| Ուղ ։ Սա ։ | Ուղ ։ Սոքա ։ |
| Սե ։ սորա, և սորին ։ | Սե ։ սոցա և սոցին ։ |
| Տր ։ սմա ։ և սմին, ցսա ։ | Տր ։ սոցա, ցսոսա ։ |
| Հայ ։ զսա ։ | Հայ ։ զսոսա ։ |

Բաց ։

Բաց: ՚ի սմանէ ։ | Բաց: ՚ի սոցանէ, ՚ի սոցունց ։
Պատ: զսմանէ ։ | Պատ: զսոցանէ, զսոցունց ։
Գոր: սովաւ, սովիմբ, սովին ։ | Գոր: սոքօք ։
Պար: զսովաւ, զսովիմբ, զսովին ։ | Պար: զսոքօք ։
Ներ: ՚ի սմա, ՚ի սմին ։ | Ներ, ՚ի սոսա, ՚ի սոսին ։

Ընդ այսու հոլովմամբ պարունակին Դա, և Նա ։ որ-պէս, Դորա, դմա ։ զդա, ՚ի դմանէ, դովաւ և այլն ։ նորա, նմա, զնա, ՚ի նմանէ, նովաւ, և այլն ։

Դերանունս այս ցուցական Այս, հոլովի այսպէս ։

| Եզական ։ | Յոգնական ։ |
|---|---|
| ՈՒղ: Այս ։ | ՈՒղ: Այսոքիկ ։ |
| Սե: այսր, այսորիկ ։ | Սե: այսոցիկ, այսց ։ |
| Տր: այսմ, այսմիկ ։ | Տր: այսոցիկ առ այսոսիկ ։ |
| Հայ: զայս ։ | Հայ: զայսոսիկ ։ |
| Բաց: յայսմանէ ։ | Բաց: յայսոցանէ ։ |
| Պատ: զայսմանէ ։ | Պատ: զայսոցանէ ։ |
| Գոր: այսու, այսուիկ ։ | Գոր: այսոքիւք ։ |
| Պար: զայսու, զայսուիկ ։ | Պար: զայսոքիւք ։ |
| Ներ: յայսմիկ ։ | Ներ: յայսոսիկ ։ |

Ընդ այսու հոլովմամբ պարունակին, Այդ, և Այն ։ որպէս, այդորիկ, այդմիկ, զայդ, յայդմանէ, այդու ։ և այլն ։ այնո-րիկ, այնմիկ, զայն, յայնմանէ, այնու ։ և այլն ։

Դերանունս այս ստացական Իմ, հոլովի այսպէս ։

| Եզական ։ | Յոգնական ։ |
|---|---|
| ՈՒղ: Իմ ։ | ՈՒղ: Իմք, Իմոյք ։ |
| Սե: Իմոյ ։ | Սե: Իմոց, Իմոյց ։ |
| Տր: Իմում, առ իմն ։ | Տր: իմոց, առ իմս ։ |

Հայ ։

| | |
|---|---|
| Հայց: զիմ: | Հայց: զիմս, զիմոյս: |
| Բաց: յիմէ: | Բաց: յիմոց, յիմոյց: |
| Պատ: զիմէ: | Պատ: զիմոց: զիմոյց: |
| Գործ: իմով. | Գործ: իմովք; |
| Պար: զիմով: | Պար: զիմովք: |
| Ներ: նիմում: | Ներ: նիմս: |
| Կոչ: ով իմ: | Կոչ: ովիմք, իմոյք: |

Ըստ այսու հոլովմանց պարունակին քո, իւր, մեր, ձեր, որգոն, քոյոյ, քում, զքո, 'ի քումէ, քոյով, և այլն:
իւրոյ, իւրում, զիւր, յիւրմէ, իւրով, և այլն:
մերոյ, մերում, զմեր, 'ի մերմէ, մերով, և այլն:
ձերոյ, ձերում, զձեր, 'ի ձերմէ, ձերով, և այլն:

Դերանուանս այս յարաբերական Որ, հոլովի այսպէս:

| Եզական: | Յոգնական: |
|---|---|
| ՈՒՂ: Որ: | ՈՒՂ: Որք: |
| ՍԵՌ: որոյ: | ՍԵՌ: որոց: |
| ՏՐ: որում, առ որ: | ՏՐ: որոց, առ որս: |
| Հայց: զոր: | Հայց: զորս: |
| Բաց: յորմէ: | Բաց: յորոց: |
| Պատ: զորմէ: | Պատ: զորոց: |
| Գործ: որով: | Գործ: որովք: |
| Պար: զորով: | Պար: զորովք: |
| Ներ: նորում: | Ներ: նորս: |
| Կոչ: ով որ: | Կոչ: ով որք: |

Իսկ մնացելոց դերանուանց ոմանք ոչ հոլովին, որպիսիք են, ս, դ, ն: այլ միայն նոյնպէս ընդ բնաւս հոլովս մասանց բանի, ընդ որս և շարակցին: որգոն, իմս, քոյդ, իւրն: իմոյս, քոյոյդ, իւրոյն: իմումս, քումդ, իւրումն: ընթերցօղս, ընթեր

ցողդ

ցօղք, ընթերցօղս։ ընթերցողիս, ընթերցողիդ, ընթերցողին։ ընթերցողիւս, ընթերցողիւդ, ընթերցողիւն, և այլն։

Ոմանք թէպէտ և հոլովին բայց ըստ անուանց, որպիսիք են, ինքն, ինքեան, առինքն, զինքն, ինքեամբ, յինքենէ, նինքեան և այլն, ոպ արիւն, արեան։

Սոյն, դոյն, նոյն; սոյնոյ, դոյնոյ, նոյնոյ; սոյնով, դոյնով, նոյնով; 'ի սոյնոյ, 'ի դոյնոյ, 'ի նոյնոյ, և այլն, ոպ նիւթ, նիւթոյ։

Իմային, մերային, քոյին, ձերային, իւրային։ իմայնոյ, մերայնոյ, քոյնոյ, ձերայնոյ, իւրայնոյ, և այլն, ոպ նիւթ, նիւթոյ։

Իւրական, ինքնական, նոյնական; իւրականի, ինքնականի, նոյնականի, և այլն ոպ Միտ, մտի։

Բայց գիտելի է, զի դերանուանք մինչ բաղադրին ընդ այլոց դերանուանց հոլովին ըստ նոցին, որգոն իւրաքանչիւր, իւրաքանչիւրոյ, իւրաքանչիւրում։ իւրաքանչիւրով, և այլն։ ինքնինքն, ինքնինքեան, ինքնյինքենէ, ինքն ինքեամբ։

Իսկ մինչ բաղադրին ընդ անուանց, հոլովին ըստ անուանց, որգոն, նոյնագոյ, նոյնագոյի, նոյնագոյիւ, 'ի նոյնագոյէ։ ինքնակայ, ինքնակայի, ինքնակայիւ, յինքնակայէ, և այլն։ Բայց ըն բաղադրութիւս այսոսիկ ոպ տեսանես, վերջինն միայն հոլովի, և նախկինն մնայ ըն կացութե իւրում։

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆ ԵՒ ԻՆՆ ԵՐՈՐԴ։

### Յաղագս Հոլովմանց Ընդունելութեց։

Զընդունելութեց դոյն ինչ խօսեցաք ընհոլովմունս անուանց, և ըն լծորդութիս բայից, զորոց և լրապէս ծանուցցեմք ներկրորդում հատորին, իսկ աստ առ 'ի համառօտել զհոլովմունս նոցին 'ի միաս ուսումնասիրաց ասեմք, թէ ընդունելութիւնք որք եղերին

՚ի օղ, հոլովին ոպ͞ բան, բանի։ որգոն. Սիրօղ, սիրողի, ՚ի սիրօղ, զսիրօղ, ՚ի սիրողէ, սիրողիւ, և այլն։

Եւ որք եղերին ՚ի եալ, հոլովին ոպ͞ նիւթ, նիւթոյ, որգոն, սիրեցեալ, սիրեցելոյ, ՚ի սիրեցեալն, զսիրեցեալն, ՚ի սիրեցելոյ, սիրեցելով, ընդ սիրեցելում, և այլն։

Որք եղերին ՚ի ելի, հոլովին ոպ͞ Ոսկի, ոսկւոյ, որգոն, սիրելի, սիրելւոյ, ՚ի սիրելին, զսիրելին ՚ի սիրելւոյ, սիրելւով, ընդ սիրելւում, և այլն։

Իսկ որք եղերին ՚ի լոց, ոչ հոլովին, եթէ ոչ ընդ տեղի կարի հարկաւորս, առ ՚ի պարզել զդիտաւորութի, շարադրութե, որգոն ելոց, ելոցի։ ելոցք, ելոցաց, և այլն։

## ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆ ԵՐՈՐԴ.

### Յաղագս Նախադրութեց։

Նախադրութեց ոմանք են հոլովականք, և են այսոքիկ, ՚ի, ՚յ, ՚առ, ՚ց, ՚զ, ՚ներ, ՚ն, ՚ըն, ՚ընդ։

Ոմանք են ընդարձակք, և են այսոքիկ, Ստորև, ներքոյ, ՚ի ներքոյ, ՚ի վերա, ՚ի վերոյ, ՚ի մէջ, ՚ի միջի, արտաքոյ, զկնի, յետ, յետոյ, առաջի, վասն, յաղագս, յաղագաւ, սակս, փոխանակ, ընդ, հետ, առ ընթեր, հուպ, մօտ, մերձ, Թարց, առանց, ըստ, մինչև, յանդիման, հանդէպ, դէպ, որպէս, իբրև, քան, բաց, զատ, մեկուսի, հանդերձ, շուրջ, ընդաջմէ։

Եւ ոմանք են բաղադրականք, որք են այսոքիկ, ան, ապ, տը, ենթ, ստոր, վեր, արտ, տրամ, տար, համ, շար, փաղ, հակ, ըստ, առ, բաղ, անդր, վայր, ներ, յար, փոխ, շաղ, հոմ, վեհ, դեր, բակ, փար, մէջ, մակ, ընդդէմ, գեր, հետ, և այլք։

Զայսցանէ բնաւից խօսեսցուք լրագէս, ներքոգրում

հա

հատորին, մինչ շարագրեսցուք զհոլովառութեանց մասանց բանի ։

## ԴՐԱԿ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ,
### Յաղագս Մակբայից ։

Մակբայից ոմանք են տեղականք ; և են այսոքիկ, ու՞ր, աստ, անդ, աստանօր, այդրանօր, անդանօր, ուրուրեք, յամենուրեք, այլուրեք, ուրեքուրեք ։ յո՞, ՚ի վեր, ՚ի վայր, ՚ի ներքս, յարտաքս, այսր, այդր, անդր ։ Ուստի՞, աստուստ, այդրուստ, անդուստ, աստի, այդի, անտի, ՚ի վերուստ, ՚ի ներքուստ, ՚ի բացուստ, ՚ի ստորէ, ՚ի հեռուստ, ՚ի մերձուստ, և այլք ։

Ոմանք են ժամանակականք, և են այսոքիկ, ե՞րբ, յորժամ, այժմ, արդ, ցարդ, այժմիկ, յայնժամ, այսօր, սերկ, ՚ի վաղնջուց, ՚ի վաղորդայն, երէկ, եռանդ, հեռու, միշտ, ցանկ, յաւէտ, երբեմն, երբէք, մերթ, առժամայն, դեռ, տակաւին, դեռևս, մինչ, մինչդեռ, մինչտակաւին, մինչդեռտակաւին, իբրև, չև, չևևս, վաղ, վաղուրեմն, շատուց ։ և այլք ։

Ոմանք են որականք, և ունին զայսոսիկ, զներքառորութիս, բար, պէս, օրէն, արէն, էրէն, ակի, ացի, ուք, գին, ո՞րգոն, մարդկաբար, իմաստնապէս, յանկարծօրէն, յունարէն, հայերէն, ուղղակի, աքացի, բարւոք, լաւագին, և այլք ։

Ոմանքեն քանականք, և են, այսոքիկ, ո՞րքան, ո՞ր չափ, այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, մի անգամ, երկուանգամ, երեքանգամ, երկիցս, երիցս, չորիցս, քանիցս, քանիցս անգամ, այսքանիցս, այդքանիցս, այնքանիցս, բազմիցս, բազումանգամ, շատ, փոքրինչ, սակաւինչ, դոյնինչ, պակաւինկինչ, սակաւ, սակաւ առասակաւ, սա_

կաւ , տակաւ տակաւ , և այլք ։

Ոմանք են հարցականք , և են այսոքիկ , ե՞ր , ընդէ՞ր , զմի՞ մի՞ էր , զի արդ , ո՞րպէս , ո՞չ ապաքէն , ո՞չ արդեօք , հիմ , հիմարդեօք , հիքար , հիկէն , ո՞րքան ։ և այլք ։

Ոմանք են սաստականք , և են այսոքիկ ; այո , այդպէս , իրաւի , ճշմարտապէս , հաւաստեաւ , արդարև , ստուգիւ , ամէն , հա ։ և այլք ։

Ոմանք են բացասականք , և են այսոքիկ , ոչ , չէ , չ , չիք , ոչ իւիք , ոչ երբէք , ոչ բնաւ , ոչ բնաւ երբէք , ոչ միով իւիք , բնաւ մի լիցի , քաւ լիցի , մի՛ երբէք , ոչ ինչկերպիւ , չէ ամենևին , չիք բնաւին ։ և այլք ։

Ոմանք են զատականք ; և են այսոքիկ , 'ի բաց , 'ի զատ , 'ի տար , 'ի մերձ , առանձին , առանձնակի , բացատ , որոշակի , ջոկակի , երկակի , մի՛ակի , մի՛ մի , երկու երկու ։ և այլք ։

Ոմանք են ծածկականք , և են այսոքիկ , ծածուկ , 'ի ծածուկ , գաղտ , գաղտնի , կամխլաբար , ծածկաբար , լռապէս , անմռունչ , անշուշտ , և այլք ։

Ոմանք են յայտականք , և են այսոքիկ ; յայտ , յայտնի , յայտնապէս , լուիլու , հրապարակաւ , յայտայանդիման , հուչկորէն ։ և այլք ։

Ոմանք են երագականք , և են այսոքիկ , արագ , երագ երագ , շուտ , շուտաշուտ , ստէպ , ստէպստէպ , փոյթ ընդ փոյթ , փոյթընթաց , վաղվաղ , վաղվաղակի , փութանակի , կանուխ , ճեպ , և այլք ։

Ոմանք են դասականք , և են այսոքիկ , նախ , երկրորդ՝ , երրորդ , այսուհետև , յապա , յետոյ , յետայսորիկ , հուսկյետոյ , զկնի այսորիկ , միջասմիջէ , միատի , կարգաւոր , և այլք ։

Ոմանք են ցուցականք , և են այսոքիկ , ահա , ահաւասիկ , ահաւանիկ ։ և այլն ։

Ոմանք

Ոմանք են ժողովականք, որպէս այսոքիկ, ՚ի միասին, միանգամայն միահաղոյն, ընդհանրապէս, համակ, համօրէն, առհասարակ, ամենեւին, բոլորովին, բնաւին, բովանդակ, երամ երամ, ջոկ ջոկ, եւ այլք:

Ոմանք են երկբայականք, որպէս այսոքիկ, արդեօք, թերեւս, գուցէ, գուցէ երբէք, գուցէ արդեօք, մի թէ, մի՛ գուցէ, թերեւս արդեօք, եւ այլք:

Ոմանք են կրկնականք որպէս այսոքիկ, կրկին, կրկին անգամ, վերստին, անդրէն, միւսանգամ, դարձեալ, եւ այլք:

Ոմանք են յաճախականք որպէս այսոքիկ, խիստ, առ, կարի, յոյժ, կարի յոյժ, յորդ, յորդապէս, սաստիկ, խոյառ, բնաւ, եւս քան զեւս, եւ այլք:

Ոմանք են նախընտրականք, որպէս այսոքիկ, մանաւանդ, մանաւանդապէս, յաւէտ, առաւել, առաւելապէս, նախապէտաբար, եւ այլք բազումք, այնքան տեսակք, որքան պարունակեցեալք ընդ նոքօք:

Ոմանք են արգելականք որպէս այսոքիկ, մի, մի եւս, մի եւ մի:

## ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԵՐՈՐԴ:

### Յաղագս Միջարկութեց:

Միջարկութեց ոմանք են ողբականք, որպէս այսոքիկ, երանի, վաշ, վաշվաշ, օշ, մարտան, եւ այլք:

Ոմանք են զարմացականք, որպէս այսոքիկ, ո՜, ո՜վ, բա՜բէ, եւ այլք:

Ոմանք են հոշականք, որպէս այսոքիկ, վա՜հ, հա՜հ, ահ, հէհ, իհ, եւ այլք:

Ոմանք են եղկականք, որպէս այսոքիկ, վայ, աւաղ, եղուկ, վաշ, եւ այլք:

Ոմանք

Ոմանք են տրտմականք, և են այսոքիկ, ահ, վախ, ափսոս, աւաղ, և այլք :

Ոմանք են խնդականք, և են այսոքիկ, հայթէ ; ահթէ ; և այլք :

Ոմանք են յորդորականք, և են այսոքիկ, հապա, աղէ, և այլք :

# ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ԵՐԵՔ ԵՐՈՐԴ :

## Յաղագս Շաղկապից :

Շաղկապից ոմանք են բաղականցականք, և են այսոքիկ, և, ևս, ևևս, այլև, այլևս, նաև, նաևս, իսկ, իսկև, դարձեալ, և այլք :

Ոմանք են տրոհականք, և են այսոքիկ, կամ, կամ թէ, այլ, իսկ, բայց, սակայն, այլսակայն, բայցսակայն, իս արդ, արդ, և այլք :

Ոմանք են մեկնականք, և են այսոքիկ, զորօրինակ, իբր գաղափարաւ, այսինքն, իբր, իբրթէ, և այլք :

Ոմանք են մակաբերականք, և են այսոքիկ, ուրեմն, ապա, ապա արդ, ապաքէն ապաուրեմն, արդուրեմն, և այլք :

Ոմանք են թէականք, և են այսոքիկ, թէ, եթէ, ապաթէ, յանկ թէ, այլ թէ, եթէ ոչ, թէ ոչ, ապաթէոչ, և այլք :

Ոմանք են պատճառականք, և են այսոքիկ, զի, քանզի, վ՟ զի, ո՟ զի, մինչ զի, սակս զի, վ՟ այսորիկ, վասնայնորիկ, վ՟ որոյ, սակս որոյ, յաղագս որոյ, յաղագս այնորիկ, և այլք :

Ոմանք են փաստաւականք, և են այսոքիկ, թէ, որ, զի քա՛, և այլք :

# ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ,

Յաղագս Սահմանաց, եղերաց, տեսակաց, և պարագայից նորին:

## Գլուխ Առաջին,

Յաղագս Սահմանի քերականութեան և պարագայից նորին:

Քերականութիւն է արհեստ ուղղապէս խօսելոյ: Իսկ ուղղախօսութիւն պարունակէ ընդ ինքեամբ զերկուս, այսինքն զբարւոք տեղեկութիւն եղերաց, և զբարւոք տեղեկութիւն նոցին շարամանութեան: քան զի յայսոսիկ կայանայ քերականութիւն:

Գլուխք քերականութեան են համառօտութիւնք հմտից լեզուագիտաց, զի երկասիրութեամբ նոցին հնարեցեալէ, և հնարի ուղղախօսութիւն:

Ենթակայ քերականութեան է միտն մարդկային, զի ի նմա յարահանգի և յարահանգչիլ կարէ ծանօթութիւնս այս արհեստական:

Առարկայ քերականութեան է խօսն մարդկային, զի շուրջ զնովաւ պարաբերի ուղղութիւն նորին գործնական: Ուստի խօսն ուղղաւոր, առէ յինքեան զերկուս, այսինքն զձայնանշանական, որէ նիւթ, և զուղղութիւն կրաւորական, որէ կերպ: Վախճան քերականութեան է ներկրթելն զմիտս մարդկայինս

'ի հաս

՚ի հասկացողութիս ուղիղս համայնից շարադրութեց, ՚ի զրուցատրութիս և յարմարադրութիս պատեհս, նաև ՚ի շարադրակետութիս անսխալս ։ Գիտանաւորութի քերականութեն է կրկին. հոգեկան և մարմնական ։ Հոգեկանն է՛, զի ձեռնտուութե՛ նորին կարէ ոք ապահովապէս իմանալ զմիտս գրեանց ա̃ծայնոց, և ըստ նոսին կենցաղավարիլ, և վարժել ևս զայլս ՚ի պատուիրանս ա̃ծայինս և ՚ի ճանապարհս կեցութե ։ Իսկ մարմնականնէ, զի նպաստութե՛ նորին կարէ ոք ատենաբանել և արտադրել զգրեանս ՚ի յօգուտ ինքեան և հայրենոյն իւրոյ, և հետևապէս առստանալ զբարեհամբաւութիս ՚ի մէջ ուսումնասիրաց ։

Այլ որով հետև առարկայ քերականութեն է՛ խօսն մարդկային ուղ՛ ասացաք, իսկ խօսն բաղկանայ ՚ի բառից, և բառն ՚ի վանկից, և վանկք ՚ի տառից, Ուրեմն աստանօր վայելուչ է խօսիլ զտառից հայկազունեաց ։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ։

## Յաղագս սահմանի և բաժանման տառից ։

ՏԱՌՆԷ հնչումն յօդելի ; Իսկ գիրն է գիծնշան տառի, քան զի առ ՚ի նշանակել զտառս հնարեցեալք են գիրք ։

Որք և առհայկազինս են Թուով քառասուն, այսինքն ։ ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց. ւ. փ. ք. և. օ. ֆ. ու ։ Իսոցանէ ութն են ձայնաւորք, այսինքն, ա. ե. է. ը. ի. ո. օ. ու ։ Եւ ձայնաւորք ասին, զի ըստ ինքեանց պարզապէս ելուզանին ։

Եւ

Եւ երկուքեն հասարակք, այսինքն, յ. և ւ: Քանզի Յ, 'ի սկզբան բառից կամ վանկից, է' բաղաձայն, որգոն, յոյս, յոշ, յար, յեղ: և այլն:

Իսկ 'ի մէջ բառից եղավանկից և 'ի մէջ վանկից վերջնոց: յետկոյս վանկից նախընթացից, և յետկոյս բառից եղավանկից, է' ձայնաւոր: 'Ի մէջ բառից որգոն, ծայր, խոյր, կոյր, յոյր; և այլն:

'Ի մէջ վանկից վերջնոց, որգոն, սա, կայն, ող, Ջոյն, իս, կոյն, և այլն:

Յետկոյս վանկից նախընթացից որգոն, նայ, եայց: վայ, ըի, այ, նու: և այլն:

Իսկ յետկոյս բառից եղավանկից, որգոն, հայ, բայ, խոյ; և այլն: Բայց 'ի սոցունց արտաքոյքն, քոյ, գոյ, կայ, տայ, լայ, և այլն:

Յ, յետկոյս բառից յոգնավանկից ոչ ձայնաւոր առն, և ոչ բաղաձայն, զի ոչ երբէք արտաբերի, որգոն, քահանայ, յուդայ, ցնծայ, մնայ, և այլն:

Այլ գրի միայն, կամ առ'ի զանազանել զսեռականն 'ի յանուանականէն, որգոն զաքարիա, զաքարեայ: մաղաքիա, մաղաքեայ: Կամ առն զանազանել զհասարակ անուանն 'ի յատկէն, որգոն, Սափիրա, ծառայ: Սոփոնիա, քահանայ: Եւ կամ առն զանազանել զբայն սահմանական 'ի հրամայականէն, որգոն, խնդայ, խնդա: ցնծայ, ցնծա: մնայ, մնա: և այլն:

Ւ. զկնի ձայնաւորի նախադասել զ բաղաձայն է' ձայնաւոր, որգոն, պետւն, հուն, անկիւն, և այլն:

Իսկ 'ի մէջ երկուց ձայնաւորաց, կամ մինչ եղերէ զվանկս; է բաղաձայն:

'Ի մէջ երկուց ձայնաւորաց որգոն, հաւատար, հեւանդ, թուական, լեզուանի, և այլն:

Մինչեզերէ զվանկս որգոն, Թիւ, բաւ, բանիւ, և այլն:
Իսկ մնացեալքն 'ի տառիցն են բաղաձայնք, քան զի ոչ ըստ ինքեանց, այլ ընդ այլոց բաղակցաբէս ելուզանեն,

## ԴՐԱԽԿ ԵՐՐՈՐԴ:

### Յաղագս սահմանի և բաժանման վանկից:

Վանկն է մի հնչումն ելուզեցեալ: որգոն, Թա, գա, ւոր: Ասացի մի հնչումն ելուզեցեալ, է զի որինչ միով հնչմամբ արտաբերի 'ի բերանոյ, զգայոյ է վանկ, և ըստ այսմ համայնք տառք ձայնաւորք, որք միով հնչմամբ ելուզանին են վանկք, բայց ոչ ըստ ոլուլ են յօդելիք: Իսկ տառք բաղաձայնք ոչ երբէք վանկանան ըստ ինքեանց որով հետև ոչ կարեն ելուզանել Թարց բաղակցութե:

Ասեմք ուրեմն Թէ վանկից ոմանք են միատառք, որգոն, ա. ե. է. ը. օ. ու: Եւ ոմանք են յոգնատառք, որգոն, բար, բառ, եալ, խօ, սե, ցաւ: և այլն:

Ոմանք են միաբարբառք, որգոն, չա, հա, ւէտ: Եւ միաբարբառք ասին, զի միով պարզիւ հնչմամբ արտաբերին:

Եւ ոմանք են երկբարբառք, որգոն, հայր, կեան, եօԹն, կոյս, իւր: Եւ երկբարբառք ասին, զի երկուքումբք ձայնաւորօք իբր միով արտաբերին:

Ոմանք են նշանակիչք, իրաց որգոն, է, մարդ, բան: Եւ նշանակիչք իրաց ասին, զի զէութի ինչ առանձնապէս նշանակեն:

Եւ ոմանք են դոյչինչ նշանակօղք, որգոն, ա. պա, ան: Եւ դոյչինչ նշանակօղք ասին, զի ըն հայկաբանութե դոյչինչ էութի առանձնապէս նշանակեն:

Եւ

Եւ գիտելի է զի վանկք որք զինչ նշանակեն, են՚ նմա-
սին վանկք, և բառք, զո՞ր օրինակ, մարդ, և բանն, առանձնա-
պէս առեցեալք, են բառք։

Իսկ մինչեն ըն բաղադրութե՛, որգոն մար, դա, սեր։
բա, նաս, տեղծ, են վանկք։ Բայց վանկք որք զոչինչ նշանակեն
ըն հայկաբանութե՛, են միայն վանկք, այլ ո՛չ բառք։

Գիտելի է ևս, զի ոչք ՚ի բաղաձայնից թէ առանձին, և
թէ ընդ այլում բաղաձայնի կարէ բաղկացուցանել զվանկս
առանց ձայնաւորի։ Ուստի յամուլ վանկոջ գոն ձայնաւորք,
կամ զօրութ՟ և կամ ներգործութ՟։

Զօրութ՟ որգոն, նմ, ջեցեալ։ տխ, մար։ կտ, տամահ։
քան զի ՚ի սոսա գոյ զօրութ՟ ձայնաւորս այս. ը. որգոն նըմ
ջեցեալ։ տըխմար։ կըտտամահ։ Սակս որոյ և մինչ կամին
գրագիրք ըն վերջնում տողին բաժանել զբառս, նոքա գոն
երկու բաղաձայնք ՚ի միասին, շարանկցեն ընդ առաջնոյ բա-
ղաձայնին զձայնաւոր իւմն ներքեր տողին, և զերկրորդ բաղա-
ձայնն մնցուցանեն ՚ի սկիզբն միւսոյ տողին, և յայնժամ ձայ-
նաւորն որ գոյր նախ զօրութ՟ լինի ներգործութ՟, որգոն,
ոը, կար։ խը, օատ։ Իսկ ներգործութ՟ որգոն, շա, րակ,
եալ։ և այլն։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

### Յաղագս սահմանի և բաժանման բառից։

ԲԱՌՆ է ձայն նշանական, որգոն, մարդ, սիրել, ընդ,
դու։ ԲԱռ ասացի նշանական, զի ամ ասութի պարտի
զինչ նշանակել, կամ առ նշանակել։

Բառից ոմանք են եզավանկք, որգոն. է. դոյ, մարդ.
բան, յոյս, կոյս։ և այլն։

Եւ ոմանք են յոգնավանկք, որգոն, Հայկ, գեղյացութիւն, մարդկային, բանական, յուսադրել, կուսական: Եւ այլն:

Ոմանք են պարզք, որգոն, ուսումն, յառաջ, բայց, քան, ձեւ: Եւ այլք: Եւ պարզք, ասեն զի ոչ են բաղադրեցեալք ընդ այլոց բառից:

Եւ ոմանք են բարդք, որգոն, ուսումնասէր, յառաջադրել, բայցսակայն, քանզի, խոկարդ: Եւ այլն: Եւ բարդք ասեն, զի են երկու բառք, բարդեցեալք ՚նմիասին:

Իսկ ոմանք են յարաբարդք, որգոն ուսումնասիրայարդ: շարալծակցութիւն: փառաբանակցել, բայց քանզի: Եւ այլք: Եւ յարաբարդք ասեն զի են բազումք բառք յարաբարդեցեալք ՚նմիասին:

Ոմանք են նախադաղափարք, որգոն, ծով, ընծայել, նոյն. Եւ նախադաղափարք ասեն, զի զէութիւն իւրաց նախնակ նշանակեն:

Եւ ոմանք են ածանցականք, որգոն, ծովային, ընծայեցուցանել, նոյնական: Եւ ածանցականք ասեն, զի զէութիւն իւրաց երկրորդապէս նշանակեն, քան զի են յառաջածեցեալք յայլոց բառից:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳ ԵՐՈՐԴ,
### Յաղագս բանի:

Բանն է շարամանութիւն բառից յայտնօղ տրամախոհութեան, որգոն: Եկեղեցի է գումարումն հաւատացելոց ընդ միով հովուիւ օրինաւորիւ: Ասացի յայտնօղ տրամախոհութեան, քան զի բազմիցս թէպէտ շարամանեն բառք ՚նմիասին, բայց ոչ յայտնեն զտրամախոհութիւն, այլ միայն զպարզ յղացումն մտաց, որգոն, պետրոս

Աւօ

և Պօղոս ։ Յակոբոս Ալփեան ։ այր իմաստուն ։

Բանն բաժանի 'ի կատարեալն և յանկատարն ։ Կատարեալ որգոն. Ես եմ Տէր Աստուած քո ։ Մարդն է կենդանի բանական ։ Եւ ասի կատարեալ, զի զամբողջ յղացումն մտաց արտայայտէ ։ Իսկ անկատար որգոն ։ Եթէ չէր իմ տեսեալ զպետրոս ։ Եւ ասի անկատար, զի զմասնական յղացումն մտաց արտայայտէ ։

Բանի մասերք են ութն ։ Այսինքն. Անուն, Բայ, Դերանուն, Ընդունելութիւն, Նախադրութիւն, Մակբայ, Միջարկութիւն, և Շաղկապ ։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

Յաղագս սահմանի Անուան և պարագայից նորին ։

Անունն է մասն բանի, որ զէութիւն իրաց նշանակէ ։ որգոն, Աստուած, էակ, ստեղծուած, երկին, երկիր ։ և այլն ։

Ասացի թէ զէութիւն իրաց նշանակէ, քանզի մինչ լսեմք ։ ԱՍՏՈՒԱԾ ։ զէութիւն իմն անհուն, յաւիտենական, ամենակարող, և ամենաբարի 'ի միտ ածեմք ։ և այլն ։

Անուանց ոմանք են յատուկք, ոմանք հասարակք, և ոմանք հաւաքականք ։

Յատուկք որգոն, Պետրոս, Պօղոս ։ մարթայ, հռիփսիմէ ։ գաբրիէլ, միքայէլ ։ Եւ յատուկք ասին, զի զանհատ էութիւն իմն յատկապէս նշանակեն ։

Հասարակք որգոն, մարդ, հրեշտակ ։ Եւ հասարակք ասին, զի զընդհանուր էութիւն իմն հասարակապէս նշանակեն ։ քան զի մարդն ոչ միայն զՊետրոս, այլ և զՊօղոս, և զայլս անհատս ընդ ինքեամբ պարունակէ ։ Այսպէս հրեշտակն, ոչ միայն զգաբրիէլ, այլ և զմիքայէլ և զռափայէլ և զայլս հրեշտակս ընդ ինքեամբ պարունակէ ։

Հաւա-

Հաւաքական որգոն, ժողովուրդ, ազն, ամբոխ: Եւ հաւաքականք ասին, որ եզականաւ թուով զբազմութիւն ինչ ժողովապէս նշանակեն:

Ոմանք են գոյականք, եւ ոմանք ածականք; Գոյականք որգոն, մարդ, քար, տունկ, մարմին, եւ այլն:

Եւ գոյականք ասին, որ ըստ ինքեանց կարեն կայանալ ի բանի:

Ածականք որգոն, բանական, սպիտակ, կանանչ, անկենդան, եւ այլք: Եւ ածականք ասին, որ ըստ ինքեանց ոչ կարեն կայանալ 'ի բանի թարց գոյականաց: Քան զի մինչ լսեմք բանական, ինկոյն զմարդն իմիտ ածեմք նորուն գոյ բանականութիւն: Եւ յորժամ լսեմք սպիտակ, ինկոյն կամ զքար, կամ զձիւն, կամ զթուղթ եւ կամ զայլինչ 'իմիտ ածեմք, նորս գոյ սպիտակութիւն: այսպէս եւ այլն:

Ոմանք են դրականք, ոմանք բաղդատականք, եւ ոմանք գերադրականք: Դրականք որգոն, խոնարհ, սպիտակ, քաղցր, բարի, չար, փոքր: Եւ դրականք ասին, որ զէութիւն իմն ը դարձակապէս եւ պարզապէս նշանակեն:

Բաղդատականք որգոն, խոնարհագոյն, սպիտակագոյն, քաղցրագոյն, բարեգոյն, չարագոյն, փոքրագոյն: Եւ բաղդատականք ասին որ զիրինչ համեմատեցեալ ընդ այլոց ըստ ճոխութեան կամ ըստ նուաստութեան նորին նշանակեն: զոր օրինակ, եթովպացին է սեաւ, բայց արաբացին է սեւագոյն, այսինքն առաւել սեաւ:

Գերադրականք որգոն, խոնարհագունեղ, սպիտակագունեղ, քաղցրագունեղ, բարեգունեղ, չարագունեղ, փոքրագունեղ: Եւ գերադրականք ասին, որ զիր ինչ 'ի վեհագունի կամ 'ի ստորնագունի իմիք կացութեան նշանակեն: զոր օրինակ, հրեշտակք են նմանագոյնք քան զմարդիկ, իսկ ա̃ծ է ի-

մաստնա-

մասնագունեղ, այսինքն գերադրանց նմանութեան : Որպէս կապիկն է անբան, բայց ձին է անբանագոյն, եւ էշն է անբանագունեղ :

Բայց գիտելի է զի երբեմն ոմանք խոտորնականելով պգալղափարաւս այսու բաղդատականաց : Դոյն, վարին ածականաւ անուամբն : Որպէս, ուփոխանակ ասելոյ բարեգոյն, չարագոյն, ասեն, առաւել չար : Որպէս խոտորնականելով պգալափարան գերադրականաց, եղ, վարին անուամբ, ամենայն, ուփոխանակ ասելոյ բարեգունեղ, չարագունեղ, ասեն ամենաբարի, ամենաչար : Բայց այս ոչ միշտ, քանզի ոչ բարեպէս ասի ամենապիտանի : Եւ այլն :

Գիտելի է եւս զի համայնք անուանք որք ստորանկեն ընդ այսոքիւք ստորոգմանօք պարտին զոլ ածականք, այլոչ գոյականք, զի ոչ յարմարապէս ասի բար, բարագոյն, բարագունեղ: Թէեւ երբեմն բանաստեղծք առի պարզել զմիտս արտադրութեան ասիցեն մարդագոյն, մարդագունեղ, եւ այլն :

Անուանց ոմանք են նախադաղափարք, եւ ոմանք ածացականք : Նախադաղափարք որգոն, մարդ, ոսկի, բան : Եւ նախադափարք ասին զի են՝ իբր նախկին տիպք եւ արմատք ; այլոց յետնաբերեալց յառաջեկելոց : Ածանցականք որգոն, մարդկային, ոսկեղէն, բանական : Եւ ածանցականք ասին, զի են յառաջեկեալք յայլոց անուանց :

Բայց քանզի ածանցականք այսոքիւք ձուներեալ են անհունք: Ուստի տուին զաղափարք ոմանք առի դիւրապէս ճանաչնակել զնոյնս, որք են այսոքիւք : Որպէս, եան, ունի, ացի, եցի, ենի, ային, ոց, ուտ, ստան, ային, եայ, ի, ատ, ոտ, եղէն, ցու, ուն, ուձն, ուստ, ած, Թի, որդ, ուոյ, պան, ունի, ակ, եակ, ուկ, եղ, իչ, ուչ ոտի : Եւ այլք :

Որբան, որգոն նուաստքան, բնականքան, սաղմոսանքան ;

վար

վարժարան, կտակարան: և այլք:

Ական, որպէս, արքունական, իմաստասիրական, քաղաքական, զարմացական, գրական, և այլք:

Եան, որպէս, համաղասպեան, դաւթեան, եօթնաբփեան, երեքփեղկեան, և այլք:

Ունի, որպէս, արշակունի, աբքունի, բզնունի, պալհաւունի, ծործորունի: և այլք:

Ացի, որպէս, պոնտացի, սամարացի, վրացի, նապանիացի, կալլիացի, և այլք:

Եցի, որպէս, եբրայեցի, հռովմայեցի: և այլք:

Ենի, որպէս, հայրենի, վարդենի, նռնենի: և այլք:

Ոց, որպէս, ծաղկոց, դպրոց, վարդոց: և այլք:

Ուտ, որպէս, քարուտ, ծառուտ, մացառուտ: և այլք

Աստան, որպէս, հրէաստան, հայաստան, պարսկաստան, քուրդաստան, ձիաստան: և այլք:

Ային, որպէս, ոծային, երկնային, մարդկային: և այլք

Եայ, որպէս, քարեայ, պրտուեայ, ծաղկեայ: և այլք:

Ի, որպէս, արծաթի, պղնձի, խեցի: և այլք:

Ատ, որպէս, պնչատ, ձեռնատ, ականջատ: և այլք:

Ոտ, որպէս ձիթոտ, ցխոտ, իւղոտ: և այլք:

Եղէն, որպէս, հրեղէն, հողեղէն, մարմնեղէն: և այլք:

Պան, որպէս, պահապան, այգեպան, դռնապան: և այլք

Ցու, որպէս, մահկանացու, քահանայացու: և այլք:

Ուն, որպէս, ղուարթուն, սիրուն, պատարուն: և այլք:

Ումն, որպէս, առումն, աճումն, հատումն, և այլք:

Ուստ, որպէս, գալուստ, փախուստ, և այլք:

Ած, որպէս, տուած, ստեղծուած: և այլք:

Թիւն, որպէս, սրբութի, տեսութի: և այլք:

Որդ, որպէս, առաջնորդ, փոխանորդ: և այլք:

Իալ

Ւոր, որպէս, հոգևոր, միաւոր, հարկաւոր: Եւ այլք:
Ուհի, որպէս, տիրուհի. արքուհի, իշխանուհի: Եւ այլք:
Ակ, որպէս, դռնակ, սռնակ, պնակ, տապանակ: Եւ այլք:
Եակ, որպէս, որդեակ, դայեակ, ոսկեակ: Եւ այլք:
Ուկ, որպէս, քարուկ, ծնծղուկ, ջրուկ, կուրուկ: Եւ այլք:
Իկ, որպէս, արտուտիկ, ծիծեռնիկ, սարեկիկ: Եւ այլք:
Եղ, որպէս, զօրեղ, յատկեղ, ահեղ, մարմնեղ: Եւ այլք:
Իչ, որպէս, բրիչ, քաւիչ, փորիչ, ոսկերիչ: Եւ այլք:
Ուչ, որպէս, վայելուչ, տեսուչ: Եւ այլք:
Ոտի, որպէս, մեռելոտի, Թալկոտի: Եւ այլք:

## ԳԼՈՒԽ ԵՕԹՆ ԵՐՈՐԴ.

### Յաղագս Թուոց անուանց:

Թիւք անուանց են երկու, եզականն, և յոգնականն; Եզականն, որպէս, մարդ, արեգակն, դուստր: Եւ այլք: Եւ եզականք ասին, զի զմի իր միայն նշանակեն: Յոգնականն որպէս, մարդիկ, արեգակունք, դստերք: Եւ այլք:

Եւ յոգնականք ասին զի զբազումս իրս նշանակեն:

Բայց գիտելի է, զի գոյ սակաւ ինչ դժուարութիւն 'ի մէջ համբակացունց սակս ձևակերպման յոգնականաց անուանց հայկազունեաց: Ուստի 'ի դիւրութիւն նոցին շարագրեմք ըզ կանոնս հետևեալս:

Անուանք եզականք որք եզերեն 'ի ձայնաւորս, փոխարկեն 'ի յոգնականս առաւելութեամբ միոյ քէի, որպէս, ոսկի, ոսկիք: արծաթի, արծաթիք: ոգի, ոգիք: բու, բուք: երէ, երէք:

Բայց 'ի նոցունց արտառոցին, ձու, ձուանք: ձի, ձիանք: լու, լուանք: Եւ այլք: Այլ յայսպէս ևս անուանք յատուկք, եզե-

բեցեալք՝ ի ձայնաւորս, որգոն, զաքարիա, զաքարիանք: ագարիա, ագարիանք. հռիփսիմէ, հռիփսիմեանք, եւ այլք: որք բաց՝ ի քէէն, խնդրեն զայլս տառս, առ՝ ի փոխարկել՝ ի յոգնականս :

Անուանք եզականք որք եկեալ՝ ի մի միայն բաղաձայն, փոխարկեն՝ ի յոգնականս առադրութ` միոյ քէի, որգոն, միտ, միտք; մեղ, մեղք: աչ, աչք: հնձան, հնձանք :

Բայց՝ ի նոցունց արտաքոյ են, կոյս, կուսանք, էշ, իշունք, մազ, մազունք: մեծ, մեծինք; երագ, երագունք: եւ այլք: որոց ոչ միայն առադրի, ք, այլեւ վանկ ինչ ամբողջ:

Անուանք եզականք որք եզերին՝ ի յերկուս բաղաձայնս, ոչ միայն խնդրեն՝ ի վախճանի զքէ առ՝ ի փոխարկել՝ ի յոգնականս, այլ եւ պահանջեն զկնի առաջնոյ բաղաձայնին, զձայնաւոր ինչ, որգոն, գառն, գառինք: լեառն, լերինք: եւ այլք: Բայց՝ ի նոցունց արտաքոյ են մարտ, մարտք: գունդ, գունդք: ծնունդ, ծնունդք: սերունդ, սերունդք: ագուստ, ագուստք: եւ այլք :

Անուանք եզականք որք եզերին՝ ի յերիս բաղաձայնս, ոչ յարմարապէս փոխարկեն՝ ի յոգնականս առադրութ` միոյ քէի, այլեւ խնդրեն զկնի երկրորդի բաղաձայնին զձայնաւոր ինչ, որգոն, դուստր, դստերք: լինստր, լնստերք: արկղ, արկեղք: եւ այլք :

Անուանք այսոքիկ բարի, լաւ, ընտիր, մեծ, երբեմն կրկնին ի մէջ շարադրութ`, եւ ելուզանեն զնշանակութիւն յոգնականի գոլով ինքեանք ձայնիւ եզականք, որգոն, բարիբարի մարդիկ: լաւլաւ ակունք: ընտիր ընտիր պատերազմողք: մեծամեծ իշխանք: Իսկ երբեմն ձայնիւ եւս յոգնականական, որգոն, զբարիբարիս արանց: զլաւլաւս ականց: զընտիր ընտիրսն: զմեծամեծս քաղաքին: եւ այլն:

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ:

## Յաղագս հոլովից անուանց, և նոցին անուանակոչութեանց:

Հոլովք անուանց են տասն, որք են այսոքիկ: Անուանական: Սեռական: Տրական: Հայցական: Բացառական: Պատմական: Գործիական: Պարառական: Ներգոյական: Կոչական: Առաջինն կոչի անուանական, զի ընդարձակապէս և ուղղապէս զէութիւն իրաց ըստ անուանն նշանակէ, որգոն մարդ, հրեշտակ, երկին, երկիր: քանզի մինչ լսեմք մարդ, Թարց այլոյ ուրուք մտածման զկենդանին բանականն ’ի միտս բերեմք:

Երկրորդն կոչի սեռական, զի զայնոսիկ որք պատկանին առ իւրաքանչիւր էութիւն կամ էակս սեռօրէն նշանակէ, որ գոն, մարդոյ, հրեշտակի, երկնի, երկրի: քանզի մինչ լսեմք մարդոյ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր տէր, կամ ունօղ, կամ ստացօղ այլոց իրաց: Այլ և ոչ ուղղապէս ձկտի միտն մեր ’ի մարդն, այլ առ հոգին նորին, կամ առ մարմին նորին, կամ առ տուն նորին, կամ առ որդիս և դստերս նորին, և կամ առ այլ ինչ որ պատկանին նմին: Իսկ զմարդն թիւրապէս միայն ’ի միտս բերեմք:

Երրորդն կոչի տրական, զի զէնթակայս կամ զառարկայս առից տրողականաց կամ դիմողականաց և կամ ձկտողականաց նշանակէ, որգոն, ցմարդ, ցհրեշտակ, առ յերկինս, ’ի յերկիր, քանզի մինչ լսեմք ցմարդ, ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ, այլ իբր ենթակայ, տալոյ, դիմելոյ, ձկտելոյ: և այլն:

Չորրորդն կոչի հայցական, զի զէնթակայս կամ զառարկայս առից հայցողականաց կամ խնդրողականաց և կամ ախորժողա-

ժողականաց նշանակէ , որպէս , զմարդ , զհրեշտակ , զերկին զերկիր : քանզի մինչ լսեմք զմարդ , ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ , այլ իբր ենթակայ հայցելոյ , ախորժելոյ , խնդրելոյ : Եւ այլն :

Հինգերորդն կոչի բացառական , զի զենթակայս առից բարձականաց , կամ առողականաց , և կամ սկզբնականաց նշանակէ , որպէս , 'ի մարդոյ , 'ի հրեշտակէ , յերկրէ : քանզի մինչ լսեմք 'ի մարդոյ , ոչ ընդարձակապէս իմանամք զմարդն իբր մարդ , այլ իբր ենթակայ , բացբառնալոյ , առնլոյ , սկսելոյ : Եւ այլն :

Վեցերորդն կոչի պատմական , զի զենթակայս առից վիպողականաց , կամ ամբաստանողականաց նշանակէ , որպէս , զմարդոյ , զհրեշտակէ , զերկնէ , զերկրէ , քանզի մինչ լսեմք զմարդոյ , ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ , այլ իբր ենթակայ պատմելոյ , ամբաստանելոյ : Եւ այլն :

Եօթներորդն կոչի գործիական , զի զենթակայս առից արհեստականաց , կամ գործնականաց նշանակէ , որպէս , մարդով , հրեշտակիւ , երկնիւ , երկրաւ , քանզի մինչ լսեմք մարդով , ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ , այլ իբր ենթակայ գործիական :

Ութերորդն կոչի պարառական , զի զենթակայս առից շրջապատողականաց , կամ փարողականաց նշանակէ , որպէս , զմարդով , զհրեշտակիւ , զերկնիւ , զերկրաւ , ք̅ զի մինչ լսեմք զմարդով , ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ , այլ իբր ենթակայ , շրջապատելոյ , պատելոյ , փարելոյ : Եւ այլն:

Իններորդն կոչի ներգոյական , զի զենթակայս առից կամ կեից պարունակեցելոց նշանակէ , որպէս : ըն մարդում , ըն հրեշտակօջ , յերկինս , յերկիր , քանզի մինչ լսեմք ըն մարդում , ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն իբր մարդ , այլ իբր են-

Թակայ

թակայ պարունակող , կամ ներկրող :

Անուն երրորդն կոչի կոչական , զի զենթակայս առից կոչականաց նշանակէ , որգոն , ով մարդ , ով հրեշտակ , ո՛ երկին , ո՛ երկիր , քանզի մինչ լսեմք ով մարդ , ոչ իմանամք ընդարձակապէս զմարդն ինքնամարդ , այլ ինքն ենթակայ կոչման :

# ԳԼՈՒԽ ԻՆՆ ԵՐՈՐԴ :

## Յաղագս ձևակերպութեանց հոլովից :

Զանազանութիւն ձևակերպութեանց հոլովիցն կայանայ կամ 'ի սկզբան կամ ըն վերջնում անուանց , որք 'ի ձեռն զանազանից նախադրութեանց , և տարբերից վերջաւորութեանց զատանին հոլովս բաղկացուցանեն :

Սկզբունք և վերջք անուանց անուանականաց են բազումք և զանազանք , ըստ էակացն զորս նշանակեն , ուստի ոչ անկանին ընդ կանոնիւ իւիք , այլ ճանաչին միայն 'ի ձեռն վարժութեան :

Սկզբունք անուանց սեռականաց են այնքանք ; որքանք են սկզբունք ուղղականաց : Իսկ վերջք նոցին են տասնևինն ըստ թուոյ ընկից և տասանց հոլովմանց :

Սկզբունք և վերջք տրականաց վերջահոլովից են այնքանք , որքանք են սկզբունք և վերջք սեռականաց ; քանզի ա̅մ սեռական ; է վերջահոլով տրական , թէ և զանազանիցեն 'ի միմեանց ըն շարադրութեան 'ի ձեռն պահանջման տարբերից հոլովից :

Սկզբունք տրականաց նախդրունական են հինգ , ըստ հնգից այսոցիկ նախադրութեանց , այսինքն , 'ի , 'յ , առ , ց , ընդ : որգոն , 'ի տր յուսացայ : 'յանձնիմ երդուեայ : ասաց առ սադուկեցիս ; ետ ցպաշտօնեայն ; զարմացաւ ընդ բանս նորա :

Բայց

Բայց գիտելի է՛ զի 'ի, նախադրի, անուանց սկսանողաց 'ի բաղաձայնից : Եւ 'յ, նախադրի, անուանց սկսանողաց 'ի ձայնաւորաց : Իսկ մնացեալքն նախադրին, ամենից անուանց անզանազանապէս : Վերջք տրականաց նախդիրունակաց են ըստ որքանութեան վերջոց հայցականաց :

Սկզբունք հայցականաց կերպանան միով զայիւ : Իսկ վերջք նոցին նոյնք են ընդ անուանականաց : Բայց ըն յոգնականում Թուով, քէն վախճանական փոխարկի 'ի ս, որգոն, Թագաւորք, զԹագաւորս : արեգակունք, զարեգակունս : մարդիկք, զմարդիկս : Իսկ նանուանս նորս ոչ գոյ, ք, վախճանական, այլ միջարկական, նոյնն փոխարկի 'ի ս, որգոն ամենեքեան, զամենեսեան, եւ այլն : Երբեմն հայցականն, դնի 'ի շարադրութեան առանց զայի, եւ յայնժամ կոչի անորոշական; զի զիրս նշանակեցեալս ոչ յատկացուցանէ : որգոն, ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից : Առնէ ողորմութիւն տր̃, եւ իրաւունս ամենից զրկեցելոց : Ուստի ճանաչի միայն 'ի ձեռն հարովարութեան բայից նախընթացից, կամ հետեւելոց :

Սկզբունք բացառականաց են չորք ըստ չորից այսոցիկ նախադրութեանց . այսինքն, 'ի յ, 'իյ, առի, 'ի սոցանէ երկուքն են պարզք, եւ երկուքն են բաղադրեցեալք, պարզք որգոն, 'ի տունէ, յառաւօտէ : բարդեցեալք որգոն, 'իյականէ, առ 'իյերկնից : Իսկ վերջք նոցին են երկու, քանզի կամ ըստ սեռականին, որգոն, հողոյ, 'ի հողոյ : Ոսկւոյ, յոսկւոյ : Եւ կամ եղերի 'ի է՛, որգոն, 'ի չարէ, յանդգնութեան :

Սկզբունք պատմականաց ամենեցուն կերպանան միով զայիւ : Իսկ վերջք նոցին են ըստ բացառականաց, որգոն, 'ի նիւթոյ, զնիւթոյ : 'ի չարէ, զչարէ :

Սկզբունք գործիականաց են ըստ անուանականաց : Իսկ վերջք նոցին են տասն եւ երկու, ըստ որում տեսանին 'ի հոլովմունս անուանց :

Սկզբունք

Սկզբունք ստացականաց ամենեցուն կերպարանին միով ձայնիւ , իսկ վերջք նոյնն են ըստ գործիականաց , որգոն , ստ տեղբ , զատտեղբ : ընուԹբ , զընուԹբ :

Սկզբունք ներգոյականացն են չորք , ըստ չորից այսոցիկ նախադրուԹեց , այսինքն ՚ի , յ , ըն , ն : Որոց երկուքն այսինքն յ , և , ն , նախադրեն անուանց սկսանողաց ՚ի ձայնաւորաց , որգոն յեկեղեցւոջ : նենԹակայում : Իսկ երկուքն այսինքն , ՚ի , և ըն , նախադրեն անուանց սկսանողաց ՚ի բաղաձայնից , որգոն ՚ի տան : ըն տաբերուԹե : Վերջք ներգոյականաց ըն Թւոջ եզականում են երեք , զի կամ են ըստ սեռականաց , որգոն , բանի , ՚ի բանի : աշխատուԹե , յաշխատուԹե : Կամ եզերին ՚ի ոջ , որգոն յայգւոջ , ըն տեղւոջ : և կամ եզերին ՚ի ում , որգոն յաստուծում , ըն մարդում : Իսկ ըն Թուոջ յոգնականում են ըստ հայցականաց որգոն , զգիտուԹիս , ըն գիտուԹիս : զենԹակայս , նենԹակայս :

Բայց գիտելի է , զի ըն , և ն , մանաւանդ ՚ի կիր արկանեն յայնժամ , մինչ ներգոյականն չփոԹի ընդ նախդրիւ տրականին , քանզի յենԹակայս է ՚ի միասին ներգոյական , և նախդրիւ տրական : Ուստի առ ՚ի որոշել զնոսա ՚ի միմեանց դրեմք փոխանակ յիոյն , ն , որգոն , նենԹակայս : այսպէս ՚ի գիտուԹիս է՛ ՚ի միասին ներգոյական և նախդրիւ տրական , վա որոյ առ ՚ի զանազանել զնա ՚ի միմեանց դրեմք ՚ի տեղւոջ ինոյն , ըն , որգոն , ըն գիտուԹիս : Գիտելի է և ս զի ումն , յաւէտ եզերէ զանուանս որք ընդ առաջնով հոլովմամբ պարունակին , իսկ ոջն , զանուանս որք ընդ երկրորդիւ : Թէ և ըստ հաճուԹե բանաստեղծից և ս զանուանս այլոց հոլովմանց ստորանկեց եալս եզերիցեն :

Սկզբունք կոչականաց են երկու , ըստ երկուց այսոցիկ մասնկաց , ո՛վ , ո՛ : որգոն , ո՛վ Պետրէ : ո՛ քրիստոսէ : բայց են

բեմս

բեմ՝ ի կիրարկանին թարց միջարկութե՛ ումեք, որպէս, զա՛քէ: Իսկ վերջք նոցին կամ են ըստ անուանականաց, որպէս, ով խորք մեծութե՛: ով յ՛ն նազովրեցի: Եւ կամ եղերին ՚ի է, որպէս ով պօղէ, ով բարդուղիմէ, բայց ո՛վ ասացի, ի վերոյ, անուանց յատկեցէ այս սեփականն:

## ԳԼՈՒԽ ՍՈՒՍՆ ԵՐՐՈՐԴ.

Յաղագս թէ որք են որք ունին զհոլովս ներգոյական; Եւ որք են որք ոչ ունին զնոյնն:

Անուանք հասարակք ամենեքեան ունին զհոլովս ներգոյական, որպէս քաղաք, ՚ի քաղաքի: տուն, ՚ի տան: տեղի, ՚ի տեղւոջ: գաւառ, ՚ի գաւառի: լեառն, ՚ի լերինն: գետ, ըն գետոջ: Եւ այլք:

Անուանք յատուկք բանականաց ո՛չ ունին զհոլովս ներգոյական, այլ ՚ի տեղւոջ նորին փոխառուցեն զնախդրիւ տրականն, որպէս պետրոս, ՚ի պետրոս: մարիամ, ՚ի մարիամ: հռիփսիմէ, ՚ի հռիփսիմէ: մարթա, ՚ի մարթա: Եւ այլք:

Բայց երբեմն բանաստեղծք առ ՚ի պարզել զդիտաւորութի ախտադրաւթեն ստեղծանեն նոցին ներգոյականս, այլ կայն խառնելով ըստ մեծի մասին զծայրուձս նոցին, եւ համառօտելով զնոսա, որպէս, հռիփսիմէ, ըն հռիփսիմում: մատթէոս, ըն մատթէում: սոկրատէս, ըն սոկրատում: արիստոտէլէս, նարիստոտէլում: Եւ այլք:

Ասացի ըստ մեծի մասին, զի երբեմն պահեն եւ զամբողջութի անուանականին, որպէս, ադամ, նադամում, ամբակում, նամբակումոջ: ղուկաս, ըն ղուկասում: Եւ այլն:

Այսպէս անուանք մասանց աշխարհի եւ գաւառաց ոչ ունին զհոլովս ներգոյական, այլ ՚ի կիրարկանին նախդրիւ տրա-

կանաւ,

կանաւ, որգոն, Ասիա, յԱսիա: Արաբիա, յԱրաբիա: Եւրո-պա, յԵւրոպա: Ամերիքա, յԱմերիքա: Եթովպիա, յԵթով-պիա: Տաշիր, ՚ի Տաշիր: Բասէն, ՚ի Բասէն: Արարատ, յԱ-րարատ: Մուշ, ՚ի Մուշ: Գեղարքունի, ՚ի Գեղարքունի: և այլն:

Նմանապէս ՚ի կիրարկանին ևս անուանք քաղաքաց, գիւ-ղից, և գիւղաքաղաքաց, որգոն Հռոմ, ՚ի Հռոմ: Բիւզանդիոն, ՚ի Բիւզանդիոն: Եփեսոս, յԵփեսոս: Եւդոկիա, յԵւդոկիա: Կարին, ՚ի Կարին: Շօշ, ՚ի Շօշ: Գառնի, ՚ի Գառնի: Նորագաւիթ, ՚ի Նորագաւիթ: Ագուլիս, յԱգուլիս: Ակուռի, յԱկուռի: և այլք:

Սոյին համապատասխանին ևս անուանք լերանց և գետոց, որգոն, Սեպուհ, ՚ի Սեպուհ: Մասիս, ՚ի Մասիս: Թաբոր, ՚ի Թաբոր: Սինա, ՚ի Սինա: Կարմեղոս, ՚ի Կարմեղոս: Լիբանան, ՚ի Լիբա-նան: Երասխ, յԵրասխ: Յորդանան, ՚ի Յորդանան: Տիգ-րիս, ՚ի Տիգրիս: Եփրատէս, յԵփրատէս: Նեղոս, ՚ի Նեղոս: Փիսոն, ՚ի Փիսոն: Տոնաւիս, ՚ի Տոնաւիս: և այլք:

## ԴՐԱԿ ՄԵՏԱՍԱՆ ԵՐՈՐԴ:

### Յաղագս հոլովման անուանց գոյականաց և ածա-կանաց թուոց:

Անուանք գոյականք թուոց զանազանապէս հոլովին և զոյշ սակաւ դժուարութի ծնուցանեն ՚ի միտս համ-բակագունից, Ուստի առ ՚ի դիւրութի նոցին շա-րագրեմք աստ զօրականս նոցին յորոց կախին այլք հոլովք: որգոն, Մի, միոյ: Երկու, երկուց: Երեք, երից: Չորք, չորից: Հինգ, հնգից: Վեց, վեցից: Եօթն, եօթան: Եօթունք, եօթանց: Ութն, ութից: Ինն, ինան: Իննունք, ինանց: Տասն, տասին: Տասունք, տասանց: Մետասան,

մետասանից : Երկոտասան, երկոտասանից : Երեքտասան, երեքտասանից : Չորեքտասան, չորեքտասանից : Հնգետասան, հնգետասանից : Վեշտասան, վեշտասանից : Եօթն և տասն, եօթանց և տասանց : Ութ և տասն, ութից և տասանց : Ինն և տասն, իննանց և տասանց : Քսան, քսանից : Երեսուն, երեսնից : Քառասուն, քառասնից : Յիսուն, յիսնից : Վաթսուն, վաթսնից : Եօթանասուն, եօթանասնից : Ութսուն, ութսնից : Իննսուն, իննսնից : Հարիւր, հարիւրոց : Երկու հարիւր, երկուց հարիւրոց : կամ երկերիւր, երկերիւրից : Երեք հարիւր, երից հարիւրոց : Հազար, հազարի : հազարք, հազարաց : տասն հազար, տասանց հազարաց : հարիւր հազար, հարիւրոց հազարաց : Բիւր, բիւրոյ : բիւրք, բիւրոց :

Իսկ անուանք ածականք թուոց եթէ են դասականք վարին այսու գաղափարաւ, որդ, և հոլովին այսպէս, Նախկին, նախկնոյ : Երկրորդ, երկրորդի : Երրորդ, երրորդի : Չորրորդ, չորրորդի : Հինգերորդ, հինգերորդի : Վեցերորդ, վեցերորդի : Եօթներորդ, եօթներորդի : Ութերորդ, ութերորդի : Ինններորդ, ինններորդի : Տասներորդ, տասներորդի : Մետասաներորդ, մետասաներորդի : Երկոտասաներորդ, երկոտասաներորդի : Երեքտասաներորդ, երեքտասաներորդի : Չորեքտասաներորդ, չորեքտասաներորդի : Հնգետասաներորդ, հնգետասաներորդի : Վեշտասաներորդ, վեշտասաներորդի : Եօթն և տասներորդ, եօթն և տասներորդի : Ութ և տասներորդ, Ութ և տասներորդի : Ինն և տասներորդ, ինն և տասներորդի : Քսաներորդ, քսաներորդի : Քսան և միերորդ, քսան և միերորդի : Քսան և երկուերորդ, քսան և երկուերորդի : Երեսներորդ, երեսներորդի : Քառասներորդ, քառասներորդի : Յիսներորդ, յիսներորդի : Վաթսներորդ, վաթսներորդի : Եօթանասներորդ, եօթանասներորդի Ութսն

երորդ ;

երորդ ; ութսներորդն : Իննսներորդ, իննսներորդն : Հարիւրերորդ, հարիւրերորդն : Հարիւր և միերորդ, հարիւր և միերորդն : Հազարերորդ, հազարերորդն : Տասնհազարերորդ, տասնհազարերորդն : Բիւրերորդ, բիւրերորդն :

Եթէ են զատականք վարին այսու գաղափարաւ, ակ, և հոլովին այսպէս : Միակ, միակն : Երկեակ, երկեակն : Եռեակ, եռեակն : կամ երրեակ, երրեակն : Քառեակ, քառեակն : Հնգեակ, հնգեակն : Վեցեակ, վեցեակն : Եօթնեակ, եօթնեակն : Ութնեակ, ութնեակն : Իննեակ, իննեակն : Տասնեակ, տասնեակն : Քսանեակ, քսանեակն : Երեսնեակ, երեսնեակն : Քառասնեակ, քառասնեակն : Յիսնեակ, յիսնեակն : Վաթսնեակ, վաթսնեակն : Եօթանասնեակ, եօթանասնեակն : Ութսնեակ, ութսնեակն : Իննսնեակ, իննսնեակն : Հարիւրեակ, հարիւրեակն : Երկուհարիւրեակ, երկուհարիւրեակն : Հազարեակ, հազարեակն. Բիւրեակ, բիւրեակն :

Եւ եթէ են կրկնականք վարին այսու գաղափարաւ, պատիկ, և հոլովին այսպէս : Կրկնապատիկ, կրկնապատիկն : Երկպատիկ, երկպատիկն : Եռապատիկ, եռապատիկն : Քառապատիկ: Հնգապատիկ: Վեցապատիկ: Եօթնապատիկ : Ութնապատիկ : Իննապատիկ : Տասնապատիկ : Քսանապատիկ : Երեսնապատիկ : Քառասնապատիկ : Յիսնապատիկ : Վաթսնապատիկ : Եօթանասնապատիկ : Ութսնապատիկ : Իննսնապատիկ : Հարիւրապատիկ : Հազարապատիկ : Բիւրապատիկ : և այլք :

# ԴՐԱԿ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ,

## Յաղագս, Սահմանի եւսեռից Բային:

Բայն է եզր բանի, որ զգգածմունս իրաց ընդ ժամանակաւ նշանակէ: որպէս, ատեմ, Թանամ, հեղում: ատիմ, Թանիմ, հեղանիմ: ատեցի, Թացի, հեղի: ատեցայ, Թացայ, հեղայ: ատեցից, Թացից, հեղից: ատեցայց, Թացայց, հեղայց:

Ասացի Թէ զգգածմունս իրաց ընդ ժամանականշանակէ, քանզի մինչ լսեմք ատեմ, զառս էութե̄ ուրուք ընդ ներկայի ժամանակաւ ՚իմանամք:

Եւ մինչ լսեմք ատիմ, զկիրս էութե̄ ուրուք ընդ նոյնով ժամանակաւ ՚իմանամք:

Մինչ լսեմք ատեցի, զառս էութե̄ ուրուք ընդ կատարելեալ ժամանակաւ ՚իմանամք: Եւ մինչ լսեմք ատեցայ, զկիրս էութե̄ ուրուք ընդ նոյնով ժամանակաւ ՚իմանամք:

Իսկ մինչ լսեմք ատեցից, զառս էութե̄ ուրուք ընդ ապառնեալ ժամանակաւ ՚իմանամք: Եւ մինչ լսեմք ատեցայց, զկիրս էութե̄ ուրուք ընդ նոյնով ժամանակաւ ՚իմանամք:

Բայից չորք են վերջաւորութիւնք, այսինքն, եմ, ամ, ում, իմ: որպէս, գրեմ, բանամ, ընկլում, ծնանիմ:

Յեզերեցելոյն ՚ի եմ, ամ, ում, Ոմանք են ներգործականք, որպէս, սիրեմ, լուանամ, լնում: Եւ ներգործականք ասին, զի նշանակեն զառս էութե̄ ուրուք առ կրօղորք: Քանզի սիրեմ, նշանակէ զառս կենդանւոյ ուրուք, առ իրինչ բարի եւ հաճելի: Եւ լուանամ, նշանակէ զառս կենդանւոյ ուրուք առ իր ինչ լուանալի: Իսկ լնումն, նշանակէ զառս կենդանւոյ ուրուք առ իր ինչ լնլի:

Եւ

Եւ յատուկ է սոցա փոխարկելն 'ի կրաւորականս 'ի բաց ձգելով զվերջընթեր ձայնաւորն իւրեանց , և առնլով փոխանակ նորին զձայնաւորն , ի , որգոն , սիրեմ , սիրիմ : լուանամ , լուանիմ , լնում , լնանիմ :

Իսկ այլք են չէզոքականք , որգոն , ննջեմ . ուրախանամ , երդնում : Եւ չէզոքականք ասին , զի ոչ զատս ներգործողին առ կրօղ ոք , և ոչ զկիրս կրողին 'ի ներգործողէ ուրեք նշանակեն , այլ զգործումն էութեան ուրուք ներ յինքեան բացայայտեն , քան զի ննջեմն , նշանակէ ընդարձակապէս զախտս կենդանւոյ ուրուք ներ յինքեան : և այլն :

Եւ յատուկ է սոցա ոչ երբէք փոխարկելն 'ի կրաւորականս , զի ոչ յարմարապէս ասի ննջիմ , ուրախանիմ , երդնանիմ , այլ ննջեմ , ուրախանամ , երդնում :

Բայց չէզոքականաց այսոցիկ կրկին է տեսակ : Զի ոմանք 'ի նոցանէ ըն բնաւս ժամանակս իւրեանց լծորդին երբեք ըզ ներգործականս , և կոչին ներգործակերպք : որպիսիքեն , ննջեմ , ննջեցի , ննջեցից : հսկեմ , հսկեցի , հսկեցից : չուեմ , չուեցի , չուեցից : և այլք :

Եւ ոմանք ըն ներկայում և յանկատարում ժամանակով իւրեանց լծորդին երբեք զներգործականս , իսկ ըն մնացեալս ժամանակս լծորդին երբեք զկրաւորականս , և կոչին ընդմիջակերպք , որպիսիքեն , յառնեմ , յարեայ , յարեայց : մեղանչեմ , մեղայ , մեղայց : զարմանամ , զարմացայ , զարմացայց : և այլք :

Յեղերեցելոցն 'ի իմ , ոմանք են կրաւորականք , որգոն , Սիրիմ , լուանիմ , լնանիմ : Եւ կրաւորականք ասին , զի նշանակեն զկիրս էութեան ուրուք , 'ի յառողէ իմեքէ , քանզի սիրիմն նշանակէ զկիրս սիրեցելոյն 'ի սիրողէ իմեքէ : և այլն :

Եւ յատուկ է սոցա փոխարկելն 'ի ներգործականս 'ի բաց ձգելով զվերջընթեր ձայնաւորն իւրեանց , և առնլով փոխա

նակ

նախնորին զմինն 'ի յերից այսոցիկ ձայնաւորաց, ե, ա, ու: որ գոն, օրհնեմ, սիրեմ: լուանիմ, լուանամ: լնանիմ, լնում: և այլն:

Աստուստ հետևի թէ ամ բայ ներգործական պարտի ունել զկրաւորական, առ որ կարիցէ փոխարկել ըստ վերոգրեցելոյ խրատոյն: Եւ ամ բայ կրաւորական պարտի ունել զներգործական, առ որ կարիցէ փոխարկել ըստ ասացելոյ խրատոյ:

Այլք 'ի նոցանէ են ձայնակրականք, որգոն, բնակիմ, նստիմ, հրճուիմ, բերկրիմ, յագիմ: և այլք:

Եւ ձայնակրականք ասին, զի ձայնիւ միայն, թուին թէ իցեն կրաւորականք, բայց ըստ նշանակութեան ոչ են: Քանզի ոչ նշանակեն զկիրս կրողին 'ի յառողէ իմեքէ, այլ յինքեան ըն կրողում: Եւ յատուկ է սոցա ոչ փոխարկել 'ի ներգործականս, զի ոչ յարմարապէս ասի հրճուեմ, նստեմ, բնակեմ, այլ նստիմ, հրճուիմ, բնակիմ: և այլն:

Իսկ այլք են հասարակք, որգոն, ծնանիմ, փարիմ, ծիծաղիմ, խոստովանիմ, և այլք: Եւ հասարակք ասին զի 'ի միասին զաւս ներգործողին և զկիրս կրողին նշանակեն, քանզի ծնանիմ, նշանակէ ի միասին զաւս ծնողին առ որդին, և զկիրս որդւոյն 'ի ծնողէն, այսպէս և այլքն: զոր օրինակ, ծնանիմ զքեզ, ծնանիմ 'ի քէն: փարիմ զքև, փարիմ 'ի քէն: ծիծաղիմ զքև, ծիծաղիմ 'ի քէն: և այլն:

## ԴԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ:

### Յաղագս Զանազանից Տեսակացն բայից:

Բայից ոմանք են նախադասականք, որգոն, Ունանիմ, յառնեմ, լնում, մատչիմ, ընծայեմ, կամ: Եւ նախադասականք ասին, զի են իբրև սկզբունք և արմատք, յորոց այլք յառաջագային: Այլև ղաւս

ներ

ներգործողին ներ յինքեան ընդարձակագոյնս նշանակեն, քան զի ուսանիմ, նշանակէ զդաս կենդանւոյ ուրուք ներ յինքեան Թարց նկատելոյ յարտաքս:

Ոմանք են ածանցականք, որգոն: Ուսուցանեմ, յարուցանեմ, լցուցանեմ, մատուցանեմ, ընծայեցուցանեմ, կացուցանեմ: Եւ ածանցականք ասին, զի են յառաջենեալք յայլոց բայից: Այլեւ զերկու առս երկուց նոցա միով ձայնիւ նշանակեն: քան զի Ուսուցանեմն, նշանակէ իմիասին զառս վարդապետին, եւ աշակերտին: եւ յարուցանեմն, նշանակէ զառս յարուցանողին, եւ յառնողին: այսպէս եւ այլք:

Բայց այսոքիկ ածանցականք միշտ են ներգործականք, ըն ներկայում, յանկատարում, ըն կատարելում եւ յապառնում ժամանակօք: որգոն, Ուսուցանեմ, ուսուցանիմ: Ուսուցանէի, ուսուցանէէի: Ուսուցի, ուսուցայ: Ուսուցից, ուսուցայց: Իսկ ըն յարակատարում, եւ ըն գերակատարում, են հասարակք, որգոն, ուսուցեալեմ, զքեզ, ուսուցեալեմ'ի քէն: Ուսուցեալէի զքեզ, ուսուցեալէի 'ի քէն: եւ այլն:

Բայից ոմանք են պարզք, որգոն, դնեմ, շարեմ, փոխեմ: Եւ պարզք ասին, զի զզուտ իմն նշանակութ̃ի առից էութէց 'ի միտս բերեն, քան զի դնեմն, նշանակէ պարզապէս զառնմ Թարց այլումեք նկատման.: այսպէս եւ այլքն:

Ոմանք են բարդք, որգոն, ստորադրեմ, համաշարեմ, վերափոխեմ: Եւ բարդք ասին, զի զերկպատիկ նշանակութ̃ի առից էութէց 'ի միտս բերեն, քան զի ստորադրեմն, նշանակէ 'ի միասին զդնելն, եւ զստորն:

Այսպիսիք մասնկունք շարադրելիք Թէպէտ ըստ զանազանից ախորժակաց բանաստեղծից են բազումք: Սակայն այնք որք հասարակապէս 'ի կիրարկանի են սոքա, ըստ, ապ, առ, բաղ, շար, համ, հակ, տար, տրամ, ենթ, ստոր, անդր, վեր,

վայր, ներ, յառ, փոխ, արտ, տր, ●ն, փախ, շաղ, համ, վեհ, դեր, բակ, փար, մեջ, բաց, շուրջ, մակ, ընդդեմ, գեր, հետ: Որպէս, գտանեմ, ըստգտանեմ: ականեմ, ապականեմ: բերեմ, առբերեմ: դնեմ, բաղադրեմ: կցեմ, շարակցեմ: բերեմ, համբերեմ: դնեմ, հակադրեմ: բերեմ, տարբերեմ: չափեմ, տրամաչափեմ: դնեմ, են Թադրեմ, ստորադրեմ: չուեմ, անդրաչուեմ: լուծեմ, վերլուծեմ: ածեմ: վայրածեմ: մուծանեմ, ներմուծանեմ: շարժեմ, յարաշարժեմ: արկեմ, փոխարկեմ: բերեմ, արտաբերեմ: կարանամ, տըկարանամ: յարգեմ: անյարգեմ: կցեմ, փաղակցեմ: կապեմ, շաղկապեմ: անուանեմ, համանուանեմ: երևիմ, վեհերևիմ: դնեմ, դերադրեմ: առնեմ, բակառնեմ: ատեմ, փարատեմ: արկեմ, միջարկեմ: ասեմ, բացասեմ: պատեմ, շրջապատեմ: գրեմ, մակագրեմ: բանեմ, ընդդիմաբանեմ: կայանամ, գերակայեմ: զօտեմ, հետազօտեմ: և այլք:

Բաց յայսցանէ կարեն և ս բայք ընդ անուանց եզականից կամ յոգնավանկից բաղադրիլ, որգոն, ա̂ծաբանեմ: իկասիրեմ: գեղեցկաբանեմ: յաճախաբանեմ: և այլք:

Բայից ոմանք են արտուղիք, որգոն, երթամ, չոգայ, երթ. Ուտեմ, կերայ, կեր: Գամ, եկի, և այլք: Եւ արտուղիասին, զի հեռանեն 'ի շաւղէ այլոց բայից 'ի ժամանակս լծորդութեանց իւրեանց, այլայլելով զձայնս և զվերջաւորութիւնս, բազի ոչ տեսանի; այլ է սոցա ձայն ներկայի, և այլ կատարելոյ ժամանակին:

Ոմանք են դիմազուրկք, որգոն, պա՛րտէ; պարտ եղև, պարտ լիցի: փո՛յթէ, փո՛յթ եղև, փո՛յթ լիցի: հա՛րկէ, հա՛րկ եղև, հա՛րկ լիցի: պատե՛հէ, պատե՛հ եղև, պատեհ լիցի: և այլք:

Եւ դիմազուրկք ասին զի ոչ ունին զառաջին և զերկրորդ դէմս, վ̄ա զի ոչ յարմարապէս ասի, պա՛րտեմ, պա՛րտես, և այլն: այլ պա՛րտէ ինձ, պա՛րտէ քեզ, պա՛րտէ նմա: փո՛յթէ ինձ,

ինձ, փոյթ է քեզ, փոյթ է նմա ։ և այլն ։

Բայց դիմազրկից այսոցիկ կրկին է տեսակ․ զի ոմանք ՚ի նոցանէ են բնականք, որպիսիք են, վերոգրեցեալքն ամենեքեան, այլև ցրտէ՛, ջերէ՛, անձրևէ՛, ամպէ՛, ձիւնէ՛, որոտայ, փայլատակէ՛ ։ Եւ բնականք ասին, զի կամ ամենևին ոչ ունին ըղղական ներգործող դէմս, և կամ թէ ունին, բայց ոչ յարմարապէս ՚ի նկերարկանին ։

Իսկ ոմանք են պատահականք, որպիսիք են, ասի՛, թուի՛, երևի, տրի, լսի, և այլք բազումք ։ Եւ պատահականք ասին, զի ունին զուղղական ներգործող դէմս, բայց վ՟ն յաճախապէս վարեցմանն նորեանց ընդ յերրորդում դիմօք թուին ընդ դիմազուկս ։

Ոմանք են պակասաւորք որգոն, մեղայ, լուայ, և այլք ։ Եւ պակասաւորք ասին, զի ոչ ունին զներկայ, և զանկատար ժամանակն, այլ փոխառուցեն զնոյնս յայլոց բայից կանոնաւորաց ։ քան զի լուայն, կատարունակէ զինքն բայիւն լսեմ, լսէի, որոյ կատարեալն է լսեցի ։ Եւ մեղայն կատարունակէ զինքն բայիւն մեղանչեմ, մեղանչէի, որոյ կատարեալն է մեղանչեցի ։

Ընդ պակասաւորս համաթուին և ս, կամենամ, ունենամ, կարենամ, ծնանիմ, ջեռանիմ ։ և այլք բազումք ։ Որք ոչ ունին զկատարեալս յատուկս, այլ վարին ժամանակօք բայիցն կանոնաւորաց, կամիմ, ունիմ, կարեմ, ծնիմ, ջեռնում ։

Ոմանք են, յաճախականք, որգոն, բեկոտեմ, կտրատեմ, խոցոտեմ, ասոցեմ, ձևոտեմ, գրոտեմ, պատառոտեմ, բըղկոտեմ, կարոտեմ, և այլք բազումք ։ Եւ յաճախականք ասին զի զառաւելութ՟ն իմն, կամ զպատկութ՟ն իմն նշանակեն, քան զի բեկեմ ասի զմիոյ իրէ, իսկ բեկոտեմ զբազմաց ։ այսպէս խոցեմ ասի զմիոյ վիրէ, իսկ խոցոտեմ զբազմաց, և այլն ։

Ընդ այսորիկ համաթուին և ս, խոստանալով խոստանամ, անարգելով անարգեմ: խրատելով խրատեմ: ունելով ունիմ: նորոգելով նորոգեմ: և այլք:

# ԳԼՈՒԽ ՉՈՐԵՔԱՍԱՆԵՐՈՐԴ

## Յաղագս Պարագայիցն բայից:

Պարագայք բայից են չորք, այսինքն: Թիւ, Դէմ, Ժամանակ: Եւ Եղանակ:

Թիւք են երկու, եզական, և յոգնական: Եզականք, որգոն, սիրեմ, սիրես, սիրէ; բանամ. բանաս, բանայ: հեղում, հեղուս, հեղու: Եւ եզականք ասին, զի զմի ներգործութիւն, և զմի ներգործօղ միայն նշանակեն:

Իսկ յոգնականք, որգոն, սիրեմք, սիրէք, սիրեն: բանամք, բանայք, բանան: հեղումք, հեղույք, հեղուն: Եւ յոգնականք ասին, զի զբազում ներգործութիւնս ընդ բազմաց ներգործողաց նշանակեն:

Դէմք են երեք, այսինքն առաջին, երկրորդ, երրորդ: Առաջին, որգոն, սիրեմ, լուանամ, լնում: Երկրորդ որգոն, սիրես, լուանաս, լնուս: Երրորդ որգոն սիրէ, լուանայ, լնու:

Առաջինն ասի յորժամ բան, զի մինչ լսեմք սիրեմ, ՚իմիտ ածեմք զբան ինձ արտաբերել յումեքէ վս իւր: Երկրորդն ասի առ որ բան, զի մինչ լսեմք սիրես, ՚իմիտ ածեմք զբան ինձ արտաբերել յումեքէ առ այլ ոմն, այսինքն յառաջնոյ դիմէն առ երկրորդն: Իսկ երրորդն ասի յաղագս որոյ բան, զի մինչ լսեմք սիրէ, ՚իմիտ ածեմք զբան ինձ արտաբերել յումեքէ յաղագս այլոյ ուրուք: այսինքն յառաջնոյ դիմէն վս երրորդին:

Ժամ

Ժամանակք են վեց, այսինքն Ներկայ : Անկատար, Կատարեալ, Յարակատար, Գերակատար, և Ապառնի : Ներկայք, որգոն, սիրեմ, լուանամ, լինիմ : Եւ ներկայք ասին, զի նշանակեն զառուս ներգործողին նորպալէս ելուզանել ՝ի նմանէ, կամ ցուցանեն զներգործողն, յայսմիկ մասին Ժամանակի գոլ ՝ի մէջ գործոյն, այսինքն սիրելոյն, կամ լուանալոյն, և կամ լինելոյն :

Անկատարք, որգոն, սիրէի, լուանայի, լինէի : Եւ անկատարք ասին, զի նշանակեն զառուս ներգործողին սկսեցեալ, բայց ոչ կատարեցեալ :

Կատարեալք, որգոն, սիրեցի, լուացի, լցի : Եւ կատարեալք ասին, զի նշանակեն զառուս ներգործողին վճարեցեալ, և լրացեալ :

Յարակատարք, որգոն, սիրեալեմ, լուացեալեմ, լցեալեմ : Եւ յարակատարք ասին, զի նշանակեն զառուս ներգործողին արդէնիսկ կատարեցեալ : այսինքն Ժամանակ ինչ անցեալ զկնի վճարման գործոյն :

Գերակատարք, որգոն, սիրեալէի, լուացեալէի, լցեալէի : Եւ գերակատարք ասին, զի նշանակեն զառուս ներգործողին վաղուրեմն գոլ կատարեցեալ :

Ապառնիք, որգոն, սիրեցից, լուացից, լցից : Եւ ապառնիք, ասին, զի նշանակեն զառուս ներգործողին դեռևս ոչ սկսեցեալ, այլ գոլ սկսանելի :

Եղանակք են հինգ, այսինքն Սահմանական, Հրամայական : Ըղձական : Ստորադասական : Աներևոյթ :

Սահմանականք, որգոն, սիրեմ, լուանամ, լինիմ : Եւ սահմանականք ասին, զի նշանակեն ընդարձակապէս զէութիւն առից Թարց ումեք պարագայի :

Հրամայականք, որգոն, սիրեա՛, լուա՛, լից : Եւ հրամայա

կանք ասին, զի նշանակեն զառս էութեանց գոլ իբր հրամանս, եւ պատուիրանս:

Ըղձականք, որպէս, երանի թէ սիրիցեմ, երանի թէ լուանայցեմ, երանի թէ լնուցում: Եւ ըղձականք ասին, զի նշանակեն զիղձս եւ զցանկութիւնս հոգւոյ:

Ստորադասականք, որպէս. եթէ սիրիցեմ, եթէ լուանայցեմ, եթէ լնուցում: Եւ ստորադասականք ասին, զի նշանակեն զառս էութեանց գոլ անկատարս, եւ իբր կատարելիս, որք ոչ երբէք կատարին, եթէ ոչ առակցիցին ընդ նոսին այլք բանք:

Աներեւոյթք, որպէս, սիրել, լուանալ, լնուլ: Եւ աներեւոյթք ասին, զի նշանակեն զառս էութեանց գոլ անորոշս, եւ ոչ ճշգրտեցեալս առ մի ոմն՝ յերից դիմաց: Ուստի եւ պատեհապէս յարմարին առ իւրաքանչիւր դէմս, որպէս, ՚ի սիրելն իմ, ՚ի սիրելն քո, ՚ի սիրելն նորա, եւ այլն:

# ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ:

## Յաղագս սահմանի եւ Պարագայից Դերանուան:

Դերանունն է եզր բանի, որ զդէմս որոշականս էութեանց նշանակէ: որպէս, ես, դու, նա:

Ասացի թէ զդէմս որոշականս նշանակէ, քանզի մինչ լսեմք ես, ՚ի միտ ածեմք որոշապէս զդէմն առաջին, եւ մինչ լսեմք դու, ՚ի միտ ածեմք որոշապէս զդէմն երկրորդ: Իսկ մինչ լսեմք նա, ՚ի միտ ածեմք որոշապէս զդէմն երրորդ:

Եւ քան զի սովորութիւն է դերանուան վարիլն փոխանակ անուան, վս որոյ եւ կոչի դերանուն, այսինքն փոխանուն, որպէս. Իսկ յս զոչինչ ետ պատասխանի: Իսկ նա զոչինչ ետ պատասխանի: Իսկ մարիամ ընդ բանին խռովեցաւ: Իսկ նա

ընդ

ընդ բանին խառնեցաւ ։ Եւ այլն ։

Դերանուանց ոմանք են էականք, որգոն, ես, դու, իւրեան ։ սա, դա, նա ։ այս, այդ, այն ։ ինքն, սոյն, դոյն, նոյն ։ Եւ էականք ասին, զի զէութիւն բացորոշեցելոյ որոշապէս նշանակեն ։ քան զի մինչ լսեմք, ես, զէութիւն իմն բացորոշեցեալ այլոց որոշապէս 'ի միտ ածեմք ։ Եւ այլն ։

Բայց գիտելի է զի իւրեանն գոլով պակասաւոր ոչունի յեզականում թուոյ զանուանականն և զհայցականն ։ Ուստի փոխառուցէ զնոյնս 'ի դերանուանէն, ինքն ։ ըստ որում շարագրեալ եմք, յառաջնում հատորին ։

Ոմանք են ստացականք, որգոն, իմ, քո, իւր, մեր, ձեր ; Եւ ստացականք ասին, զի զիրս կամ զստացուածս էութեանց բացորոշեցելոց անորոշապէս նշանակեն, քան զի մինչ լսեմք իմ, էութեան ուրուք բացորոշեցելոյ զտուն, կամ զայգի, կամ զուստերս, կամ զդստերս, և կամ զայլինչ 'ի միտ ածեմք ։

Ոմանք են դիմորոշականք, որգոն, Ս, Դ, Ն ։ Եւ դիմորոշականք ասին, զի զանուանս և կամ զայլս մասունս բանի դիմաւորեն, քան զի մինչ լսեմք ուղղափառ, ոչ իմանամք որոշապէս թէ առ որ դէմ պատկանիցի այն անուն, բայց մինչ առադրեմք նմին զմինն 'ի յերից վերոգրեցելոցն դիմորոշականաց, որոշապէս կարեմք իմանալ զնոյնն, զոր օրինակ ։ Ուղղափառս, նշանակէ զառաջին դէմն ։ Ուղղափառդ, զերկրորդ դէմն, Ուղղափառն զերրորդ դէմն, զի նոյն է թէ ասիցեմք, Ես ուղղափառ, դու ուղղափառ, նա ուղղափառ ։

Բայց կիրառութիւն սոցին վայել չագոյն իմն է 'ի յընդունելութիս որգոն, ստեղծօղն երկնի և երկրի ։ ընտրեցեալդ յոյ ։ ըղձալին յէակաց ։ Եւ այլն ։

Ոմանք են նախադաղափարք որգոն, իմ, քո, մեր, ձեր, իւր, նոյն, ինքն ; Եւ նախադաղափարք ասին, զի են իբրև-

արմատք եւ սկզբունք յորոց այլք յառաջագային :

Ոմանք են ածանցականք, որգոն, իմային, մերային, քոյին, ձերային, իւրային, նոյնական ; ինքնական : Եւ ածանցականք ասին զի են յառաջեկեալք յայլոց :

Բայց գիտելի է, զի ոչ ամ դերանուն նախադաղափար կարէ ածանցիլ, քան զի ոչ յարմարապէս ասի, իւրեանցային, եւ այլն : այլ այնոքիկ միայն զորս աւանդէ սովորութիւն հայկաբանութեան :

Գիտելի է եւս, զի որովհետեւ դերանուանց է յատուկ որչել զդէմս, պատեհապէս, ըն պիտանաւորս տեղիս, կարեն կրկնիլ եւ վերակրկնիլ առ ի որոշագունեղապէս ապացուցանել զդէմս այնց, զորոց կամիմք խօսիլ, որգոն, եսնոյնեմ, նա ինքն ինքն ծուլու : այս, այն է : եսնոյն ինքնեմ : դունոյն ինքն ես : նա նոյն ինքնէ : եւ այլք :

Ոմն է յարաբերական, որգոն, Որ : Եւ յարաբերական ասի, զի բաց 'ի նշանակութէ իւրմէ, առաբերէ եւս 'ի միտս զնախնթաց անուն իւր, զոր օրինակ, 'ի բանի յայսմիկ : Որ հարցի զիմս այսմիկ փշրեսցի, որն, յարաբերական ոչ միայն առաբերէ 'ի միտս զնշանակութի իւր ըստ ձայնին : այլ եւ յարաբերէ ընդ նմին զնախնթաց անուն իւր, այսինքն զայր հերցուածօղ, կամ զհերետիկոս : Քան զի նոյնէր թէ ասիցէր, Հերցուածօղ, կամ հերէտիկոս ոք, որ հակառակի ընդդէմ իշխանութեն պետրոսի, փշրեսցի :

Ոմանք են պարզք, որգոն, իւրաքանչ, երկաքանչ, նոյն, ինքն : Եւ պարզք ասին, զի զմի առանձին նշանակութի միայն 'ի միտս բերեն :

Ոմանք են բարդք, որգոն, իւրաքանչիւր, երկաքանչիւր, նոյնագոյ, ինքնակայ, ինքնամեծար, ինքնահաւան, ինքնինքն : Եւ բարդք ասին զի զերկպատիկ նշանակութի 'ի միտս բերեն :

Իսկ

Իսկ ոմանք են յարաբարդք, որգոն, իւրաքանչիւրոք, իւրաքանչիւրոք, ինքնասնիրայարգ: ինքնագոյակից: Եւ յարաբարդք ասին, զի զբազմապատիկ նշանակութի̃ ՚ի միտս բերեն:

Բայց ըն բարդութիս այսոսիկ միշտ վերջինն հոլովի եւ առաջինն մնայ ըն կացութե̃ իւրում, որգոն, իւրաքանչիւր, իւրաքանչիւրոյ: ինքնագոյակից, ինքնագոյակցի: իւրաքանչիւրոք, իւրաքանչիւրուրուք: ինքնինքն, ինքնինքեան, ինքնինքեամբ, եւ այլն:

Աստիճանք դերանուանց նոյնք են ընդ անուանց, զի ոմանք ՚ի նոցանէ են դրականք որգոն, նոյն, ինքն: եւ այլք:

Ոմանք են բաղդատականք, որգոն, նոյնագոյն, ինքնագոյն: Իսկ ոմանք են գերադրականք, որգոն, նոյնագունեղ, ինքնագունեղ:

Ոմանք ՚ի դերանուանց առանձնապէս զմի միայն դէմ յատկացուցանեն, որպիսիքեն ես, դու, սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն: քան զի եսն, նշանակէ զառաջին դէմն; դուն, զերկրորդն: Իսկ մնացեալքն զերրորդն; Բայց սան, զմերձաւորն առաջնոյն; կամ զմերձաւորն երկրորդին; նան, զբացակայն, յերկոցունց: այսպէս այսն, զմերձաւորն առաջնոյն, այդն, զմերձաւորն երկրորդին, այն, զբացակայն յերկոցունց: եւ այլն:

Իսկ ոմանք հասարակապէս նշանակել կարեն զերիս դէմսն, որպիսիքէն, նոյնն, ինքն, որն: քան զի վայելչապէս կարելի է ասել, եսնոյնեմ, դունոյնես, նանոյնէ: ես ինքնեմ, դու ինքնես, նա ինքնէ: ես որ խօսիմ, դու որ լսես, նա որ ննջէ: եւ այլն:

# ԳԼՈՒԽ ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ,

## Յաղագս Սահմանի և պարագայից ընդունելութե:

Ընդունելութիւնն է եզր բանի որ զէութիւս և զզգած-մունս նորա ընդ ժամանակաւ նշանակէ, որգոն, բացօղ, ծիծաղելի: ուղ ապա թէ զէութիւս և զզգած-մունս նորա ընդ ժամանակաւ նշանակէ, քանզի բացօղն նշանակէ զէութի իմն առօղ ընդ ներկայիւ ժամա-նակաւ: և ծիծաղելին նշանակէ զէութի իմն կրօղ ընդ ապառ-նեաւ ժամանակաւ:

Ընդունելութեց վերջաւորութիւք են չորք, այսինքն, օղ, եալ, լոց, լի: որգոն, սիրօղ, կամ սիրեցօղ: սիրեալ, կամ սիրե-ցեալ, սիրելոց, սիրելի: Ուսանի, յիւրաքանչիւրմէ ումեքէ դիւ-րապէս կարեն ճանաչիլ 'ի մէջ շարադրութե: Եւ քանզի ըն-դունելութիւնն ոչ միայն նշանակէ զէութիւս նորա հբր անուն, այլև զաւս և զկիրս էութեց հբրև զբայ, վա որոյ զբաղում 'ի պարագայից նոցին սեփականէ իւքեան:

Քանզի հոլովի տասամբք հոլովիւք հբրև զանուն, որգոն, բնակող; բնակողի: բնակողի, ցբնակող; զբնակող: 'ի բնակողէ: զբնակողէ: բնակողիւ զբնակողիւ, 'ի բնակողի, ով բնակող:

Ուրախացեալ: ուրախացելոյ; ուրախացելոյ, ցուրախաց-եալ: զուրախացեալ: յուրախացելոյ: զուրախացելոյ: ուրա-խացելով: զուրախացելով: 'նուրախացելում: ով ուրախացեալ:

Սիրելի: սիրելւոյ: սիրելւոյ, 'ի սիրելի: զսիրելի: 'ի սիրելւոյ: զսիրելւոյ: կսիրելեաւ: զսիրելեաւ: 'ըն սիրելում: ով սիրելի: և այլն:

Եւ ունի զվեց ժամանակս ըստ բայի: Քանզի օղն, միշտ է՝ ներկայ, և անկատար: Եալն, միշտ է կատարեալ, յարա-կատար,

կատար, և գերակատար : Իսկ լոցն, և լին, միշտ են անպատնիք:

Ունի ևս զչորեսին սեռս բայից , քանզի իւրաքանչիւր ըն-դունելութի պահէ յինքեան զյատկութի իւրոյ բային , զի ըն-դունելութիւքն որք յառաջագայն 'ի բայէն ներգործականէ ; ասին ներգործականք , որգոն , սիրեմ , սիրող , սիրեալ , սիր-ելոց : Եւ ընդունելութիւք որք ծնանին 'ի բայէն կրաւորա-կանէ , ասին կրաւորականք , որգոն , սիրիմ , սիրեցող , սիրե-ցեալ , սիրելի : Իսկ ընդունելութիւք որք ենկաւորին 'ի բայէն չէզոքականէ կամ 'ի ձայնակրականէ , ասին չէզոքականք , կամ ձայնակրականք , որգոն , ննջեմ , ննջող , ննջեալ , ննջելոց : բնակիմ , բնակող , բնակեալ , բնակելոց : և այլն :

Բայց գիտելի է , զի 'ի բայից ներգործականաց բղխեն միայն երեք այսորիկ ընդունելութիւք , այսինքն , ող , եալ , լոց , որգոն , սիրող , սիրեալ , սիրելոց : Եւ 'ի բայից կրաւորականաց բղխեն միայն երեք այսորիկ ընդունելութիւք , այսինքն , եցող , եցեալ , լի : որգոն , սիրեցող , սիրեցեալ , սիրելի : Իսկ 'ի բայից չէզոքա-կանաց և 'ի ձայնակրականաց , այլև 'ի բայից հասարակաց բղխ-են գոնեայ բնաւք ընդունելութիւք , բայց ոչ ամենեքեան յամենեցուն ոմ ասացի :

Գիտելի է ևս , զի ընդունելութիւն երբեմն 'ի կնիպարկանի 'ի բանին իբր անուն , և երբեմն իբրև զբայ : 'Ի կիր արկանի իբր անուն , մինչ կորուսանէ զխնդրեցեալ հոլովն 'ի բայէն իւր-մէ , որգոն , ստեղծօղն երկնի և երկրի ած : Մարիամ մայր խաչեցելոյն : սիրելի աշակերտն յի յոհաննէս :

Եւ վարի իբրև զբայ , մինչ պահանջէ զնոյն հոլով բային իւրոյ , որգոն , ստեղծօղն զհոգիս մարդկան անձնչացաւ : խաչեցեալն 'ի հրէից կենդանացաւ : Սիրելի աշակերտն 'ի յիէ վախճանեցաւ :

Իսկ լոցն հազիւ երբեք անուանանայ , զի ոչ ունի և ոչ հոլովի

յարմարապես, այլ և նոյն ներգործական, որ ուրուրեք կարծի անուանեցեալ, անդ ոչ ընդունելութիւն, այլ ածական անուն, որպէս, օծեալն է՛ ա՛ծ և մարդ կատարեալ: բայց ո՛չ ասացի, ի մասնի այս սակս ընդունելութեանցն որք ՚ի քայից ներգործականաց արտաքսէն, այլ ոչ սակս այլոց, որք անզանազանակ են ՚ի կրաւորականէն, որպէս, ա՛ծ բարձրեալ: մանուկ բազմեալ: յ՛ս ծնեալ: հասակն աճեալ: և այլք: քան զի կարեն ա՛ք ասել ընդունելութիւնք և անուանք ածականք:

Ընդունելութեանց տեսակք են այնքանք, որքանք են տեսակք բայից: Զի ոմանք խոտանաւէ են նախադաղափարք, որպէս, մատչող, մատեալ, մատչելի, մատչելոյ: լցող, լցեալ, լնլի, լնլոյ: կացող, կացեալ, կալոյ: և այլն:

Եւ ոմանք են ածանցականք որպէս, մատուցանող, մատուցեալ, մատուցանելի, մատուցանելոյ: լցուցող, լցուցեալ, լցուցանելի, լցուցանելոյ: կացուցող, կացուցեալ, կացուցանելի, կացուցանելոյ: և այլն:

Ոմանք են պարզք, որպէս, դասող, դասեալ; դասելոյ: փոխող, փոխեալ, փոխելոյ: գործող, գործեալ, գործելոյ: գրող, գրեալ, գրելոյ: և այլն:

Եւ ոմանք են բաղադրեցեալք, որպէս, շարադասող, շարադասեալ, շարադասելոյ: վերափոխող, վերափոխեալ, վերափոխելոյ: ստեղծագործող, ստեղծագործեալ, ստեղծագործելոյ: ստորագրող, ստորագրեալ, ստորագրելոյ:

Ոմանք են յաճախականք, որպէս, բեկոտող, բեկոտեալ, բեկոտելոյ, բեկոտելի: և այլն:

Ոմանք են եզականք որպէս, սարսափող, սարսափեցեալ, սարսափելի: հանդերձող, հանդերձեալ, հանդերձելոյ: և այլք:

Եւ ոմանք են յոգնականք, որպէս, սարսափողք, սարսափեցեալք: սարսափելիք: հանդերձողք, հանդերձեալք, հանդերձելոցք:

ԴԼԱԿ

# ԴՐՈՒԶՆ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ:

## Յաղագս Սահմանի Նախադրութեան:

Նախադրութիւնն է եզր բանի, որ զպարագայս էութեանց նշանակէ, որգոն, 'ի վերա, շուրջ, առաջի: Ասացի թէ զպարագայս էութեանց նշանակէ, քան զի մինչ լսեմք 'ի վերա երկրի, իմիտ ածեմք զվերին կողմն, կամ զմակերեւոյթն երկրի: Եւ մինչ լսեմք շուրջ զերկրաւ, 'ի միտ ածեմք զոլորտն երկրի: Եւ այլն:

Երեք են սեռք նախադրութեանց, զի ոմանք 'ինոցանէ են հոլովակերպք, որպիսիքեն, 'ի, յ, զ, եւ այլն, զորոց խօսեցաք յառաջնում հատորին ընդ պրակօքն որ յաղագս ձեւակերպութեանց հոլովից: Ոմանք 'ինոցանէ են հոլովախնդրութք, կամ ընդ արձակք, որպիսիքեն, ստորեւ, ներքոյ, 'ի ներքոյ եւ այլն, զորոց խօսեցուք յերրորդում հատորին:

Իսկ ոմանք են բաղադրօղք անուանց, կամ այլոց մասանց բանի, որպիսիքեն, ան, ապ, տը, ենթ, ստոր, վեր, արտ, տրամ, տար, համ, հոմ, շար, շաղ, փաղ, փար, փոխ, հակ, մակ, ընդդէմ, ըստ, առ, բաղ, անդր, վայր, ներ, յար, վեհ, դեր, բակ, միջ, դեր, հետ: Եւ այլք: որգոն անօրէն, ապաշխարհ; տըկար, տը դէտ; ենթակայ: ստորոգութիւն: վերլուծութիւն: արտաբերութիւն: տրամընթացութիւն: տարբերութիւն: համանման: հոմանուն: շարադրութիւն: շաղկապ: փաղանուն: փարատութիւն: փոխաբերութիւն: հակադրութիւն: մակադրութիւն: ընդդիմաբանութիւն: ըստգտան: առոգանութիւն: բաղանցութիւն: անդրաբերութիւն: վայրահակութիւն: ներանեղէկութիւն: յարակից: վեհ ընթաց: դերանուն, բակառութիւն: միջակատար: դերադետեղ, հետադօտ: Որոց բնաւից կիրառութիւն եղեւ հնարեցեալ

՚ի բանաստեղծից ոչ միայն առ՚ի գեղեցկացուցանել զշարադրութիւս, այլև առ՚ի զատել և պարզել զդիտաւորութիւս արտադրութեց և առ՚ի կատարածանակել զմերայնն հայկաբանութի: Քան զի մի և նոյն բառն առանցութք սոցին եղուզանել կարէ, զզանազանս իմացուածս, որգոն, ենթագրութի, սաորագրութի: վերագրութի: արտագրութի: տրամագրութի: տարագրութի: շարագրութի: փաղագրութի: մակագրութի: ընդ-իմագրութի: առագրութի: ներագրութի: յարագրութի: միջագրութի: և այլն:

Այսպէս, վերբերութի, վայրաբերութի, արտաբերութի, տարբերութի, համբերութի, փոխաբերութի, մակաբերութի, առբերութի, անդրաբերութի, ներբերութի և այլն:

Բայց գիտելի է զի մասնկունք այսոքիկ բաղադրօղք, կամ բաղադրելիք, ըստ մեծի մասին ոչ են նախդիրք յատկապէս կոչեցեալք այլ անուանք, որովհետև ոչ պարագայս էութեց, այլ զէութիս կարեն նշանակել, համաթուելն սակայն ընդ նախդիրս վ՚ս նախադրեցմանն իւրեանց այլոց մասանց բանի, և վ՚ս զօրութե համբանկացունից:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ,

### Յաղագս Սահմանման մակբային, միջարկութեն, և Շաղկապի:

ՄԱկբայն է երր բանի որ զեղանակս զգածմանց էութեց նշանակէ: որգոն, յանկարծակի, փոյթ ընդ փոյթ: երագ երագ, և այլն: Այսացի թէ զեղանակս զգածմանց էութեց նշանակէ, քան զի մինչ լսեմք, Յանկարծակի եհարզնա, ՚ի միտ ածեմք զառս էութե

հարուք

ուրուք լեալ գոլ առանց կարծեաց, կամ յայնմ ժամու մինչ ոչ կարծիւք : Նմանապէս մինչ լսեմք փոյթ ընդ փոյթ թօթափեցաւ, 'ի միտ ածեմք զկնիքս եւ թէ ուրուք լեալ գոլ, ընդ սղում իմիք ժամանակի : Եւ այլն :

Զտեսականացն մակբայից խօսեցաք նախաջնում հատորին, իսկ զկիրառութիւնս նոցին ճառելոցք եմք յերրորդում հատորին :

## Սահման Միջարկութեան :

Միջարկութիւն է եզր բանի, որ զկիրս ոգւոյ նշանակէ : ո՛րգոն . ո՜հ . վա՜շ : Եւ այլն : Ասացի թէ զկիրս ոգւոյ նշանակէ, քանզի մինչ լսեմք, ո՜հ եղկելոյդ, 'ի միտ ածեմք զտխրութիւն իմն ոգւոյ : Եւ մինչ լսեմք, վա՜շ անձին իմում, 'ի միտ ածեմք զխնդութիւն իմն ոգւոյ : Եւ այլն :

## Սահման Շաղկապի :

Շաղկապն է եզր բանի որ զմասունս կամ զեզերս նոյնոյ բանի ընդ միմեանս բաղակցէ, ո՛րգոն, իսկ, քանզի, եւ : Ասացի թէ զմասունս բանի ընդ միմեանս բաղակցէ, քանզի մինչ լսեմք իսկ, կամ, քանզի, զնախնթաց մասն ինչ բանի 'ի միտ ածեմք, զոր օրինակ : Պօղոս նստի, իսկ Պետրոս քայլէ : Կայիափա մարգարէացաւ, քանզի քահանայապետ էր տարւոյն : Եւ այլն :

# ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ:

## Յաղագս Շարամանութեան նշերաց:

### Գլուխ առաջին.

### Յաղագս Համաձայնութեան բայի ընդ անուան:

Համաձայնութիւնք են չորք, այսինքն: Բայի ընդ անուան: Ածականին ընդ գոյականին: Յարաբերականին ընդ նախընթացին: Պատասխանւոյ ընդ հարցման:

Առաջին համաձայնութիւն ասեմ զող բայի ընդ անուանն զի ամ̄ բայ դիմաւոր ունի զնախնթաց անուն իւր անուանական, թէ յայտնապէս և թէ ծածկապէս, որում և պարտի համաձայնիլ, դիմաւ, և թուով:

Յայտնապէս, որզոն, Ես մկրտեմ զձեզ ջրով: մեք տեսաք և վկայեմք: դու ես վէմ: դուք էք լոյս աշխարհի: նա արար ըզ մեզ: սոքա են քարինք սէգք: Պետրոս ննջէր: Պօղոս աւետարանէր: նոքա քարոզեցին զհաւատն Քի̄: և այլն:

Ահա՛ նշանս յայսոսիկ ոպ̄ տեսանես, իւրաքանչիւր բայ համաձայնի ընդ անուանականին իւրում դիմաւ և թուով: քան զի Մկրտեմս, որ է առաջին դէմ ներկայի սահմանականին ներգականի, համաձայնի ընդ դերանուանն Ես, որ է առաջին դէմ ներգականի: Եւ քարոզեցինն, որ է երրորդ դէմ կատարելոյ

տարելոյ սահմանականին եւ յոգնական, համաձայնի ընդ դե-րանուանն նոցա, որ է նմանապէս երրորդ դէմ, եւ յոգնական: Եւ այլն:

Իսկ ծածկապէս որգոն, արշաւէ, ծիծաղի, մռնչէ: Եւ այլն:

Եւ ասի ծածկապէս, զի նայսոսիկ միշտ ստոր իմանի անուն իմն, որգոն, Ձին արշաւէ: մարդն ծիծաղի: առիւծն մռնչէ: Եւ այլն:

Համաձայնին եւս բայք ընդ անուանց շաղկապեցելոց ընդ միմեանս, որգոն, Պետրոս եւ Պօղոս շրջէին եւ քարոզէին: Պե-տրոս եւ Յոհաննէս ելին 'ի տաճարն:

Եւ թէպէտ թուի երբեմն թէ տարաձայնիցին բայք յայս պիսեաց անուանց շաղկապեցելոց ընդ միմեանս, որգոն, ոչ գոյ 'ի նոսա սէր եւ միաբանութի. սակայն եթէ ուշիմապէս ո-րոնիցեմք, գտանեմք զնոսա գոլ համաձայնս զօրութբ, քան զի նոյն է թէ ասիցի ոչ գոյ 'ի նոսա սէր, եւ ոչ գոյ միաբանութի:

Բայց գիտելի է, զի մինչ բայք համաձայնին անուանց այս պիսեաց շաղկապեցելոց ընդ միմեանս, հետեւին մանաւանդ-պատուականագունին դիմին: Եւ քան զի առաջին դէմն է պա-տուականագոյն քան զերկրորդն, եւ երկրորդն քան զերրորդն:

Ուստի յորժամ առաջին դէմն շարակցի ընդ երկրորդին կամ ընդ երրորդին, բայն դիմաւոր հետեւի նմին: Եւ յոր-ժամ երկրորդ դէմն շարակցի ընդ երրորդին, բայն դիմաւոր հետեւին մին, որգոն, ես եւ դու խոստովանիմք: ես եւ նա խոս-տովանիմք: դու եւ նա խոստովանիք: ես եւ Պետրոսն խոստովա-նիմք: դու եւ Պետրոսն խոստովանիք:

Գիտելի է եւս զի թէպէտ համաձայնութիս այս կոչի բայ-ին դիմաւորի ընդ անուան, սակայն ենթ առաւութ ա-նուանն իմանին եւս դերանունք եւ ընդունելութիք ընդ որս անզանազանապէս համաձայնին բայք, որպ եւ ընդ անուանց,

որգոն

որգոն, նք՝ ՚ի ձեռանէ քումէ մերժեցան: խաչեցեալն յարեաւ; կենցուցանողն մեռաւ: երկրպագելին պարսաւեցաւ: Եւ այլն:

Գտանելի է եւ եւս զի անուանք ոմանք որք եզականաւ թուով զբազմութիւն նշանակեն խնդրեն զբայս յոգնականս, որգոն, երկաքանչիւրն խօսեցան: երկու են մասունք գլխաւորք մարդոյն: հինգ են զգայութիւնք արտաքինք: Եւ այլն:

Գտանելի է այլեւս, զի երբեմն փոխանակ անուանականին դնի բայն աներեւոյթ, որգոն, ապրելն ՚ի մէջ զբաղմանց ծնանի զձանձրութիւն: Ստեղծանելն է առնել զիրինչ յոչ ընչէ: մեղանչելն եւ ապաշաւելն են յատկութիւնք մարդոյն: Եւ այլն:

Գտանելի է դարձեալ, զի բայն դիմաւոր յերկուստեք կարէ ունել զանուանականս պատկանեցեալս առ մի եւ նոյն իրն, որգոն, Ես եմ ճանապարհ: ծերութիւն է ինքնին հիւանդութիւն: դու կոչիս Պետրոս: նա անուանի Յոհաննէս: Եւ այլն:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

## Յաղագս համաձայնութեան ածականին ընդ գոյականին:

Զերկրորդ համաձայնութիւն ասեմ զոյլ ածականին ընդ գոյականին, զի ոչոք ածական դնի ՚ի մէջ շարադրութեան, որ ոչ ունիցի զգոյական անուան իւր կամ ներգործութեամբ եւ կամ զօրութեամբ: Որում եւ պարտի միշտ եւ ամ ուրեք համաձայնիլ, թուով եւ հոլովիւ:

Ներգործութեամբ որգոն: Խօսրան բանին հօր բարձրելոյ:

՚Ի ձեռն Թագաւորի անօրինի եւ չարի: Ծագումն արեւու լուսոյն ճշմարտի: Գանձիդ ծածկեցելոյ գտող զիս արա: Նմանէ արքայութեան երկնից ուռկանի արկեցելոյ ՚ի ծով: Եւ հաճոյ եղէց ճշմարտութեան քում: Սատանելով ՚ի վերինն երեւացեալ, ՚ի յառաջադասոն անապական: Եւ հոգւովս վերա

նայր

այր 'ի կամարս լուսեղէնս : Որ բարեպաշտութե՜ հիմնեցոյց զեկեղեցի մե՜ : Որք արբուցին տրտմեցելոց որդւոցն ադա_մայ զբաժակն ուրախարար : 'Ի տանջարաց փրկսնկրէից ուստի ուրախարարին զձեզ դստերք Թագաւորաց : Որ 'ի զօրաց հոգե ղինաց երգաբանեցեալ տիրուհին : Որ երկոքումբք ընտրե_ցելովք լուսաւորչօքն աշխարհի: Սաղմոսիւք և օրհնութե՜ եւ եր գովք հոգեւորօք : Եւ ընծայեցէ հոգի իմ քեզ փրկչաւ իմով: Որք խօսեցան հոգւով սրբով : Դ—րօքն փակեցելովք երևեալ յմ : 'Ի սրբութե՛ բուռ բարեբանեմք զքեզ : 'Ի տանջարին մաքրե_ցելոյ : Եւ այլն :

Իսկ զօրութե՜ որպէս : Քան զի տաճար զմստանեկին յար գանդ-ի : Օկարօտեալս ելից հացիւ : Սայր եղեր վերանձո_ղին: Յանբանից մսուր եդ-ար Թագաւոր փառաց: Անմարմնոց վերնոց Թագաւոր յաւիտենից : Որ 'ի քառակերպից երեքսր բնիւ-ձայնիւ : Բարձրաբարբէք զբազմեալն 'ի վր խաչին : Նմջէ 'ի մէջ մահացելոց : Քան զի 'ի բանս այսոսիկ միշտ ենթ իմանի գոյական իմն անուն , որպէս : Օանտանելի բանն : Զկարօտ եալս մարդիկս : Վերանձողին տյ : Յանբանից կենդանեաց : Վերնոց եակաց : Քառակերպից սերովբէից: Զբազմեալն քս: մահացելոց մարդկան :

Բայց գիտելի է , զի ասացի 'ի վերոյ թէ ածականն պարտի համաձայնիլ ընդ գոյականին միշտ եւ ամուքեք այսենքն ոչ միայն մինչ հետեւի գոյականին , ոմ շարագրեցաք 'ի վերոյ , այլ եւ մինչ նախադրի նմին, որպէս Ցնծացէք որդիք մարդկան այսօր ծննդեամբ սրբուհւոյ կուսին: Որ զէութի անճառելւոյ միածնին : Խոստովանիմք առաջի տյ , եւ սրբուհւոյ ածած նին: Ըստ հրամանի սրբոց քոց պատուիրանաց : Ծարաւե_լոյ բնութեա եսուր 'ի յարբեցմ : 'Ի քերովբէական հանգչէիր յաթոռ : Որ յանարատ աթոռ նստիս : Որղհայրածինն

երկնեցեր զծաղիկ : Անեսանեմ զոսկալի զհրաշալի խորհուրդ յայտնեցեալ : Զմաքրական մարմինն Աստուածամօր կուսին . 'ի յընտրեցելոց աշակերտաց Յուդաս մեկնեցեալ 'ի սրբոց դա-ւանց : Որ այսօր մարմնացաւ 'ի սրբոյ կուսէն : Սիրով ընտ-թէս մեռանի : Միովքնութեամբ Աստուածութեան : 'Ի յերկրորդումն ա-ւուր սկզբան : Եւ այլք բազումք :

Դիտելի է եւս զի ածականն ոչ միայն համաձայնին պա-տի ընդ գոյականաց եզականաց կամ յոգնականաց , այլև ընդ գոյականաց շաղկապեցելոց ընդ միմեանս , որգոն միքայէլ և գաբրիէլ խորհրդակիցք են միմեանց : Ցորեանն և գարին նմանիք են միմեանց : ցորենոյ և գարւոյ նմանեաց միմեանց : ցորենով և գարեաւ նմանիւք միմեանց : Եւ այլն :

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ :

### Յաղագս համաձայնութեան յարաբերականին դերանուանն ընդ նախնթացին :

Զերրորդ համաձայնութիւն ասեմ զոր յարաբերականին ընդ նախնթացին , զի այն դերանուն յարաբերական ունի զնախընթացն իւր անուն , որում պարտի համաձայնիլ միշտ թուով , որգոն : Երանեալ է այր , որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց : Երանեալ է այրն , որ համբերեսցէ փորձանաց : Նախասարկաւագ և առաջին մարտիրոս , որ 'ի քէն պսակեցար : Զսուրբ հոգին փառաւորելով , որ զերահանգոյց զամենեսեան : Իսկապէս բան Աստուած միացաւ 'ի մարմնի անփոփոխ գոլով յէութեան , որում եղեն ականատե-'որդիքն որոտման : Թանձրացեալ բանդ անըմբռնելի , զոր 'ի մարմնի շօշափեցին որդիքն որոտման : Հրեշտակք երկնից փափաքեն հանդիսին կատարման սորա , որք 'ի մահուան իւրեանց

կենդա

կենդանացան : Պարծանս հաւատոյ սրբոց ճգնաւորաց , որք զմարմինս իւրեանց ի վ͞ր քոյ պատարագեցին : Ճգնաւորք եւ վը-կայք ; քն որք զչարչարանս եւ զմահ յանձն առիք :

Բայց գիտելի է զի երբեմն յարաբերականն պատահմամբ նախադասի նախնթացին իւրում , որգոն : Որ հարցն մերոց ա͞ծ փառաւորեցեալ յաւիտեան : Որ ՚ի թեւս թեթեւս աննիւթս սաւառնեցեալս եւ հրացայթս սերոբէից վերանստեալ տեսչութեան խնամես զարարածս հոգիդ ս͞բ : Որ ՚ի լերինն այլակերպեցեալ ցուցեր զա͞ծ ային քո զօրութի , զքեզ փառաւորեմք իմանալի լոյս : Որ թողութեց ես տուող ա͞ծ : Որ լուսատու ես տիեզերաց ք͞ն ա͞ծ : Որք սիրողքդ էք արարչին արարածոց ք͞ն ս͞բք առաքեալք : Որք զառ ՚ի ք͞ն զչարչարանս յանձն առեալք համբերեցիք ո՜վ ա͞ծ ասէր հայրապետք : Գիտելի է եւս , զի երբեմն յարաբերականն դնի ներգործութե , եւ նախնթացն իմանի զօրութե , որպոն : Որք եկեալք եմք ՚ի պատուել զյիշատակ սրբոց վկայիցն : Ըստ ենթիմանի նախնթաց դերանունն մեք : Որք զանձինս իւրեանց քեզ հայր ընծայեցին եւ որդւոյ քում ք͞ն եղեն խաչակիցք : Որք զհանդէս նահատակութեան առ բռնաւորսն ցուցին : Որք ՚ի մարտի անօրէնացն յաղթեցին արիաբար թշնամւոյն : Որք վ͞ն քոյ զկեանս իւրեանց փոխանակեցին : ՚Ի բանս յայսոսիկ ենթիմանի նախնթաց անունն , մարտիրոսք : Զորս առեալ ՚ի ծովականէն արարեր որսորդս մարդկան : Ըստ ենթիմանի նախնթաց անունն ; Զառաքեալս : Որոց հրամայեցեր հոտ անուշ լինել ընդ տիեզերս : Որոց խոստացար նստել յաթոռ դատողական : ՚Ի բանս յայսոսիկ ենթ իմանի նախնթաց անունն , Առաքելոց : Զորս ըստ պատկերի քում ստեղծեր , նորոգելով քեզ տաճարացուցեր : Ըստ ենթ իմանի նախնթաց դերանունն Զմեզ :

Բայց յայսպիսիս բանս Որն , վարի ընդ արձակապէս իբրեւ

զուտ դերանուն, այլոչ նորև զյարաբերականն։ Ուստի և համաձայնի ընդ ենթիմացելոյ անուանն ոչ միայն թուով, այլև հոլովիւ, ըստ շաւղի անուանց ածականաց։

Գիտելի է դարձեալ, զի դերանուանք այսոքիկ, ցուցականք, այս, այդ, այն։ սա, դա, նա, ոչ միայն ապացուցանեն զիրս ներկայս, այլև երբեմն յարաբերեն՚ի միտս, զանուանս նախնթացեալս ըստ շաւղի յարաբերականին, Որ։ որգոն Էր անդրէաս եղբայր սիմոնի վիմի, մի՛ յերկուց անտի, որք լուանն ՚ի Յոհաննէ և գնացին զհետ նր։ Գտանէ սա նախ զեղբայր իւր զսիմոն և ասէ ցնա, գտաք զմեսիայն, որ թարգմանի քս, սա էած զնա առ յս։ ՚Ի բանն յայսմիկ երկիցս Սայն յարաբերի ՚ի միտս զանդրէաս։ Եւ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով, նա ասաց ցիս յոյր վերայ տեսանիցես զհոգին, զի իջանիցէ և հանգչիցի ի վր նր նա է որ մկրտէ հոգւովն սրբով։ ՚Ի բանի այսմիկ, առաջին Նայն, յարաբերի ՚ի միտս զած։ իսկ երկրորդն, զյս։

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ,

### Յաղագս համաձայնութե պատասխանւոյ ընդ հարցման։

Չորրորդ համաձայնութիւն առնեմ զպատասխանւոյն ընդ հարցման, զի ամ պատասխանի, որ լինիցի ամսն և իցէ բանի, պարտի համաձայնիլ ընդ հարցման իւրում, ոչ միայն հոլովիւ, այլև յարմարութե իւրն, որգոն Ո՞վ է նա, Պատասխանի, Յս։ Ուրէ որդի։ Պատխ։ Մարիամու։ Ո՞ւմ երկրպագեն ուղղափառք։ Պխ։ քի։ Ո՞ւ դիմես ջանիւ, Պխ։ առ քս։ Զի՞ խնդրես, Պխ։ զքս։ Յո՞րմէ լուար զբանդ, Պխ, ՚ի քսէ։ Օրմէ խօսիս; Պխ, զքսէ։ Ո՞ւ կեաս, Պխ։ քսիւ։ Օ՞ւ խան դաղատիս,

աղտիս, Պտս: զ.քոյն: Նմանամ կայանայ յոյժս քո: Պտս, 'ի
քո՛ յո: Ո՛յք են ա՞ք: Պտս, ուղղափառք: Ո՛յք են որդիք: Պտս,
կաթուղիկէի եկեղեցւոյ: Յո՞ փութան, Պտս, 'ի յերկինս:
Զո՞ խնդրեն, Պտս, զ.քն: Յո՞ւմ են վարձատրելիք, Պտս,
'ի.քնէ: Զո՞ւմ ծառեն մարգարէք, Պտս: զ.քնէ: Որոյ՞ք պա
հին մարդիկ յաշխարհի, Պտս: հրեշտակօք պահապանօք: Զո՞
րոյք շուրջեն բանակք հրեշտակաց, Պտս: զերկնեղածոյք:
Եւ թէպէտ թուի 'ի բանս այսոսիկ թէ Պատասխանին հա_
մաձայնիցի ընդ հարցմանն և ս թուով, սակայն այս է ըստ
պատահման, քան զի բազմիցս տարաձայնի 'ի նմանէ, որգոն
Ո՛րք տունս այս: Պտս, իշխանաց: Յո՞ գնաս յամբաստա_
նութի, Պտս: առ դատաւորս: Զո՞ առաքեցեր 'ի հարսանիս,
Պտս, զմանկտիս, և զընտանիս: և այլն:

Բայց գիտելի է, զի ասացի 'ի վերոյ թէ Պատասխանին պար_
տիցի համաձայնիլ ընդ հարցմանն և ս յարմարութ. իւրն,
քան զի եթէ ոք հարցանիցէ, զինչ է, Պատասխանել պարտէ
գոյական անուամբ, մարդ, ձի, քար, երկին, երկիր, ծառ,
և այլն: զի զինչն, է հարցումն գոյական: Եւ եթէ ոք հար_
ցանիցէ Որպիսի՞ է, Պատասխանել պարտէ պատահակա_
նաւ անուամբ, այսպիսի, բանական, անբան, ծանր, բարձ_
յած, և այլն: զի որպիսին է հարցումն պատահական: Եթէ
ոք հարցանիցէ Ո՞րքանէ: Պատասխանել պարտէ; այսքան
շատ, սակաւ, երկայն, կարճ: Եւ եթէ ոք հարցանիցէ, որ չափ
փէ, պատասխանել պարտէ, այսչափ, շատ, քիչ, մի կանգուն,
երկու կանգուն, մի թզաչափ, մի քու, մի դրուան, մի մար: և այլն:

Այլպէս հարցմանն քանի, Պատասխանի, մի երկու, երեք,
չորք, հինգ: և այլն:

Հարցմանն Ո՞ւր, Պատասխանի, աստ, անդ, ամենուրեք,
այլուրեք, ուրուրեք, 'ի տան, 'ի քաղաքի, յեկեղեցւոջ: և այլն:

Հարց

Հարցմանն Ո՛ւստի, Պատասխանի, աստի, անտի, աստուստ, անտուստ, ՚ի տանէ, յերկնից, և այլն :

Հարցմանն Յո՞, Պատասխանի, այսր, այդր, անդր, ՚ի տուն, ՚ի քաղաքն, ՚ի վեր, ՚ի վայր, և այլն :

Հարցմանն ընդ ո՞ր, Պատասխանի, ընդ այսր, ընդ այնր, ՚ընդ ծով, ընդ ցամաք, ընդ պոնտոսիւ, և այլն :

Հարցմանն Ե՞րբ, պատասխանի, այժմ, արդ, այսօր, երէկ, հերու, ընդ երեկոյս, ընդ առաւօտն, և այլն :

Հարցմանն Որքանո՞յ, Պատասխանի, շատի, սակաւու փոքու, տասանց դենարից, միոյ դեկանի, և այլն :

Հարցմանն Ո՛յրացի, Պատասխանի, հելլենացի, հռոմայեցի, պոնտացի, կապադովկացի, մակեդոնացի, և այլն :

Հարցմանն քանապատի՛կ, Պատասխանի, Երկպատիկ, եռապատիկ, քառապատիկ, հնկապատիկ, բազմապատիկ, և այլն :

Հարցմանն ո՛րքանեակ, Պատասխանի, միակ, երկեակ, եռեակ, քառեակ, հնկեակ, և այլն :

Հարցմանն քանեմենի՛, Պատասխանի, երկեմենի, եռեմենի, քառեմենի, և այլն :

Հարցմանն քանօրեա՛յ, Պատասխանի, մի՛ օրեայ, երկօրեայ, եռօրեայ, քառօրեայ : և այլն :

Հարցմանն քան ամսեայ, Պատասխանի, մի ամսեայ, երկամսեայ : եռամսեայ, քառամսեայ : և այլն :

Հարցմանն քաներորդ, Պատասխանի, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, և այլն :

# ԴԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

## Յաղագս Կիրառութեան անուանց գոյականաց և ածականաց ։

Անուանք գոյականք, կամ ածականք, ոչ երբէք շարակցին ընդ միմեանս ՚ի մէջ արտադրութեան նոյնով հոլովիւ, եթէ ոչ ունիցին ՚ի միջի իւրեանց զշաղկապ իմն, կամ թէ մինն իցէ միւսոյն բացայայտիչ, Շաղկապիւ որգոն, բնութիւն և անձն: բնութեան և անձին : ցբնութիւն և ցանձն : զբնութիւն և զանձն, ՚ի բնութենէ և յանձնէ : բնութեամբ և անձամբ; ըն բնութեան և ընանձին : Ցուրտ և խոնաւ : ցրտոյ և խոնաւոյ : ցցուրտ, և ցխոնաւ : զցուրտ, և զխոնաւ : ՚ի ցրտոյ, և ՚ի խոնաւոյ : ցրտով և խոնաւով : ըն ցրտում և խոնաւում: Ահա աստ բնութիւն և անձն են անուանք գոյականք, իսկ ցուրտն և խոնաւն են անուանք ածականք, որք շարակցին ընդ միմեանս նոյնով հոլովիւ, ՚ի ձեռն շաղկապին : և :

Իսկ մինն միւսոյն բացայայտիչ որգոն, Սիմոն Պետրոս: Սիմոնի Պետրոսի: ցՍիմոն Պետրոս : զՍիմոն Պետրոս: ՚ի Սիմոնէ Պետրոսէ ; Սիմոնիւ Պետրոսիւ : և այլն : Չափաւոր քաղցր : չափաւորի քաղցրի : ցչափաւոր քաղցր : զչափաւոր քաղցր : ՚ի չափաւորէ քաղցրէ : չափաւորիւ քաղցրիւ : ըն չափաւորի քաղցրի, և այլն :

Ահա աստ Սիմոն և Պետրոսն են անուանք գոյականք, իսկ չափաւորն և քաղցրն են անուանք ածականք, որք շարակցեցան ընդ միմեանս նոյնով հոլովիւ գոլով միոյն միւսոյն յայտնիչ

Յառաջելոցս հետևի թէ անուանք գոյականք կամ ածականք կարեցեն շարակցիլ ընդ միմեանս այլով հոլովիւ, թարց շաղկապի, և բացայայտականի նշանակութեան : Որգոն, անձին

զանա

զանազանութի : բնութե սահման : խառն 'ի կարմրոյ : ընդ մեծամեծիւք, նման հրեղինաց : համգոյն վեհագունից : և այլն :

Բայց գիտելի է, զի անուանք այսպիսիք ածականք, կամ գոյականք շարակցեցեալք ընդ միմեանս զանազանիւք հոլովիւք, եթէ հոլովելիք իցեն, հոլովին միայն անուանականքն, որգոն, Ձուկն ծովու ; ձկան ծովու : ցձուկն ծովու : զձուկն ծովու : 'ի ձկանէ ծովու : ձկամբ ծովու : ըն ձկան ծովու : և այլն :

Համգոյն վեհագունից : համգունի : վեհագունից : ցհամգոյն վեհագունից : զհամգոյնն վեհագունից : 'ի համգունէ վեհագունից : համգունիւ վեհագունից : ըն համգունում վեհագունից : և այլն :

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ :

### Յաղագս հոլովառութե անուանց ածականաց :

ԱՆուանք ածականք պահանջօղք զանազանից հոլովից, հետեւին բարուց ներքինոցն բայից յորոց նոքեանք են ծագեցեալք, խնդրելով զնոյնս հոլովս ըստ մեծի մասին զխնդրեցեալս 'ի նոցունց : Օրօրինակ : ածականք այսուքիկ տեղեակ, անտեղեակ, հաւասար, անհաւասար, հանգէտ, անհանգէտ, արժանի, անարժան, պարտական, պարտաւոր, հակառակ, Թշնամի, բարեկամ, հմուտ, անհմուտ, նման, աննման, օգտակար, անօգուտ, վնասակար անվնասակար, պատշաճ, անպատշաճ, պատեհ, անպատեհ, համեմատ, անհամեմատ, շահաւոր, անշահ, բարի, չար, վայելուչ, անվայել, համաձայն, անհամաձայն, պիտանի, անպէտ, հարկաւոր, անհարկաւոր և այլք, բազումք զվերջահոլով տրականն խնդրեն : որգոն տեղեակ գրոց, անտեղեակ գիտութե : հաւասար հրեշտակաց, անհաւասար նմին :

և այլն :

Եւայլն: Քանզի և բայք նոյին յորոց ինքեանք են ածանցեցեալք խնդրեն զնոյն հոլովս, որգոն, տեղեկացաւ գրոց: հաւատա-րեցաւ իմաստնոց: արժանացաւ գովութե̃: Եւ այլն:

Ածականք այսոքիկ, զուրկ, մերկ, դատարկ, թափուր, ունայն, ատելի, պատուելի, հեռացեալ, անպարտ, տար-բեր, տարաձայն, զանազան, անզանազան, օտար, անման, մեկնեցեալ, Եւ այլք բազումք թէ անուանք, և թէ ընդունելու-թիւք եզերեցեալք, 'ի եցեալ, և 'ի լի, խնդրեն զբացառականն, որգոն, զուրկ 'ի շնորհաց, մերկ 'ի զգեստուց, Եւ այլն: Քանզի և բայք նոյին խնդրեն զնոյն հոլովս, որգոն, զրկեցաւ 'ի շնոր-հաց, մերկացաւ 'ի զգեստուց: Եւ այլն:

Ածականք այսոքիկ, փարթամ, հարուստ, ճոխ, լի, պա-րարտ, գեղեցիկ, մե̃, պինդ, աղքատ, տկար, հզօր, զուարթ, ուրախ, տրտում, տգեղ, սուր, բութ, առողջ, արթուն, անարատ, ամբիծ, մաքուր, գարշ, վատթար, Եւ այլք բա-զումք խնդրեն զգործիականն, որգոն, փարթամ ընչիւք: հա-րուստ ապրանօք, ճոխ իմաստութե̃ և այլն: Քանզի և բայք նոյին խնդրեն զնոյն հոլովս, որգոն, փարթամանամ ընչիւք: հարստանամ ապրանօք: Եւ այլն:

Բացառոցին սակայն 'ի գրեցելոյ յայսմանէ կանոնէ ածա-կանք բղխեցեալք 'ի բայից ներգործականաց, որգոն, արարիչ հրեշտակաց: պահապանք աշխարհի: ատեցող սրտից: սի-րողք արարչին: ատիչք չարաց: խնամօղք մեղաւորաց, Եւ այլք բազումք թէ ընդունելութիւք, Եւ թէ ածանցականք, որք ամե-նեքեան խնդրեն զսեռականն, թէ և բայք նոյին խնդրիցեն զհայցականն, որգոն ո՞ արար զհրեշտակս: ո՞ եստեղծ առա-ձին զսիրտս նց̃ Եւ այլն:

Բայց առ 'ի դիւրապէս ճանաչել զբնաւս ածականս, և զխնդիրս նոցին, 'իմա, զի կրկին է տեսակ ածականաց, Ջու-

քինն է այնոցիկ, որք ոչ միայն բնականապէս, այլև ըստ հաճութե՛ բանաստեղծից են ածականք, որպիսիք են, արդար, բարի, իմաստուն, ագէտ, անկար, քաղցր, դառն, ալխաակ, կարմիր, և այլք սոյին նմանք: Այլև համայնք ընդունելութիւք, որպիսիք են, ծնօղ, փրկօղ, բնակեալ, նստեալ, գալոց, բերելոց, ընդունելի ատելի: և այլն: Իսկ և դերանուանք ստացականք, և ածանցականք, որպիսիք են, իմ, քո, իւր, մեր, ձեր, իմային, քոյին, իւրային, մերային, ձերային: և այլք:

Իսկ երկրորդ տեսակն է այնոցիկ, որք թէպէտ բնականապէս են ածականք, բայց ըստ ներողութե՛ քերականաց ոչ, որպիսիք են, Մանկերիչ, Թափիչ, հիւսն, կարվակ, ծառայ, տէր, աշակերտ, վարդապետ, հայր, որդի, ստացաւոր, պահապան, դռնապան, ճգնաւոր, մարտիրոս, կոյս, փեսայ, հարսն, և այլք գոնեայ անհունք, թէ նախադաղափարք, և թէ ածանցականք:

Արդ ՚ի կիրարկանելով զերկոսին զայսոսիկ տեսակս ածականաց, գտանեմք ՚ի նոսա: Զայլս որք խնդրեն զսեռականն, որպիսիք են ստեղծօղ, փրկիչ, ստացաւոր, պահապան, և այլք սոյին նմանք, որգոն, ստեղծօղ մարդկան, փրկիչ աշխարհի: և այլն:

Զայլս որք խնդրեն զնախդրիւ տրականն, որպիսիք են, ամբարձեցեալ, իջեալ, ելեալ, վերացեալ, մերձեցեալ, դիմօղ, ճեպօղ, եկօղ, և այլք սոյին նմանք, որգոն, ամբարձեցեալն յերկինս, իջեալն ՚ի դժոխս, ելեալն յօդս, վերացեալն յամպս, մերձեցեալն ՚ի տուն, և այլն:

Զայլս որք խնդրեն զպատմականն, որպիսիք են, ճառեցեալ, գոհացօղ, ընձեռօղ, պատմօղ, տրտնջօղ, և այլք սոյին նմանք, որգոն, ճառեցեալն զմեզ, գոհացօղն զայս, ընձեռօղն զգիտութեց, և այլն:

Զայլս

Զայլս որք խնդրեն զպարառականն, որպիսիքեն շրջօղ, ծիծաղօղ, փարեալ, անցեալ, պանծացեալ, և այլք սոցին նմանք, որգոն, շրջօղն զաշխարհաւ, ծիծաղօղն զգլորմամբ : և այլն :

Զայլս որք խնդրեն զներգոյականն, որպիսիքեն, բնակօղ, նստօղ, բազմօղ, զետեղեալ, օթեալ, և այլք սոցին նմանք, որգոն, բնակօղն 'ի տան : նստօղն յաթոռի : զետեղեցեալն 'ի բարձունս : և այլն :

## ԴՐՈՒԱԿ ԵՕԹՆԵՐՈՐԴ,
### Յաղագս հոլովառութե՟ բաղդատականաց և գերադրականաց :

Բաղդատականաց երկու են տեսակք : Ուի ոմանք 'ի նոյանէ ասին բաղդատականք ներգործութե՟, որպիսիքեն, պայծառագոյն, հզօրագոյն, իմաստնագոյն, գեղեցկագոյն, ջերմագոյն, չարագոյն, և այլք նմանապէս եղերեցեալք :

Իսկ այլք ասին բաղդատականք զօրութե՟, որպիսիք են, պարարտ, հզօր, իմաստուն, գեղեցիկ, պայծառ, առաւել; նուազ, պակաս, մեծ, փոքր, լաւ, բարի, վատ, չար, հեզ, գուող, ցածուն, հպարտ, խոնարհ, հնազանդ, բիրտ, սուղ, հասու, սուր, ուշիմ, առաքինի, վատթար, ահեղ, սաստիկ, սաստկագին, կարօղ, մտացի, դաժան, խիստ, անմիտ, աշխատաւոր, ագահ, չարասէր, ծոյլ, բղջախոհ, մոլախառ և այլք բազումք :

Արդ այսոքիկ բաղդատականք ամենեքեան, երբեմն խնդրեն զհայցականն հանդերձ նախադրութե՟ն քան, որգոն, պարարտագոյն քան զխոզս : հզօրագոյն քան զառիւծս : իմաստ

նագոյն քան զորդիս լուսոյ։ գեղեցկագոյն ք̄ զլուսինն։ ջերմագոյն քան զհուր։ չարագոյն քան զդեւս։ և այլն։

Այսպէսեւս, հզօր քան զառիւծս։ առաւել քան զմարգարէս։ պայծառ քան զարեգակն։ պակաս քան զանհաւատս։ փոքր քան զհրեշտակս։ հատու քան զա̄մ սուր երկսայրի։ խորագէտ քան զօձս։ միամիտ քան զաղաւնի։ դաժան քան զվագերս։ և այլն։

Իսկ երբեմն խնդրեն զբացառականն, որգոն, պարարտագոյնն ՚ի նոցունց։ հզօրագոյնն յառիւծուց։ իմաստնագոյնն ՚ի նոցանէ։ չարագոյնն ՚ի դիւաց։

Այսպէս, հզօրն ՚ի նոցանէ։ իմաստունն ՚ի մարդկանէ։ կա-օղն յերկնաւորաց, և այլն։

Գերադրականք երբեմն խնդրեն զսեռականն, որգոն պարարտագունեղն նոցին։ հզօրագունեղն առիւծուց։ իմաստնագունեղն փիլիսոփայից։ պայծառագունեղն աստեղաց։ չարագունեղն դիւաց, և այլն։

Իսկ երբեմն խնդրեն զներգոյականն, որգոն, պարարտագունեղն ՚ի նոսին։ հզօրագունեղն ՚ի յառիւծս, կամ ՚ի մէջ առիւծուց։ իմաստնագունեղն ՚ի փիլիսոփայս, կամ ՚ի մէջ փիլիսոփայից։ պայծառագունեղն յաստեղս, կամ ՚ի մէջ աստեղա- չարագունեղն ՚ի դեւս, կամ ՚ի մէջ դիւաց։ և այլն։

ՊՐԱԿ

# ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ,

## Յաղագս Կիրառութեան բայից որք պահանջեն զմի միայն հոլով:

Բայք այսոքիկ, եմ, լինիմ, եղանիմ, մնամ, արտակայանամ, յերկուստեք խնդրեն զանուանականն, որգոն : Ես եմ տ՟ր ա՟ծ քո: Ես լինիմ Թագաւոր : դու եղանիս հզօր : նա արտակայացաւ քաջ հովիւ: եւ մնամ տկար, դու մնաս առողջ:

Բայք այսոքիկ, նեղանամ, դժուարանամ, բարկանամ, վշտանամ, աշակերտանամ, ընդդիմանամ, երկրպագեմ, Թագաւորեմ, ժամանեմ, կարօտիմ, իշխեմ, ծառայեմ, մեղանչեմ, համբերեմ, ողորմիմ, ներեմ, հակառակիմ, ակնունիմ, հաճոյանամ, հետեւիմ, հանդիպիմ, նմանիմ, հանդիտանամ, անսամ, վնասեմ, տիրեմ, ցանկամ, տռփամ, ըղձամ, փափաքիմ, օգնեմ, ըմբերեմ, հնազանդիմ, հպատակիմ; հաւատամ, սպասեմ, խոնարհիմ, հաւասարիմ, տեղեկանամ, արժանանամ, նախատեմ, սպառնամ, հաւանիմ, եւ այլք բազումք խնդրեն զվերջահոլով տրականն, որգոն, նեղանամ քեզ, դժուարանամ նմա : բարկանամ ձեզ ; վշտանամ նց՟ : եւ այլն :

Բայք այսոքիկ անկանիմ, աղաղակեմ, գնամ, դառնամ, ճջանեմ, ելանեմ, ընկղմիմ, Թռչիմ, խնայեմ, անխայեմ, կարդամ, հայիմ, նայիմ, մտանեմ, յենում, նկատեմ, սլանամ, վերանամ, տեղամ, ընԹանամ, մերձենամ, մատչիմ, համաձայնիմ, միաբանիմ, ձայնակցիմ, մասնակցիմ, հաղորդակցիմ, վիճաբանեմ, մարտնչիմ, ամուսնանամ, եղբայրանամ, ընկերանամ, հաշտիմ, յուսամ, ապաւինիմ, հաւատամ, բարձրանամ, ճեպեմ, փուԹամ, երԹամ, սուզիմ,

աննարկեմ, շարժանամ, հակառակիմ, հակաճառեմ ; Եւ այլք բազումք խնդրեն զնախդրիւ տրականն, որգոն անկանիմ յերկիր, աղաղակեմ առ ած, առաքեմ առ քեզ, գնամ 'ի տուն, դառնամ 'ի քաղաքն, եւ այլն :

Բայց այսոքիկ սիրեմ, լուանամ, գրեմ, պարսաւեմ, վաճեմ, գովեմ, արածեմ, արհամարհեմ, խոտեմ, տեսանեմ, մերձեմ, հնձեմ, ընդունիմ, առնեմ, ծնանիմ, խոստովանիմ, դաւանիմ, հաւատամ, կեցուցանեմ, հարեմ, գլորեմ, միշ[illegible]մ, պատուեմ, զգենում, թողում, մաքրեմ, սրբեմ, զըտեմ, ատեմ, սպանանեմ, բանամ, գոհաբանեմ, կատարեմ, սահմանեմ, ճանաչեմ, օրհնեմ, բարեբանեմ, փառաւորեմ, շինեմ, քակեմ, ուտեմ, ծամեմ, կլանեմ, ընթեռնում, շահեմ, Եւ այլք բազումք թէ ներգործականք, եւ թէ հասարակք զհայցականն խնդրեն, որգոն, սիրեմ զքեզ, լուանամ զձեռս իմ, գրեմ զտրակն, պարսաւեմ զբանդ ; եւ այլն:

Բայց այսոքիկ, զզուիմ, տաղտկանամ, մոլորիմ, հեստեմ, արտուղեմ, յառնեմ, նուաղիմ, նուաղիմ, պատկառիմ, ձանձրանամ, հրաժարիմ, խաւարիմ, բուսանիմ, դողամ; զարթնում, փաղչիմ, թաքչիմ, երկնչիմ, զարհուրիմ, ապստամբիմ, հեռանամ, դադարիմ, դարշիմ, խոտորիմ. պակասիմ, մեկուսանամ, սարտնում, արբիմ, բաղկանամ, առողջանամ, զըջամ, եւ այլք բազումք, եւ մանաւանդ կրաւորականք ամենեքեան որպիսիքեն, ազատիմ, զրկիմ, սիրիմ, լուանիմ, լնանիմ, խնդրեն զբացառականն, որգոն, զզուիմ, 'ի մեղաց, տաղտկանամ 'ի չարեաց, մոլորիմ 'ի ճանապարհէ, հեստեմ 'ի շաւղէ անիրաւաց : եւ այլն :

Բայց այսոքիկ, զօրանամ, բազմանամ, մեծանամ, լիանամ, փարթամանամ, աճիմ, զարդանամ, ճոխանամ, ծանրանամ, զբաղիմ, տկարանամ, առողջանամ, զարդարիմ, պայ

ծառա_

ծառայնամ, գեղեցկանամ, տարփայլիմ, տոչորիմ, փղձկիմ, պսպղիմ, զուարճանամ, բերկրիմ, սնանիմ, աղքատանամ, չաստանամ, յագիմ, զովանիմ, հրճուիմ, պարարտանամ, իմաստնանամ, և այլք բազումք խնդրեն զգործիականն, որպէս, զօրանամ հանճարով, բազմացաւ Թուով, մեծացաւ հասակաւ, և այլն :

Բայց այսոքիկ, չարաբանեմ, անբաստանեմ, զբուռնարկանեմ, զանցառնեմ, գոհանամ, շնորհակալ լինիմ, խօսիմ, պատմեմ, տրտնջեմ, գանկատիմ, խորհիմ, լսեմ, ամփոյթ լինիմ, ընձեռեմ, խոստանկանեմ, և այլք բազումք խնդրեն զպատմականն, որպէս, չարաբանէին զնմանէ, զանցառնեմ զնմանէ, զբուռնէարկ զպխտութեոյ և այլն :

Բայց այսոքիկ շրջիմ պարառնեմ, անցանիմ, պատեմ, գերազանցեմ, ծփծաղիմ, փարիմ, խանդաղատիմ, պարպեմ, շրջապատեմ, խայտամ, և այլք բազումք խնդրեն զպարառականն, որպէս, շրջիմ զաշխարհաւ, պարառնեմք զձեօք, անցանեմ զհեւսխով, և այլն :

Բայց այսոքիկ, բնակիմ, նստիմ, օթեմ, օթևանիմ, բազմիմ, կամ, զտեղի առնում, մնամ, կայանամ, հանգչիմ, ննջեմ, քնիմ, գոմ, յամեմ, և այլք բազումք խնդրեն զներգոյականն, որպէս, բնակիմ ՚ի տան, նստիմ ՚ի խենենկի, և այլն :

ԳԼՈՒԽ

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ.

### Յաղագս Կիրառութեան բայից խնդրողաց զբազումս հոլովս:

Բայից ոմանք խնդրեն զսեռականն զկնի հայցականին, և են այսոքիկ, գնեմ, վաճառեմ, համարիմ, վարկեմ, վարկանիմ, արժեցուցանեմ, դատեմ, ենթադատեմ, սակարկեմ, և այլք, որգոն, գնեաց զագարակն հազարից դահեկանաց: վաճառեաց զշապիկն երից լումայից: և այլն:

Բայից ոմանք խնդրեն զտրականն վերջահոլով զկնի հայցականին, և են այսոքիկ, տամ, աւանդեմ, բաշխեմ, ընծայեմ, ծանուցանեմ, խոստանամ, պատուիրեմ, նախադասեմ, ստորադասեմ, հրամայեմ, մատուցանեմ, քարոզեմ, ցուցանեմ, հաւաստեմ, ընձեռեմ, յիշեցուցանեմ, ուխտեմ, պատրաստեմ, երևեցուցանեմ, նմանեցուցանեմ, համեմատեմ, հաւասարեմ, արժանացուցանեմ, յայտնեմ, յանձնեմ, մեկնեմ, ստորասեմ, պատարագեմ, հատուցանեմ, հարցեմ, մատնեմ, ուսուցանեմ, և այլք, որգոն: տամ զայս քեզ, աւանդեմ զայս նմա, բաշխեմ զինչս իմ աղքատաց: և այլն:

Բայից ոմանք խնդրեն զնախդրիւ տրականն զկնի հայցականին, և են այսոքիկ, յղեմ, արկանեմ, առաքեմ, համբառնամ, դարձուցանեմ, ընկենում, ժողովեմ, մուծանեմ, հեղում, վերաբերեմ, վերացուցանեմ, ուղարկեմ, թողուցանեմ, իջուցանեմ, խոնարհեցուցանեմ, գումարեմ, և այլք, որգոն, յղեմ զայս առ քեզ, առաքեմ զաղօթս իմ առ Ած: համբառնամ զաչս իմ ՚ի բարձունս, և այլն:

Բայից ոմանք խնդրեն զբացառականն զկնի հայցականին,

և են այսոքիկ, ազատեմ, արձակեմ, խնդրեմ, հայցեմ, հեռացուցանեմ, մերժեմ, Թագուցանեմ, գաղեմ, պահանջեմ, հանեմ, լսեմ, մաղթեմ, զարթուցանեմ, դատարկեմ, առնում, յափշտակեմ, կեղեքեմ, բղխեմ, արտաբերեմ, ելուզանեմ, անջատեմ, բաժանեմ, տարբերեմ, արտաքսեմ, հալածեմ, ժտեմ, փրկեմ, սրբեմ, մաքրեմ, քարշեմ, արտահանեմ, և այլք, որգոն, ազատեմ զքեզ 'ի տանջանաց, արձակեմ զքեզ 'ի կապանաց, և այլն:

Բայց ոմանք, խնդրեն զպատմականն զկնի հայցականին և են այսոքիկ, ճառեմ, ոգեմ, պատմեմ, ասեմ, խորհիմ, լսեմ, հարցանեմ, տեղեկանամ, ուսանեմ, խօսիմ, համբաւեմ, հրատարակեմ, հռչակեմ, չարախօսեմ: և այլն, որգոն ճառեմ զայս զքէն: ոգեմ զայս զնմանէ: և այլն:

Բայց ոմանք խնդրեն զգործիականն զկնի հայցականին, և են այսոքիկ, այրեմ, կիզեմ, արբեցուցանեմ, կնքեմ, դրոշմեմ, մխիթարեմ, սփոփեմ, կտրեմ, հատանեմ, յաղեցուցանեմ, զովացուցանեմ, ապականեմ, կապեմ, պնդեմ, զարդարեմ, պսակեմ, յարդարեմ, պճնեմ, կերակրեմ, վշտացուցանեմ, լնում, փարթամացուցանեմ, ճոխացուցանեմ, մեծուցանեմ, զարդացուցանեմ, փակեմ, խցեմ, խնում, ջեռուցանեմ, ցրտացուցանեմ, շօշափեմ, ծամեմ, և այլք, որգոն, այրեմ զայս հրով, կիզեմ բոցով, արբեցուցանեմ զքեզ գինեաւ, կնքեմ զքեզ նշանաւ սրբոյ խաչին: և այլն:

Բայց ոմանք խնդրեն զպարառականն զկնի հայցականին; և են այսոքիկ, շրջեցուցանեմ, ծիծաղեցուցանեմ, խանդաղատեցուցանեմ, պատեմ, շրջապատեմ, և այլք որգոն շրջեցուցանեմ զքեզ զերկրաւ, ծիծաղեցուցանեմ զիմաստունս զքև, պատեմ զայս զքև: և այլն:

Բայց ոմանք խնդրեն զներգոյականն զկնի հայցականին,

ւէն այսոքիկ, բնակեցուցանեմ, կացուցանեմ, նստուցանեմ, կայացուցանեմ, յամեցուցանեմ, և այլք, որգոն, բնակեցուցանէ զամուլս ՚ի տան, ևայլն:

Բայց ոմանք խնդրեն զբազում և զզանազանս հոլովս, ւէն այսոքիկ, հաւատամ քեզ, հաւատամ յա̃ծ, հաւատամ զա̃ծ; լսեմ զայս, լսեմ քեզ, լսեմ զքեն, լսեմ ՚ի քէն: Խստամ կանեմ զբանիւդ, խստունկանեմ զնոցունց: և այլք ոմանք:

Բայց ոմանք դիմազուրկք, երբեմն ունելով զբայն աներևոյթ փոխանակ անուանականի, խնդրեն զտրականն վերջահոլով, որգոն, պարտէ մեզ մտանել յայն հանգիստն: հարկէ ձեզ ամենեցուն մեռանիլ, վայելուչէ քեզ ուսանիլն: անպատեհէ նմա խօսիլն: լաւէ ինձ կեալ ՚ի հնազանդութեան, բաւականէ ինձ ապրիլն համեստօրէն: ևայլն:

Իսկ երբեմն ունելով զանուանականն իւրեանց, խնդրեն զնոյն հոլովս, որգոն, քեզ վայելէ օրհնութիւն, պիտոյէ ինձ այս, ամօթէ քեզ այդ: փոյթէ ինձ այս, ևայլն:

Չէնի այսոցիկ գիտելի է, զի երբեմն բայք ոմանք արտաքոյ սովորութեան իւրեանց խնդրեն զհայցականն, որգոն, ըներկիցեն զերկիւղ: ընթանալ զճանապարհն իւր: ևայլն:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ.

### Յաղագս արգելմանց պահանջողութեանց բայից:

Արգելմունք պահանջողութեանց բայից են զանազանք: Չի երբեմն փոխանակ հոլովիցն խնդրեցելոց ՚ի բայից դիմաւորաց դնին բայք աներևոյթք, և խնդրելով զտարբերս հոլովս, կորուսանեն զխնդիր բային, որգոն: Շնորհեա՛ մեզ մտանել յայն հանգիստն: Կամէր մեռնիլ ՚ի ծառայէն իւրմէ: Կարէք ըմպել զբաժակն: ՚Ի Բեթանիայ

երթալ

երթալ յանձն առեր: Զյարութիւն եկիր առնել բարեկամին քում Ղազարու: Եւ այլք բազումք, յորս բնաւս իմանին միայն զօրութիւն խնդրելք բայիցն, որգոն շնորհեա՛ մեզ զմուտ յայն հանգիստն: կամ այնորիկ հանգստեան: Կամէր զմկրտեցումն կամ զմկրտութիւն 'ի ծառայէն իւրմէ: Կարէք զըմպումն բաժակին: Զերթումն 'ի բեթանիայ յանձնառեր: Եկիր 'ի յառումն յարութեան բարեկամին քում Ղազարու: կամ եկիր 'ի յարարումն յարութեան: Եւ այլն:

Եւ երբեմն փոխանակ հոլովիցն խնդրեցելոց 'ի բայից դիմաւորաց, դնին այլք բանք, զորօրինակ, լուր երկին, և ունկն դիր երկիր, զի տէր խօսեցաւ. որդիս ծնայ և բարձրացուցի, նոքա զիս անարգեցին: Աստ արգելանի պահանջեցեալ հոլովս հայցական 'ի բայէն, լուր, և դնի փոխանակ նորին բանս այս: Որդիս ծնայ և բարձրացուցի:

Սոյնպէս 'ի բանի աստ: Եւ նա ամբարձեալ զաչս իւրս առ աշակերտս ասէր. երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Աստ արգելանի պահանջեցեալ հոլովս հայցական 'ի բայէն ասէր, և դնի փոխանակ նորին բանս այս, երանի աղքատաց:

Իսկ երբեմն փոխանակ հոլովիցն պահանջեցելոց 'ի բայից ոչ ինչ դնի, զո̂ր օրինակ: Մի երկնչիր, զի այսուհետև զմարդիկ որսայցես 'ի կեանս: Աստ արգելանի խնդրեցեալ հոլովս բացառական 'ի բայէն Մի երկնչիր, և ոչ ինչ դնի փոխանակ նորին, սակայն իմանի զօրութիւն նոյն հոլովս, որգոն, մի երկնչիր յինէն:

Սոյնպէս 'ի բանի աստ, և եղև յանկարծակի հնչիւն յերկնից իբրև գալստեան սաստկի հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նստէին: Աստ արգելանի խնդրեցեալ հոլովս գործիական 'ի բայէն, ելից, և ոչինչ դնի փոխանակ նորին. իմանի սակայն այսպէս: Եւ ելից ինքեամբ զամենայն տունն: Եւ այլք:

# ԴՐԱԿ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ։

## Յաղագս Մասնկանց խնդրողաց զատորակցական եղանակին բայից։

Մասնկունք որք խնդրեն զատորակցական եղանակի բայից են այսոքիկ, թէ, եթէ, մինչ, զի, զի եթէ, մի՛, յորժամ, թերեւս, գուցէ, գուցէ երբէք, արդեօք, գուցէ արդեօք, մի թէ, մի գուցէ, ապաթէ, իսկ եթէ, թէ ոչ, ապաթէ ոչ։ Եւ այլք։ Ո՛րգոն, որում թէ անսայ ցէք, բարւոք առնէք։ Եթէ եկեալ յանկարծակի գտանիցէ զձեզ 'ի քնոյ։ Մինչ չէ հաւատ խօսեալ իցէ։ Զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի։ Մի՛ ասիցես 'ի սրտի քում; Յորժամ գայցես փառօք։ Թերեւս իցէ այդպէս։ Գուցէ ոչ իցէ ճշմարիտ։ Գուցէ երբէք յափշտակ իցէ։ Գուցէ արդեօք մեռեալ իցէ։ Մի թէ դատաւոր իցես 'ի վ[երայ] մեր։ Ապաթէ ոչ դառնայցէք առնա[...] Իսկ եթէ լուիցէք բանից իմոց։ Թէ ոչ տակաւին չունեալ իցէ։ Արդեօք կարիցէ պատրաստել մեզ կրաց։

Իսկ երբեմն ոմանք 'ի նոցունց խնդրել կարեն եւ զսահմանականն, ո՛րգոն։ Ապաթէ ոչ դառնայք առնա։ Յորժամ գաս փառօք։ Եթէ դու ես քրիստոսն, ասա՛ մեզ համարձակ։ Եւ այլն։

# ԴՐԱԿ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ.

## Յաղագս հոլովառութեն նախադրութեանց:

Նախադրութեանց Ոմանք խնդրեն զսեռականն, և են այսոքիկ, ստորև, ներքոյ, 'ի ներքոյ, իմէջ, 'ի միջոյ, արտաքոյ, 'ի վերոյ, 'ի վերայ, զկնի, յետ, առաջի, վն̄, յաղագս, յաղագաւ, սակս, փոխանակ, ընդաջմէ, 'ի ձախմէ, յայսկոյս, յայնկոյս, զհետ, յետոյ, և այլք: որգոն Ստորև երկրի: ներքոյ անեզական: 'ի ներքոյ տանն: 'ի մէջ քաղաքի: 'ի միջոյ այգոյն: արտաքոյ եկեղեցւոյն: 'ի վերոյ սեմանն: 'ի վերայ երկրի: զկնի ամաց: յետ առաքելոցն: առաջի ա̄յ: վն̄ համբերութե: յաղագս սիրոյ: սակս գեղեցկութե: փոխանակ 'ի սահակայ: ընդաջմէ բարձրելոյն: 'ի ձախմէ արքային: յայսկոյս ծովուն: յայնկոյս յորդանանու: զհետ քո: յետոյ նր̄: Իսկ աղագաւն, խնդրէ միշտ վերջադրիլ, մասանց բանի, որգոն, այցելութե աղագաւ, այնր աղագաւ, տեսանելոյ աղագաւ: և այլն:

Ոմանք խնդրեն զվերջահոլով տրականն, և են այսոքիկ; ընդ, հետ, առընթեր, թարց, առանց, ըստ, յանդիման, հանդէպ: որգոն, ընդ քեզ: հետ քեզ: առ ընթերնմա: թարց ինձ: առանց քեզ: ըստ քեզ: յանդիման նմին: հանդէպ ինձ: և այլն:

Ոմանք խնդրեն զնախադրիւ տրականն, և են այսոքիկ; հուպ, մօտ, մերձ, մինչև, դէպ: որգոն, հուպ 'ի քաղաքն: մօտ 'ի տունն: մինչև ցայգին: դէպ յարևելս:

Ոմանք խնդրեն զհայցականն, և են այսոքիկ, ոպ̄, իբրև, քան, 'ի վերքան, գերքան, առաւելք̄, յառաջքան, յետքան, անդրքան, և անդրքան: որգոն, ոպ̄ զա̄ծ և զփրկիչ: իբրև ըզ լոյս:

լոյս ։ քան զայս ։ ՚ի վերքան զերկինս , վերքան զարեգակն , ա_ ռաւել քան զմարգարէս , յառաջքան զարուսեակ , յետ քան զՄովսէս ։ անդրքան զծովն ովկէանեայ ։ և անդրքան զփքինն ։

Ոմանք խնդրեն զբացառականն , և են այսոքիկ , բաց , զատ , մեկուսի ։ որգոն ; բաց ՚ի քէն զայլ ոք ո՛չ գիտեմք ։ զատ յայսմա_ նէ , մեկուսի ՚ի քաղաքէն , և յեղբարց ։

Ոմանք խնդրեն զգործիականն , և են այսոքիկ , ընդ , հան_ դերձ , առ ։ որգոն , ընդ պոնտացւով պիղատոսիւ , հանդերձ Մովսէսիւ ։ ընդ այսու խորամանկութբ ։ հանդերձ դաւա_ ճանութբ ։ առ ծովեզերբն ։ պարծի առ դատաստանաւն ; և այլք ։

Ոմանք խնդրեն զպարառական , և են այսոքիկ , շուրջ , պարբեր ։ որգոն շուրջ զսեղանով քով , պարբեր կառաքա_ տիւն , պարբեր զարեգակամբն ։

Իսկ յաղագս նախադրութեն ։ Ընդ , գիտելի է , Օի եր_ բեմն խնդրէ զսեռական , ենշանակէ , փոխանակ , կամ , վն որգոն ընդ իմ , և ընդ քոյ ։ այսինքն վ՛ն իմ , և վ՛ն քոյ ։ Է. Թա_ գաւորեաց ընդ նորա ։ այսինքն փոխանակ նր ։ փարելի բա_ բառ ընդ իմ , այսինքն , փոխանակ իմ ։ և այլն ։

Երբեմն խնդրէ զտրականն , ենշանակէ հետ , կամ առ , կամ հանդերձ , որգոն ընդ քեզ , այսինքն ընդ հետ , քեզ ։ ընդ մեզ , այսինքն ընդ հետ մեզ ։ ընդ քեզ է սկիզբն , այսինքն առ քեզ է սկիզբն ։ ընդ սրբոց քոց առաքելոց , այսինքն հետ սրբոց քոց առաքելոց ։ կամ հանդերձ սրբովք քովք առաքելովք ։

